

5162-ահ 1549-ԱԿ

7-30

ՊԵՏՈՎԱՆԹԻԵՐ,

Պ Ղ Ն Զ Ե Ք Ա Վ Ա Գ Ի Ւ :

Յորում են բանք խրառականք և օդակալուք
Խիկարայ իմաստնոց, և այլ բանք ողիտանիք:



՚Ի Պատրիարքութե կոստանդնուպոլիսյ՝ Տեառն Ատեփաննոսի ամենապատիւ և վեհափառ Առքեպիսկոպոսի :

ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ

1834 ՅՈՒԹԱԳԻՒԴ ԱՐՁԿ

՚Ի Տպարանի Պօղոսի արտապետն ապուչեցւոց:

Գրքո պատճենման
Գրառման հայրական
Բայցումենի, 1965 թ. Դայը

2004

5162-սկ



66-76



Պատմութիւն վասն Պղնձէ քաղաքին , որ է
օրինակ աշխարհիւ :

Այս ՚ի պաղտատ քաղաքն Խալի-
ֆայ մի , որում անունն էր Շա-
դումէլեք : Օր մի ՚ի մէյտան իջաւ ,
ժողովեց զեւը մեծամեծքն , ու եհարց
վասողոմնի՝ թէ ո՞րպէս հրաման առնէր
՚ի վերայ դիւացն :

Հառաջ եկն ամիրայն և տսաց ,
հըզօր և մեծ խալիֆայ , կայը մարդ մի
որդի վաճառականի և ասէր՝ թէ ես
գնացի ՚ի սելեկիայ կղզին , և մոլորեցաք
՚ի ծովին քառասուն օր : Եւ ապա ելաք
՚ի լեառն մի բարձր՝ և ամենեին ոչ ճա-
նաչեաք զտեղին . և տեսաք մարդիկք սեք
և այլադէմք . բարեւ ետուն և տարան
զմեղ ՚ի տունո իւրեանց . և կացաք առ-
նոստ երեք օր : Եւ ելեալ գնացին ՚ի
ծովն ՚ի յորս , և տարան զմեղ զիետ
իւրեանց : Շակին զգործին՝ և կալան
շատ ձկներ . և զիետ ձկանց բերին կուժ-

մի արձիձով մատնէ հարած սողոմօնի
մօհրովն : Եւ բացեալ զկուժն՝ ելաւ
սև մուխ ու բարձրացաւ յօդս, և եղե
գիշատեսիլ մարդոյ : Վաղակեաց և ասէ,
սողոմօն սողոմօն որդի դաւթի մարգա-
րէի . մեղայ , այլ չորսծեմ զոր ինչ
գործեցի մինչև ցայժմ : այլ կամ ’ի
հրամանս քո : Օ է գիտաց դևն՝ թէ
դեռևս սողոմօն կենդանի է :

Այնժամ ասէ խալիֆայն , “
Հանգչի սիրտ իմ՝ մինչև տեսանեմ զայն
կուժն , և ապա հաւատամ այդ բանիդ :
Եւ հրամայեաց խալիֆայն տալիպին որդ-
ոյն սէ հալայ՝ թէ գնա առ ամիրմուսէն
առ յարևմտից տէրն . որ երթայք եր-
կուքդ յորոնել մինչև գտանէք զայն
կուժն . և ինձ հաստատուն զըսց ասէք
թէ ինչ կայ ’ի ծովն կամ ’ի ցամաքին :
Եւ ետ խալիֆայն շատ գանձ տալիպին
և պատուական ակունք , տաճիկ ձիանք ,
և աղնիւ ծառայք :

Անտց տալիպն առ ամիրմուսէն . և
ելաւ ամիրմուսէն շատ հեծելովք յն
ականացւոց թագաւորին : Լարդաց թա-
գաւորն ականացւոց զհրաման տալիպին .
և կոչեաց զոր ինչ յն իւր հին մարդ-
կայր , և զշատաշրջիկ վաճառականսն :

Վատան ալեոր մարդ մի , որ գիտէր զծով
և զցամաք , և զանբնակ աշխարհն տես-
եալէր : Եհարց թագաւորն զծերն և
ասէ , սիրելի՝ գիտե՞ն զայն տեղն՝ յորում
սողոմն բարկացաւ դիւացն , զորս ՚ի
պղնձէ կուժն էած ու արձիճով մատ-
նէ հարեաց , և ՚ի ծովն ձգեաց : Ասաց
ալեորն՝ այս գիտեմ : Ասաց թագաւո-
րըն՝ թէ պէտք է որ տանիս զիսալիֆայն
և ամիրայքն յայն տեղն : Ասաց ալեորն՝
յոյս ունիմ առ ած , որ զըարին առաջ-
նորդէ . բայց ձանապարհն մուխաթա-
րայ է և հեռի . քառասուն օր անջուր
պիտի գնան և գտն . և շատ զարմանք
կայ ՚ի ձանապարհին :

Յայնժամ ասաց թագաւորն ցա-
միրմուսէն , այդ գիտուն ծերդ՝ որ յաշ-
խարհիս այլ չկայ , ՚ի քեզ եմ տուեալ :
Եսունը էած ամիրմուսէն՝ և խիլաթեաց
զծերն . և Եհարց ցծերն՝ ինչ պէտք են
՚ի ձանապարհին : Ասաց ծերն՝ հազար
ուղտ աւելի պիտի քան զմեր գրաստն՝
որ ջուր բառնամք և մըտնումք ՚ի պոի
աշխարհն . այլ զչուրն պէտք է որ ապիկի
կժով բառնամք՝ որ չեցամաքի , զի հողմն
սաստիկ է՝ որ կը ցամաքեցնէ զջուրն
՚ի մէջ տկին :

Յայնժամ զուգեցին՝ և ուղերեցան ՚ի ճանապարհ . և գնացին Երկու հազար ձիաւորօքն ՚ի շէն և յանշէն ՚ի ներս . և հասին յանմարդաբնակ աշխարհն, և լմբնցաւ տարի մի : Եւ գիշեր մի ծերն զաստղն նշան էր եղեալ՝ և երթային, և ծածկեաց ամպն զաստղն, և մոլորեցան ՚ի ճանապարհէն : Եհարց ամիրմուսէն ցծերն և ասէ, յո՞ր աշխարհի եմք . ասաց ծերն՝ ոչ գիտեմ: Իսաց ամիրմուսէն, կարեն դառնալ յայն տեղն՝ որ զՃանապարհն կորուսաք . ասաց ծերն՝ ոչ գիտեմ: Յայնժամ շատ լացին, և գնացին յանուն այ մինչև ՚ի կէս օր . և մտան ՚ի դուր աշխարհ մի, և կայր ՚ի մէջ աշխարհին սևագոյն բլուր մի բարձր, և ՚ի հեռուստ որպէս զՃուխ երևէր . և դիմեցին ՚ի նա: Եւ իբրև մօտեցան՝ տեսին, զի գմբէթ էր բարձր և գեղեցիկ . և շէնքն ամէն՝ պատուական ակունք էին, եախուտ և զմբուխտ, և շուրջ զանազան ակամբք զարդարեալ: Իսաց ամիրմուսէն՝ փառք այ, ո՞պ գեղեցիկ շինուածք են: Եւ դուռն գեղեցիկ մարմարինեայ էր . և զուպպէին նստուածքն՝ հազար ըլլոյ քայլք էր . և գմբէթն բարձր՝ արձիմով կապած:

Տեսաւ ամիրմուսէն՝ և զարմացաւ ՚ի
բարձրուեն ղուպպէին։ Եւ էր անվայր
և անմարդաբնակ, և բուն ճչէր ՚ի վերայ
պարսպացն։ Երբ զայն տեսին՝ շատ լացին։
Եւ ասաց ամիրմուսէն՝ թէ զատ ՚ի յայ
ոչ ոք կարէ շինել։ զի փառք և վայել
ըութիւ աշխարհիս սուտ է։ Եւ ՚ի վերայ
նորա գրած էր ողբս այս։

Կարնաց ժամանակ նոցա, իբր երազ
մութն ՚ի գիշերին։ ըսկայ դառնալու
ձարակ, յայս տեղս զոր ՚ի յետ թողին։
Կւաղ թէ կարեմք գիտնալ, թէ բարի
գործով գնացին։ կամ թէ հարուածով
անցին, վա մեղաց որ մէկ չերևին։

Հայնժամ ասաց ամիրմուսէն, ուր
են սոցա տէրքն կամ շինօղքն։ և ուր
են, որ շատ դատեցան, և որպէս ծաղիկ
թարշումեցան և պակասեցան։ Կաց ա-
լեորն, պարտ է քեզ գոհաննալ զայ, որ
փրկեաց զմեզ յայն մուխաթարայէն՝
և հասցց ՚ի յայս վայելու տեղիքս։
Կիտես ամիրայ՝ որ քո ածսիրութիւն-
փրկեաց զմեզ։ Կմ հայրն կասէր՝ թէ
ով որ յայն տեղն մոլորեալէ՝ որ մեք
մոլորեցաք, ոյլոչ են երևեալ Բայց աս-

տի մինչև ՚ի պղնձէ քաղաքն Երեք ամսոյ ճանապարհ է . և զայս աղէքսանդր շինեաց՝ և ընդ այսոր գնայր ՚ի պղնձէ քաղաքն :

Յայնժամասաց ամիրմուսէն՝ յառաջ ՚ի քաղաքս մտնումք և տեսնումք զվայելը թիւն քաղաքիս, և ապա Երթամք . Եւ մտեալ ՚ի քաղաքն՝ տեսաք գեղեցիկ դարպաս մի շինած մեծ և լայնանիստ . և ՚ի դուռն գրած էր նօտը գրով : Իսաց ամիրայն՝ ով կարէ կարդալ զայս գիրս . ասաց ալեւորն՝ Ես Եօթն ազգի գիր գիտեմ : Իսաց ամիրայն՝ կարդա որ տեսնում . և սկսաւ կարդալ զբանս զայս :

Արդըն որ գայ ՚ի յայս տեղիս , թողլայ զմեզ՝ ի՞քն խրատուի . որ մեք ՚ի մեր շատ իրացն , Եմք բաժան ողորմ ու լալի : Եւ քիչ մի յառաջ Երթայք , ու տեսնուք իրք զարմանալի . և փառք այ նա տայ , քանզի նա է միշտ կենդանի : Տեսէք դուք բաղում զարմանք , թէ քանի մարդ հողէ գարձէր . մահըն բաժանեաց զմեզ , կորուսաք զոր ինչունէք : Համարըս տալոց եմք մեք արարշն , զոր ինչ եմք գործէր . այլ վայ անաշառ տտեանն , ուր զահեղ բարբառն է հընչէր : Խողովեցաք գանձս բազումս ,

ու այլոց թողաք գնացաք . ըդք ի՞ն շա-
տին տըւաք , ու զանդէնըն մեք մոռա-
ցաք : Եւ զիետ մեր այն երեկ , զինչ
որ յայս կեանքս գործեցաք . նա թէ
չար արարեալեմք , զամէն գործոց հա-
շիւն տի տամք :

—

Յայնժամ մաին ՚ի կայսրին տեղն և
տեսին զարմանալէ շինուածո՞ւ և ՚ի գետ-
նամէջն սալեր կապած էր , արծաթած
և ոսկէջրած : Եւ գնացին ՚ի մէկ ալ-
դուռն , յորոյ վր գրած էր ողբս այս :
Յանի ադամայ որդիք , ծըներ է
յայս կեանքս ու մեռեր . և քան զանա-
սուն անբան , կենդանեօքս աստէն մո-
լորեր : Այլ որ գիտունք են եղեր , զայս
կեանքս սուտ են համարեր . անդէնն
իւրեանց տուն շիներ , ու վըստահ ՚ի
ներս գնացեր :

—

Աեց ամիրմուսէն՝ և աղիողորմ ե-
լոց և ասաց , որ ունի խելք և միտք և
իմաստութիւն՝ նա կարէ ձանաչել զայս
կեանքս որ ամէն մեծուի ոչ ինչէ : Եւ
կայր ՚ի մէջայնը տեղին գմբեթ մի մեծ

և բարձը , և 'ի բոլորն նորա չորս հար-
եւը գերեզման կայր մարմարոնեայ քա-
րեւ՝ աղդի աղդի գունով . և էր գրած-
'ի վը տապաններուն՝ փորած ու ոսկւով
լցած՝ յունարէն գըով շատ ողբեր . և
գերեզման մի ուրիշ կայր զարդարած՝
յորոյ վերայ գրած էր ողբս այս , զոր
կարդաց ալեւորն :

¶ ւաղթէ քանի կացի , կենդանի
ու վայելեցի . գործոյս ամէնն հաշուի ,
ահա եհաս ժամ՝ որ խընդրի : Քանի
կենդանի էի , նա բազմաց պարգեք բաշ-
խէի . ես զիս անմահ կարծէի , նա եղայ
սակաւ մի փոշի :

Եւ գրած էր՝ թէ այս գերեզմանս հեճուղին է ,
որ 'ի մահուն ժամանակն ասաց 'ի վերայ իւր
անձին ողբս այս :

¶ անի որ յայս կեանքն եկիր , նա
կացեր զամէնն ՚ի յերեր . բերթեր ու
բազում քաղաք , դու զամէնն յայլոց
խլեցեր : Հիմի ես խաւար դարձեր , որ
որդունքն ՚ի քեզ կան ՚ի կեր . դու ես
պատասխան տալու , զոր 'ի յայս կեան-
քըս զըրկեցեր :

¶ այնժամ մտան ՚ի մէկ տլ դուռն ,
և գրած էր այսպէս , ի՞ր մահն երեկ՝
—
IO իմ

իմ զօրքն չկարացին թափել զիս . իմ ան-
տփ մեծութէն՝ ոչ կայր այլ մարդ .
իմ բաժին պատահքս է , ու տանօղքս ,
ու փորօղքս , ու գերեզմանս . և ամէն
մեծութիւնս կորեաւ՝ և այլոց մնաց :
Եւ դեռ իմացայ որ մարմնոյս սէրն կո-
րցս զիս . Երբ իմ անչափ մեծութիւնս
ինձի դէմ չեկաւ , նա այլ մարդ կայ , որ
այս սուտ կենցաղոյս կու հաւատայ :

—
Ճշտան ՚ի մէկալ դուռն , և տե-
սան՝ որ զարմանալի շինուածովք զար-
դարած , և գրած էր ողքս և բանս այս՝
թէ Ովեղքարք՝ ած միայն է անմահ
ու անեղ . մի՛ վստահանայք ՚ի սէր աշ-
խարհիս . զի խաբէութիւն և սուտ է ,
և երազոյ նման :

՚ի իմ սիրելի եղքարք , աչք ՚ի յիս
տուեք զէն էհար . զի շատ ՚ի մէկ տեղ
կեցաք , և եղաք ուրախ հաւասար +
՚ի յայս տեղս իմ խիստ գումար , զի
դժոխքն է մութն ու խաւար . զիս տե-
սէք արէք ձեղ ձար , զէն էհար հաղաք
զէն էհար :

Ճշտգրած էր՝ թէ ով զիս տեսնու ,
թող վսոյ տայ ինձ . զի ես թագաւոր էի

Հզօր և յաղթօղ՝ ի պատերազմի . այժմ
լու է մուրացկան մի քան զիս :

|| Ճըբ ես կենդանի էի , տէր էի հա-
զար քաղաքի . բերթեր ու գաւառ ըս-
դում , անհամար և անթըլւելի : Քսան
հազար ձի ունէի , զօրեղ և զարմանալի .
Երբ ես ՚ի տընէն ելնէի , քըսան հազար
մարդ հեծցնէի : Դնչափ ոսկի ու ար-
ծաթ , ակ և մարդարիտ ունէի . որ պըր-
ճելով լցերէի , ու ապրեցայ հարիւր
տարի : Յանկարծակի մահ անկաւ , ՚ի
յիմ դարպասն և չըմնացաք . ոչ ծեր և
ոչ տղայ ասաց , հանց որ թաղել ոչ կար-
ցաք : Իսյց թէ զմեծն թաղէտք , և
զայլն ՚ի բաց ընկեցաք . այլ այժմ մեք
յցժ յաղթեցաք , ու զայս բաներս առ-
ձեղ գրեցաք :

Որ զմեր խեղճ մահըն լսէք , ու դուք
ձեղի մեղմէն խրատուիք . լսելով հաս-
եալ բարկութին , ՚ի մանկութե ձերում
ապրիք : Իս մեծ թագաւոր էի , հզօր
զօրաւոր և արի . շատ գանձ ու ապրանք
ունէի , որ չունէր մարդ ՚ի վը երկրի :
Օ հոգիս իմանտես արի , ու զընչից շահս
թըլէի . զամենն այժմ այլոց թողի , մէն
ըզպատանքս առի գնացի : Այեւայ ես
որ տէր էի , բարութես զոր դուք տեսա-
նէք : մարդ ու հանց աղուոր վայելք , չէ

Հասեր ու մեք հայրենիք : Ի՞մ դեռ զըս
կէի զայլոք, մինչոր մահն ասաց թէ հե-
րեք . մոխրիս եմ հաւասար եղեք, այ եւ-
բարք իմ դուք մի խաբուեք :

Կ ւ երբ ցաւն զիս նեղեց՝ կոչեցի
զիման զամ և ասի թէ օգնեցէք ինձ .
Թափեցէք զիս 'ի մահուանէ, որ կուբա-
ժանէ զիս 'ի ձեզանէ : Վսացին, թէ
չարկամ ունիս, ասէ որ կռուինք . թէ
չէ 'ի հետ այ հվ կարէ կռուիլ, մահն
առաջի ամենեցուն կայ : Հորժամ որ
զայն լսեցի, նա կայի այ 'ի հրամանքն .
բերելտուի զապրանքն իմ զամ, ու կու-
տեցի որպէս զբլուր մի : Վ ւ ասացի իմ
գանձիս թէ գնեցէք զիս, որ մէկ տարի
մի ալ ապրիմ . նա ասացին, թէ այդ
բանիդ այլ ձար չկայ . նա կացի այ հը-
րամանքն, ու արձակեցի զհոգիս :

Վ ւ աղ մեռած անունս իմ, որ այլ
ոչ բնաւյիշվե բարի . թագաւոր որդի
գաղատայ, որդի շատայ թագաւորի :
Ինչ գանձ ու տապրանք կայր ինձ, զոր
մեղօք էի ժողովեր . չըկարաց ինձ մէկն
օգնել, կամ սակաւ մի ցաւ փարատել:
Հուք զայս կեանքս ու զայն առեք, երբ
մահուն ձարակն է հատեր . չըկայ հո-
ղածին ծնունդ, կենդանի որ զինքն է
պահեր :

¶ Աւ բըքայ մի կայր ՚ի մէջ դարպան,
ու ուկի արծիւ մի դրած ՚ի վերայ
նորա . որ ջուրն ՚ի բերանէն ՚ի վայր կը
թափէր , տակն սալէր կապած , արծա-
թած ու ոսկէջրած : Եւ գրած էր ողբս
և բանս այս՝ թէ Ո՛վ որ տեսնու զայս
վայելսուիս , նա թող փառաւորէ զած :
Վարդ՝ իմացիր զայս կեանքս , և գիտես
որ չէ մնացական . զմահըն մոռացերէք
դուք , ամէնիս է ասողընջական : Օ որ
ինչ ադամայ ՚ի վեր , են ծըներ ամէնն
ու գընան . ջանա որ բարի գործես , որ
անդէնըն չլինիս փոշիման :

Եւ գնացին ՚ի չորրորդ դուռն՝ յորոյ վերայ
գրածէր ողբս այս :

Հիմի եմ ՚ի հողդարձեր , կերակուր
որդանց եմ եղեր . և ՚ի յիմ անհուն բա-
րեացն , դատարկ ւ ՚ի բաց եմ մընացերէ
։ ատ մարդ անարժան ոտօք յիմտունս
եկեալ ժուռ գայր կոխէր . այժմ այլ
ոք յիանէ չլախէր , աղքատաց նման եմ
եղեր : Ո՞ մարդ՝ որ երբ գաս առ մեղ ,
լաց ու զմեր կորուստն որոնէ . մահ մար-
դոյն դիւրաւ հասնի , ըղկեսնք մարդոյն
դիւրաւ կիրոնէ : Ո՞ ինչ մեք կենդանի

Էալք, նըստէաք ընդ ում արժան է . հիմք
ամէնէն ՚ի զատ , որ անանց հուրն ըւ-
մեղ կայրէ :

Եւ գնացին ՚ի հինգերորդ դուռն՝ յորոյ վերոյ
գրած էր շատ խրատ , և ովքս այս :

¶ յս աստընւորիս բարիքն , չէ իսկի
մարդոյ մնացական . մահըն զօրաւոր կու-
գայ , և տանի ՚ի հողւ՞ի զընտան : Որչափ
որ անհոդ լինիս , ու շատ գանձ ունիս
՚ի խաղնան . մահըն գայ քակտէ տանի ,
որ իսկի հետքըն չերևան :

՚ի վեցերորդ դուռն գրած էր ովքս այս :

¶ իմար աղամայ որդիք , որ յաշ-
խարհս էք դուք շրփացեր . տեսէք թէ
քանի մարդիք , յադամայ ՚ի վեր են ան-
ցեր . ՚ի ուք իսկի բնաւ չյշէք , այլ
անբանից պէս էք եղեր . ու անմիխթար
քայլք , ըզմահուն օրն էք մոռացեր :

՚ի յեօթներորդ դուռն գրած . էր ովքս այս :

¶ յս աստընւորիս բարիքն , երազի
ինքըն նման է . հազար վայ նը ասեմ , որ
15 զայն

զայս կեանքըս խիստ կու սիրէ : Երանի
տամ այն մարդոյն , որ անդէնն ըզտուն
կու շինէ . որ երբ այս կենացս ելնէ ,
յայ ինքըն չամաչէ :

՚Ի յութերորդ դուռն գրած էր ողբս այս :

Ասէ ոչ ելրատին մարդիք , թէ մա-
հուն օրըն գալոց է . մոռնան զահագին
տանջանքն , որ ըզբազումս անդ ժողովէ :
Օ ինչ որ աստ գործած լինի , անդ մէ-
կին հազար վըճարէ . ջանա զքեզ ’ի զատ
պահել , ’ի մեղաց ւ’ի չարեաց գործէ :

Տեսէք որ այս նմ շինուածոյս և
գտնձոյս որ ես տէր էի , նստէի յայս
գմբեթս ու վայելէի , և ’ի յայս անու-
շահոտութէս անմահանայի : **Վ**րդ՝ տե-
սէք զայս նմ թագաւորուիս , որ տուն
է եղեր այժմ գազանաց և թըռչնոց .
քանի զայս տեսանէք այլ մի՛ հպարտա-
նայք , և մի՛ գործէք չար , և մի՛ նախան
ձիք ’ի սուտ փառքն : **Հ**իշեցէք զայն՝ որ
համարս տալոց էք առաջի քի . զի ոչ կա-
րէք պատճառել , թէ ոչ գիտացաք :

Վրիք դուք այս տեղս եկէք , ու
տեսէք զիս ’ի մէջ հողին . թողերեմ զա-
մէնն ՚ի բաց , նա համար կուղեն իմ
Վ. 16 գոր

գործին։ Լացեք զամենին պարօնս, որ
տեր էի հաղար Երկրի ։ այսօր յամենէն
զըրկած, ակն ունի հոգիս գեհենի։

Աւ այլ շատ ողորմ բաներ գըած-
էր, այլ թեթևացոց ամիրմուսէն զաշ-
խարհս՝ յիւր աչքէն։ Աւ գնացին յայն
գմբեթն՝ որ քան զծուխ Երեկը, այն-
չափ բարձր էր ու արձրձով կապած։
զայն տեսան և զայլոց վայելութին մո-
ռացան։ Վանզի պատերն ամէն ոսկ-
ւով շինած, ու դոներն ամէն ծխանե-
լիք էր, մեք ոչ կարացաք գըել։ Հայն
գմբեթին մէջն սեղան մի կայր, որ
գեղին ակամք ու ոսկւով և մարգարտով
էր կաղմած, և կայր շուրջ զնովաւ Եր-
կոտասան ակն։ և բոլորն սեղանոյն հար-
իւր թիղ էր։

Եւ գրած էր ՚ի վերայ նորա ողբս և բանս այս-
թէ ՈՌւր են նոքա, որ զուարձանային շուրջ զսե-
ղանովս։

Կատ թագաւորք Ճաշակեալ, ՚ի
սմա այսօր մէկ մի չերեկին։ և այն որ
գալոց է աստ, գնալոց է անհընարին։
Փոխին ցեղ ու ցեղ աւուրքս, օր լինի
ամէն մեռանին։ անտե՛ր թուին զայս սե-
ղանս, ու լարված անուղղին։

Բ

17
ՀԽՍՀ-Արմ. ՀՀ
Ա. Ա. Մաշնիկիան

66-36

Եւ ՚ի միւս կողմն գրած էր ողբս և բանս այս
թէ Այս սեղանս զըմբուխտ թագաւորին է :

Օ լինչ կայ գեղեցիկ շինուած ,
մահըն գայ զամէնն խափանէ . ճարտար
դու մըտիկ արէ, թէ սոցա շինօղքն այժմ
ուր է : ՚Այնպէս արժեցն զաշխարհս ,
ու մըտօք զինքնըդ դու քըննէ . երկնա-
ւորին դու փառք տուր , որ ամէն հոգ-
ոց նա տիրէ : ՚ազար թագաւոր է
կերակրեր ՚ի վը սեղանոյս , ու ամէն թա-
գաւորաց անուանքն գրած է . ու ամե-
նեքեան անցեալ են ՚ի նելքե հողին :

Լաւ իբրև տեսաւ ամիրմուսէն՝ հըս
մայեց մարդոցը՝ թէ գրեցէք զայս բա-
ներս . և մնացին ՚ի յայն գմբեթն երեք
օր : ՚Աւ ապա գնացին երեք աւուր ճա-
նապարհ , և տեսան բարձր բլուր մի ,
ու ՚ի վը բլըին կայր ձիաւոր մի պղնձէ .
և գրած էր ՚ի վերայ ըռմբին՝ թէ կալ
զիս ած և առաջնորդեա ինձ ՚ի ճանա-
պարհն յայն ընդոր դադարի՝ այն է
պղնձէ քաղաքն :

Վրարին ող և գրած էր . և ըլորդե
ցաւ ըռմբին ծայրն ընդ յարեմուտս .
և գնացին ընդ այն , և անցան ընդ դի-
ժար կապան մի , և տեսան բարձր բլուր

մի քարեւ : Եշւ յայն սիւնին ծայրն կայթ
կենդանի մի ՚ի մարդոց ձև , թաղած ՚ի
յայն սիւնն մինչև ՚ի մէջքն . և ունէր
երկու թեք մեծամեծ . ձեռքն որպէս առ-
իւծու էր . մազն որպէս ձիու . աչքն մե-
ծամեծք և կարմիր զէտ զբոց ՚ի վառ . և
կերպարանք նորա որպէս զթութս սագի :
Կոչէր ահագին ձայնիւ և ասէր , փառք
այ անեղին և անմահին բարձրելցն և
միշտ կենդանւցն , որ զայս անտանելի
չարչարանքս ՚ի վը իմ էած : Եշւ իբրև
տեսան , յոյժ զարմացան : Եշւ ասաց ա-
միրմուսէն զողըս զայս ՚ի վը նորա :

(Օ արմանք մեք այսօր տեսաք , չէր
տեսած՝ այլ մարդ հողածին . կենդանի
մի թեաւոր , որ յաչացն հուր փայլէին :
Կերպարանքն որպէս թութս սագի , փառք
ասէր անմահ արարչին . զայս չարչա-
րանքս որ ինձ ետ , չէր կըբէր այլ քաջ
անմարմին :

—
Եշւ գնացին ՚ի մօտ նորա . Եհարց ա-
լւորն և ասաց , ովկ ես դու . կամ ովկ է
եղ զքեզ յայդ սիւնդ : Եմաց՝ թէ
ես այն դեն եմ , որ զիետ սողոմօնի
պատերազմեցայ . իմ անունս տամշեր է .
ես աստ կամ ՚ի չարչարանս հրամանաւ

սողոմօնի , մինչև աստուծոյ հրամանն
հասանէ առիս :

Ասաց ամիրմուսէն , վե է՛ը եդ զքեղ
սողոմօն յայդպիսի չարչարանքն : Վասաց
քաջն , կայր թագաւոր մի աբախլազիղ
անուն , որ ինձ քրոջ որդի էր . և ունէր
երկու կուռք , կանաչ զմբուխտ , ու ես-
խուտ . և ես ըսպասաւոր էի կուոցն :
Եւ մեր թագաւորին բազում հեծել
զօրք կայր , և ոչ ոք կարէր դէմ կենաւ
նմա , և բազում քաջք ՚ի նորա հրամանա
ցըն կախեալէին . և ունէր դուստր մի
անօրինակ զարմանալի պատկերաց տէր :
Աշղարկեց սողոմօն դեսպան առ թէւորն
մեր և ասաց , տհւը զքո դուստրն ինձ
՚ի կնութի . և կոտորեա զկուռքսն քո . և
հաւատա յածն իմ , որ արար զերկինս
և զերկիր : Ուէ զայս առնես՝ եղբայր
լինիս ինձ . ապա թէ ոչ պատրաստեա
զքեղ ՚ի պատերազմ , որ գամ տամ
քեղ բաժին զմահն :

Աւեց մեր թագաւորն և բարկա-
ցաւ . կոչեց զիւը զօքքսն նմ , ու ե-
հարց՝ թէ զինչ տամք պատասխանի սո-
ղոմօնի : Վասցին մեծամեծքն՝ թէ ՚ի
մարմնաւորաց քան զքեղ ոչ կայ մեծ ,
ու ու մեծ ես քան զսողոմօն . բայց մուտ-

Դու առաջի չոճոցն, ու աղաչեան նոցա,
թէ օգնեցէք ինձ. զի սողոմօն գալկամի
՚ի վր մեր առ ՚ի կոտորել զմեզ:

Հայնժամ ես անըան տխմար ու
հպարտ, որ ոչ ճանաչեցի զսողոմօն հզօր
դաւթի որդին՝ հարցի զկուռքսն վասն
այսր բանիս: Եշ նոքա պատասխան ե-
տուն՝ թէ մի երկնչեք ՚ի սողոմօնէ ար-
քայէն, զի կարօղ եմք առնել զգործ սո-
ղոմօնի, և տամք ձեզ զյաղթութի:

Սեց աբտիլազիզ թագաւորն մեր
ու խիստ ուրախացաւ. և զսողոմօնի դես
պանն ծեծեց, ու շատ վատ ասաց սողո-
մօնի. և ասաց՝ թող պատրաստի ՚ի պա-
տերազմ, որ ես եկեալ տամ նը բաժին
զմահն: Գնաց դեսպանն և ասաց սողո-
մօնի զամ. և սողոմօն պատրաստեց զինքն
՚ի պատերազմ. ժողովեց զզօրքն և քաջք
բազումք մարմնաւորք և անմարմինք. հա-
զարք հազարաց և բիւրք բիւրոց օձք և
վիշապք, գազանք և անասունք և թըռ-
չունք. և ուսոյց նոցա զկուռեիլն: Եշ
եկեալ սողոմօն յաշխարհն մեր՝ ուղար-
կեց դեսպան առ թագաւորն մեր, թէ
ահա եկի ՚ի քո աշխարհն. լսէ իմ հըա-
մանացս, Եկ առիս. և կոտորեա զկուռք
սըն, և հաւատա՛ յածն իմ զի ոչ կարեն
դոքա պահել զքեզ ՚ի ձեռաց իմոց:

սեց մեր թագաւորն՝ ու կալաւ
զդեսպանն սողոմօնի. և զերեսն նը սևա
ցցց, և ուղարկեց առ սողոմօն՝ թէ պատ
րաստ լէր, որ կռուիմք. տեսնումք՝ ո՞ր
ած կարօղէ և յաղթօղ. Գնաց դես-
պանն՝ և ասաց սողոմօնի զամեղեալսն:

Յայնժամ գնաց սողոմօն ՚ի դուր
դաշտ մի. և իմ թղւորն ՚ի դուր լեռ մի:
Ժողովեցան զօրք բազումք անթիւ և
անհամար՝ և քաջք բազում, և յաղողե-
ցաւ կռիւն: Եւ հրամայեց սողոմօն գա-
զանացն՝ որ կէսն ընդաջմէ կային, և
կէսն ՚ի ձախմէ: Եւ թռչնոցն հրամայ-
եց՝ որ բարձրանային ՚ի վերայ ձայթե-
լով, ու կըտըցով ծակէին զերեսս և
զաջս մեր, և չտային բանալ: Դաղանացն
հրամայեց՝ թէ զգրաստնին լափեցէք և
փախստական տրարէք: ()ձիցն և վիշտ-
պացն հրամայեց՝ թէ ՚ի մէջ ոտից նոցա-
մտէք ու պաշարեցէք: Եւ ինքն սողո-
մօն նստած յոսկիակաղմ թախտ օձուն
վրայ, զարդարած աղգի աղգի, հրա-
մայեց՝ որ բարձրացուցին զթախտն, որ
հայէր ՚ի վերայ պատերազմին: Եւ հրա-
մայեց իւր բդէշին՝ որ կայրյիւր աջ
կողմն, և այլ հեծեալք ընդ անմարմնոցն
՚ի ձախմէ կային: Եւ արարին կռիւ ե-

ըեքօր և Երեք գիշեր . և հվ կարէ պատ-
մել զահագին պատերազմն , թէ դուղը-
դումն՝ և թէ զգուռումն :

Աւ քան զամէնն յառաջես յաղթե-
ցի սողոմօնի զօրացն . ու պարծեցայ ,
թէ զսողոմօնի բղեշին ամիրաթ՝ բերեմ
առաջի իմ թագաւորին : Լանչեցի և
խառնեցայ և զօրքմն ասելով՝ թէ զայլ
ոք չուզեմ , բայց զքեղ ամիրաթ . եկ զի
տեսցուք զմիմեանս : Եւ նա ևս գոչ-
եաց ահեղագոչ ձայնիւ . և ինձ այնպէս
թուեց՝ թէ Երկինք պատառեցաւ և Եր-
կիր շարժեցաւ , և անկան քարինք ՚ի
վը իմ ՚ի սաստիկ ձայնէ նորա :

Եւ Երբ խառնեցաք ամէնքս իրար ,
թոչունիքն չայցին ՚ի մեզ աչք բանալ .
գաղանիքն ու սողունիքն ափշեցուցին զմեզ
Եւ այնպէս խստացաւ կոիւն՝ որ ոչ հայր
որդւոյ ողորմէր , և ոչ եղբայր եղբօր կա-
րէր օդնել . և բաղումք ՚ի մեր զօրացն
մեռան : Ապա զհետ ամիրաթին վեց ժամ
կոռուցաք , մինչ որ ձանձրացոք Երկու-
քըս . և ես կամէի՝ որ բաժանէի յա-
միրաթէն : Տեսաւ սողոմօն զիմ դառ-
նալն ՚ի յետ , հրամայեց՝ թէ բռնեցէք
զայդ անհաւատդ : Փախեայ ես , և ա-
միրաթն անկատ ՚ի վը իմ . ասացի ամի-
րաթին՝ Երդմնեցուցանեմ զքեղ յած-
էն

կենդանին, որ Երբ տանիս զիս առաջի
սողոմօնի արքային, սպանանել չտաս :
Եւ տարաւ զիս առաջի արքային . և սո-
ղոմօն ետ բերել զայս քարէ սիւնս, և
զընդանեաց զիս աստ Երկաթով, ու ար-
ձընով, ու պըղընձով : Եւ հրամայեց ա-
միրաթին՝ որ շալկեց զիս այս քարով,
ու եբեր յայս լեռս՝ որ կու տեսանեք :

Ասաց ալեորն, այն պատերազմն զինչ
եղեւ : Ասաց քաջն, յորժամ ամիրաթն
զիս փախոյց ու բռնեց, իմ թագաւորն
փախեաւ . և սողոմօն յետևանց ընկաւ,
ու զիմ թագաւորն սպան և զգօրքն կո-
տորեաց : Առին զկողզին, ու զկուռքսն
ջարդեցին . և զթագաւորի դուստրն էառ
սողոմօն իւրն ՚ի կնութի . և զերկիրն ա-
միրաթին ՚ի ձեռն ետ . և ինքն դարձաւ
ուրախութե՛ ՚ի տուն իւր :

Ասաց ամիրմուսէն, օրհնեալէ ած-
որ յամ տեղիս փառաբանի անուն նորաւ
Եհարց ցքաջն՝ թէ զայն տեղն գիտես,
որ սողոմօն զդեխն ՚ի պղնձէ կուժն ե-
լեց՝ ու ՚ի ծովն ընկեց : Ասաց քաջն՝ թէ
մօտէ ՚ի կուռկուռեայ լեռն ՚ի ծովն, և
բնակեալեն յայն լերինն մարմնաւոր սկ
մարդիք . և ետ քաջն զնշան լերինն և
զպղնձէ քաղաքին : Եւ ապա գնացին՝

և զկնի բազում աւուր իջան ՚ի դաշտ
մի, որ կայր ծառ և տունկ, և պտուղն
անուշահամ, գետ և աղբերակունք և
ջուր քաղցր: Եւ անտի գնացին քա-
ռասուն օր, և ապա հասին ՚ի պղնձէ
քաղաքն: և էր ող զհուր ՚ի վառ:

Ասաց ալեորն, ահա այս է պղնձէ
քաղաքն: Եւ իջան ՚ի դուռն քաղա-
քին, և ոչ դտին զմուտն: և հեծուցին
երեք մարդ ՚ի յուղան, և շրջեցան ընդ
պարսպաւն երեք օր և երեք գիշեր: և
ոչ դտան այլ տեղ, որ ցած էր քան զայն
տեղն՝ յորում իջեալէին: Եւ պարիս-
տըն ամէն ողորկ սև քար էր. և այնպէս
թուէր ող միաբերդ: Ու աթսուն կան-
դուն բարձրուի էր, և քառասուն թիզ
լայնութին էր պարսպին. և ունէր քսան
և եօթը դուռ: ՚ի մէկ դունէն ՚ի մէկալ
դուռն ոչ երեէր մարդն:

Այնժամ էառ ամիրմուսէն ընդ
իւր զտալիան ու զալւորն, և գնացին ՚ի
բարձր լեռ մի, որ մօտ էր քաղաքին:
Հայեցան ՚ի վերայ քաղաքին ու ասացին՝
թէ ոչ եմք տեսեալ այսպիսի շինուածք
՚ի վերայ երկրի. և բուն ճշէր ՚ի վերայ
պարսպացն: Հետ դարձան և դտին տա-
պանք մարմարիոնեայ դոյն զգոյն, և ՚ի

վերայ նորա գրած էր ողբս այս :

Վ դուք աղամայ որդիք , բերեք
զխելքսն ձեր ՚ի վերայ . մտօք իմացիք
ըզսուտ կեանքս , ու ըզմահու գալն ՚ի
վերայ : Օ ի քակե զամեն շինուածք ,
որ շինէ տէրն ոչ իմանայ . մեզ կայ պա
տասխան տալու , ամենի որ մէկ մի շմայ :

Եւ ՚ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

Վ դուք աղամայ որդիք , չլինի որ
զած մոռանայք . ած իւր բարեացն ա-
ռատ , համբերէ՝ դուք զայն չիմացայք :
Ե. յլ դարձիք ՚ի պիղծ գործոցն , որ ա-
նանց հուրն չիմանայք . մեք ՚ի մեր ան-
հուն բարեացն , քան զպատանքն այլ
իբք չտարաք :

Եւ ՚ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

Վ դուք աղամայ որդիք , թափե-
ցէք զդինին ՚ի ձեզնէ . զմարմինսըդ մի
պարարէք , այլ հոգւոց բաժին պատրաս
տեցէք : Որ երբ ձանապարհ ելանէք ,
նա դողումն ըզձեզ չիպատէ . զդոց և
պատրաստ կոցէք , որ երկան դեն զձեզ
չարգիլէ :

Եւ ՚ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

¶ Ախտացէք քըչեկ քըչեկ, որ գնաց
մեր օրն ՚ի մաղպուն . քանի ՚ի մեղ զար-
մանք թուի, գընալոց եմք ներքեւ հողոյն :
Վրթուն և պատրաստ կացէք, դատողին
առէք պատասխան . վայ այն աղամայ
որդւոյն, որ չունի իսկի ահ մահուան :

Եւ ՚ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

¶ Ե իմ բարերար ած, աղաչեմ որ
զիս խըրատես. ծառայիս քո միտ դընես,
զիս յիմ մեղացն այլ աղատես : Ու տաս
ինձ բարի խըրատ, ու զիմ շատ մեղքըն
ոչ յիշես . դու ես ողորմած ած, ընդ-
մեղաց ըզ մարդ ոչ դատես :

Եւ ՚ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

¶ Ե աղամայ դուք որդիք, զայն
տարաք զինչ աստ որ ունիք . յոյժ ցեղ
ու ցեղ շատ դատիք, աստ թողուք ան-
դէն ոչ տանիք : Կիմեմ սողոմօն ասաց,
զորըն կերայ զորըն խաբեցի . զոր տուի
ձեռօքս աղքատաց, անդէնն ես ամէն
զայն գըտի :

¶ յս բաներս՝ որ գրած էր ՚ի վը
տապաններուն՝ զամէնն գրեցին, և եկին
՚ի տեղիսն, և կապեցին սանդուխտ և
եղին ՚ի պարիսպն։ Ասաց մէկ մարդ մի՝
թէ ես Ելանեմ ՚ի պարիսպն։ Երբ Ելաւ
՚ի պարիսպն՝ ծիծաղեցաւ։ ծափ էզարկ
և ասաց, շապաշ շապաշ, թէ ինչ աղուոր
է քաղաքս։ և անկաւ ՚ի քաղաքն ու մե-
ռաւ։ Այէկ մարդ մի ալ Երէկ՝ ու ասաց
ես Ելանեմ ՚ի պարիսպն։ զի այն մարդն
թէթևախելք էր, չըկարաց զիսելքն ՚ի
վերայ պահէլ։

Ասաց ամիրմուսէն, Խելաց բան չէ՛
որ զիւր ընկերն մեռած տեսանէ և ինքն
չըլախենայ։ Աղա Եօթը մարդ ևս Ելան
՚ի պարիսպն, և ամենէքեան ծիծաղեցան։
ծափ զտրկին ու անկան ՚ի քաղաքն և
մեռան։ Աշաթափեցաւ ամիրմուսէն՝
և Ելաց գառնապէս։ և ասաց զողըս այս
՚ի վերայ պարսպին։

Պարիսպ ես դու աննըման, ընկեցեր
՚ի վայր զամ։ մարդիկդ որ ՚ի քեզ Ելան,
քան զծաղիկ ՚ի վայր թափեցան։ Աչ եմ
ես տէր ամէնի, լինի թէ չարին թըւե-
ցան։ զօրքըս հաւասար կու դողսն,
յայս բանէս քաղաքդ աննըման։

Աարձաւ ու ասաց տալիպն, կամից
Ես գնալ վասն զօրացդ : Իսաց ամիր-
մուսէն . գնալ վասն նոցա , և վա խալի-
ֆային սիրոյն . ապա իմբանիս մի՛ գնար:
Հայնժամ տալիպն զիւր մալին կէսն այ
խոստացաւ . ու երբ ՚ի պարիսպն ելաւ՝
զած յիշեց . ծիծաղեցաւ ու ծափ էղարկ,
անկաւ ՚ի քաղաքն և ուշաթափեցաւ :

Հայնժամ ամիրմուսէն ելաց յցժ ,
զի գիտաց թէ մեռաւ : Տալիպն յուշ
եկաւ , ձայն ետուր՝ թէ մի՛ լար , ես կեն
անի եմ : Տեսաւ տալիպն՝ որ ՚ի մէջ
յ դռան ձիաւոր մի կայր կանգնած ,
դրած էր ՚ի վերայ ձեռին՝ թէ կալ
զորոտիս բևեռն՝ երկոտասան անգամ
ըջեա , և ապա բանսա զուռուդ : Կար-
տաց տալիպն՝ և արար զոր գրած էր ,
ու երաց զուռուն քաղաքին :

Հայնժամ էառ ամիրմուսէն զկէս
զօրքսն , և ՚ի քաղաքն մտաւ . և շուրջ
եկին զքաղաքն : Տեսան , զի մեռած էին
ամենէքեան , ու փակած շուկայքն տմէնէ
Ատլ կապած էր , և ջուրն շուրջ կայր ՚ի
վերայ : Լուտամէն փողոցի գլուխ բըրքայ
մի շինած էր . և ոսկի արծիւ մի դրած
՚ի վերայ . և ջուրն ընդ բերանն ելանէր :
Դաշլկունքն անուշահոտ և գեղեցիկ :

Արդիքն ՚ի գմբեթն նստած է ին .
ոսկին և արծաթն ակունքն ու մարդա-
րիտն կուտած էր . և տէլքն ՚ի մօտն մե-
ռած էին և փըտած . երբ մարդ ձեռն
հասցընէր՝ նա ՚ի հող դառնային : || Վ
որ տեսնոյր՝ նա լայր ու սրտէն զարն
հանէր՝ որ ՚ի միջէն ՚ի դուրս ելանէր :

Հայնժամ ելան անտի ու գնացին
՚ի թագաւորի դարպասն , որ ունէր ե-
րիս դուռս՝ քան զբերդի . մէկն՝ պղըն
ձի , մէկն՝ արծաթի , մէկն՝ ոսկի : Տեսան
զարմանալի շինուածք՝ որ այլ չէր տե-
սեր աչք մարդկան . ու զնորա նմանուին
ոչ կարացին գրել : Եւ ՚ի դուռն դար-
պասին կայր ձիաւոր մի , և ՚ի մօտն բըքայ
մի . և ՚ի հինգ կողմէ ջուր ելանէր ՚ի նմանէ ,
յառաջևն ծաղկնոց էր , ու մրգաբերաց
ծառ և տունկ բաղում : Եւ թէ մարդ
՚ի մէջն մտանէր՝ նա յանուշահոտուէն
գինովնար . և վարդն ըռմբի չափ էր
կանգնէր . և մարդիքն ՚ի շուքն մեռած
էին . Հայնժամ մտան ՚ի յայն գմբե-
թըն , որ քաղաքն ամէն յառջևն էր . և
տսաց ամիրմուսէն զողըս զայս ՚ի վերայ
քաղաքին :

Լա՛ղ քեղ աղուոր քաղաք , որ չը-
կայ ՚ի քեղ կենդանի . ամէնքն են ՚ի հող

Դարձեր , մարդ չըկայ բարեքն է ՚ի լի :
Այս վայ , թէ չէաք տեսեր , սոցա խեղչն
՚ի յայսմ վայրի . վախեմ թէ այսպէս
լինիմք , քան զսոսա ողորմ ու լալի :

—
Ապա մտան ՚ի տէրկեահն ու տեսան
ազգի ազգի սլէհ կապած . ըռումը և
չարխի աղեղ լարած , ու թրեր . և բը-
լատկի ասպարք , ու քէշիկ : Երբ ՚ի
դարպան մտան , տեսան որ մարդիքն
նստած ու մեռած , բայց փըտած չէին .
այլ կաշին սևացեալ էր ՚ի վը : Տեսաւ
ամիրմուսէն ու զարմացաւ , և ասաց
զողըս այս :

—
Ճկայք նոր զարմանք տեսէք , որ ե-
ղաք մեք անմիսիթար . լաւ էր թէ չէաք
տեսեր , այս տեսիլս ՚ի լաց մեղ արար :
Ես փառք արարչին ասեմ , որ ինքն է
ած բարերար . մի թէ յարութե աւու-
րըն , ոչ ձգէ ՚ի հուր ւ՚ի խաւար :

—
Կանացին ՚ի մէկ ալ դուռն՝ ու տե-
սան զքամարն բարձր ու զարմանալի .
Խայտուածքն ամէն կարմիր ակունք էր ,
որ զնմանութիւնն գրել ոչ կարացին :
Եւ ՚ի վը շէմին գրած էր ողբս այս :

¶ յ դրունս գեղեցիկ աղուոր ,
գովելի մեծ արքոյական . չկարէ շինել
այլ քան զայս , զի այս շինուածքս է
աննման : ¶ յ վայ դուք սոցա տըւեք ,
որ չեղաւ նա մեզ բնակարան . դընացաք
և աստ թողաք, զանցաւոր շինուածքս ամ :

¶ ներս մտան ու տեսին՝ զի երեք
սիւն կայր ՚ի մէջ դարպասին . մէկն՝
լուրջ , մէկն՝ կարմիր , մէկն՝ կանաչ . ու
դրմբեթ մի ՚ի վերայ սեանցն ՚ի յոսկւոյ
ծեփած : ՚ըւ ՚ի յայն գմբեթն ոչ քա-
րեղեն շէնք տեսան , և ոչ փայտեղեն .
այլ ամէնն ոսկի և արծաթ էր :

՚ըւ սիւն մի ևս կայր ՚ի մէջ դար-
պասին , որ եռեսուն կանգուն բարձր
էր , և ոսկի գմբեթ մի ՚ի վերայ . և ոսկի
առիւծ մի զուգած էր քան զկենդանի ,
ու լուսատու ակունք դրած յառիւծն ,
որ երբ գիշեր լինէր՝ նա ակունքն լցու
տային քան զարեգակն : ՚ըւ ոսկի տախ
տակ մի դրած էր ՚ի վերայ աթոռոյ մի .
և գոհար ակունք ՚ի նմա մարդարտով
յօրինած : ՚ըւ գեղեցիկ թագուհի մի ՚ի
վերայ աթոռոյն նստած . և խալիչայ մի
փուռ մարդարտով լցած ՚ի ներքե թա-
գուհւոյն : ՚ըւ կայր ՚ի գլուխն թագ մի

գեղեցիկ և աննման յօրինած . որ զձեւն
գրելց չկարացաք : Աւ ՚ի վեզն շարոց
մարդարիտ մեծ քան զաղաւնոյ ձու .
և ՚ի մէջ շարոցին լուսատու ակն մի : Աւ
կայր գլխադիր մի նման սիրամարդի
գոյն զգոյն : Աւ այն թագն որ ՚ի գը-
լուխն էր՝ չորս ակն կայր ՚ի նմա . մէկն՝
կարմիր, մէկն՝ լուրջ, մէկն՝ կանաչ զըմ-
րուխտ, մէկն՝ լուսատու ակն աննման,
որ մարդ չըկարէր հայել . և այնպէս ե-
րևէր թէ թագուհին յայն օրն էր մե-
ռած : Տեսաւ ամիրմուսէն՝ ու խիստ ե-
լաց, և ասաց զողբս զայս ՚ի վերաց թա-
գուհւոյն :

Ինդին աննման գոհար , վայ դու
է՛ր ես անալիտացեր . դու քան կենդանի
մարդոյն, մարմինդ է՛ր հանց հողէ դար-
ձեր : Վան զքո աղւոր աչքէրդ, հողէ
շէն մարդոյ չեմտեսեր . վայ տամես հա-
զար բերան, քո քաղաքին որ չէ վայլէր :

—
Եւ ասլա ասաց զողբս զայս ՚ի թագուհւոյն
բերնէն :

Իշլքա՛րք սիրելիք որ կայք, մի՛ խա-
բիք ՚ի յայսմ աշխարհիս . այս կենացս
մի՛ հաւատայք, ամէնքդ օրինակ առէք

զիս : Օ ինչ որ աղամայ որդիք , ծնա-
նին ամեն գան առիս . դու ջանա բարի
գործել , որ չլինի 'ի հուրն առաքիս :

Յեւը բերնէն :

Անչ մարդ որ այլ զայս տեսնու ,
և այս կենացս նա հաւանի . կամաստէն
իւր տուն շինէ , և անհոգ 'ի ներս բընակի :
Չաւտամթէ բնաւ այն մարդէ , կամ
ունի միտք բանականի . անբան և անա-
սուն է նա , խոտակեր և չորբոտանի :

'ի թագուհոյն բերնէն :

Կերի աղամայ որդի , է՛ը դատիս
զամէն հետ մեղաց . յեշեա զահեղ դա-
տաստանն ու ծեծէ ըզսըրտիկի ու լաց :
Օ իս տես և քեզ ճար արա , և փախիր
դու 'ի մեղաց . թէ չէ աներեկ աւուրն ,
դուն այրիս 'ի հուրն յանանց :

Յեւը բերնէն :

Եմ պատուական դըշեց , որ
դու ես ողորմ ու լալի . այսչափ քո ան-
հուն բարիքդ , չօդնեցին քեզ փոքը 'ի

շատէ : Ա՞եռար դու և'ի հողդարձար,
ու թողէր զամէնն ՚ի յերկըի . մարդն որ
իմաստուն լինի, նա քեզնով ինքն խրատի :

Աբրև լուեցին ասելու՝ ասաց տալի-
պըն ընդամիրմուսէն՝ թէ երբ այսպիսի
մեծ մարդոյ զաւտկ մեռանի , յաչքն
սընդիկ դնեն՝ որ եռայ , ու զմարմինն
զմռեն՝ որ փափուկ մնայ և չփրտի :

Եւ կայր առաջին թագուհւոյն երկու
մարդ կանգնած . մէկն սև, մէկն ձեր-
մակ . ՚ի ձերմակ մարդոյն ձեռն թափած-
թուր , և'ի սև մարդոյն ձեռն լաւ թօ-
փուղմի : Եւ կայր ՚ի գիրկն թագուհւ-
ոյն տախտակ մի՝ ոսկի լաճիվէրտով
գրած բանս այս , զոր կարդաց ալեւորն
այսպէս :

Նունն այ օրհնեալ , որ է ինքն
միշտ կենդանի . իշխան է երկնի և երկ-
ըի , արարիչ ած ամէնի : Հողածին ան-
մահ չլինի , բայց միայն ըստեղծօղն ա-
մէնի . անպէտք է փառքն աշխարհի ,
քան երազ և մութ գիշերի : Ես մեծ
թագուհի էի , դուստրը հըզօր թագա-
ւորի . ունէի իշխանութի , որ մարդ չու-
նէր վը երկըի : Բայց մահն երբ առիս

Եկաւ, զամէն ինչս ես ատեցի. զիս տես-
եալ խրատեցարուք, յամ չարեաց դուք
փախերուք :

Եւ գրած եր խրատս այս :

Ովզ զիս տեսնու, թող իւրն ողորմի
ու խրատուի. տասն և եօթը տարու եի
ես, որ երբ մեռայ : Ո՞ահն ոչ ՚ի թա-
գաւորէն վախէ, և ոչ աղքատին ողորմի :
Ո՞ւրէ ադամ, որ ած իւր ձեռօքն ըս-
տեղծեց . կամ ո՞ւրէ սողոմօն արքայն .
կամ աղեքսանդր թագաւորն , նա որ
տիրեց երեք կողմ աշխարհիս . բայց զայս
քաղաքս ոչ կարաց առնուլ : Ինձ այն
մնաց՝ որ իմ ձեռօքն ետու աղքատաց :
Դուք որ կենդանիքդ եք՝ մի՛ թողուք
զձեր ապրանքն այլոց, ո՞ոկ և մեք թողուք .
այլ ձեր ձեռօքն յայս կեանքս տըւեք,
և զայն կեանքն գնեցէք :

Եւ գրած եր ողըս այս :

Ո՞արդն որ իմաստուն լինի, ՚ի յիւր
գործոցն իսկ ճանաչի . որ զամէն բարի
գործէ, ՚ի չարէն ՚ի զատ նա փախչի :
Օ ի այս մեծութիս է սուտ, և փառքըն
շուտով կու թափի . որպէս թագաւորք
եղեն, որ յառաջ զանունն ասացի :

¶ Աս զմբուխտ թագաւորին դուստրն
էմ. մեր դարպասին բուրգերն ամեն ուկի
և արծաթ էր : Եւ ՚ի մեր սարերն բա-
զում ուկեհանք կային . ակն և մարգա-
րիտն ՚ի մեր ծովէն կու ելանէր : Յառաջ
մեռաւ իմ մայրն , և ես եօթը տարեկան
մնացի . տասը տարուն ՚ի վեր՝ կալայ զա-
թոռ թագաւորութեան ու եօթը տարի
վարեցի , յայնժամ հասաւ ինձ մահ :
Եւ յորժամ կարդաց ալեորն՝ ելաց ա-
միրուսէն , և ասաց զողքս զայս :

¶ Ստընւորիս այս բարեքն , չէ իսկի
մարդոյ մնացական . բայց մարդն իմաս-
տուն լինի , որ ձըրի բաշխէ զամենայն :
Ու արդիք քան զգարնան ծաղիկ , փըթ-
թին անդէն չորանան . երանի հազար
բերան , արդարոցն աւուրը յարութե :
¶ Ըր են թագաւորք երկրի , որ յառաջ
զաշխարհ շինեցին . քանի քաղաք և բեր-
դեր , թողին շինուածովք ու գնացին :
Երբ մահն ՚ի վը եկաւ , յամենէն դա-
տարկ գնացին . և յիւրեանց անհուն գան
ձէն , հետ իւրեանց մէկ վողմի չառին :

—
Եւ գրած էր բանս այս :

¶ Նձրե չեկաւ ՚ի մեր աշխարհս , վայ
չորացան ամէն արդասիք և յորեանք :

Քայնժամ շատ գանձ , և պատուական
ակունս և ազգի ազգի կերպաս ուղար-
կեցաք յամ Երկիր . և նովաւ շուրջ Ե-
կին , և ոչ գտան ցորեան , և դարձան
դատարկ ՚ի տուն : Տանէին զոսկին ընդ-
հացի տային և ոչ գտանէին , ոչ գնով
և ոչ անդին : Երբ ամէնուն յցու կըտ-
րեցաւ՝ որ մարդ որ ուժով էր՝ կերաւ
զանուժն : Պարօնն զծառայն ուտէր .
և աղքատն զմիմեանս : Եւ ապա գիտա-
ցաք՝ թէ բարկուի տեառն է ՚ի վը մեր ,
յանձն արարաք զմեզ ոյ :

Եւ գրած էր խրատս այս :

Կըրատ մի լըսէ յինէն , այ յիմար
իւելօք դու տըխմար . գիտեմ մեռանիւ
պիտի , որ չըկայ յաշխարհիս քեզ ձար :

Չը սիրտդ ողորմած պահէ , զի ունիս
գնալ դու յերկիր օտար . ՚ի պահս և ՚ի
յաղօթս կացիր , զի տապանն է մութն
ու խաւար :

Եւ գրած էր բանս այս :

Պաղաքս Երկնաչափ աստեղօք էր շի-
նած , քան զայս այլ ամուր քաղաք չը-

կայը ՚ի վԾ երկրի : Ո՛վ որ այ հըամա-
նաւն յայս քաղաքս որ մանու՝ ոսկի
և արծաթ առնէ որչափ և պիտի . ապա
զայս որ յիմվԾ կայ՝ մի' առնոյք ձեր այ
սիրոյն համար : Ա. յոչափ ինչս որ յիմ
վերայ է՝ ինձ թողէք . յիմամէն թագա-
ւորութէս զայս առել եմ ինձ բաժին :
Երդմնեցուցանեմ զձեղ ՚ի յած կենդա-
նին . որ չառնէք իմ մարմնոյս վնաս ,
և կամ զիս յիրար տաք ու խոռէք : Ո՛վ
իմ աղաչանացս լսէ՝ ած իւրն ողորմի ,
ապա թէ չէ՝ չըհամբերէ ած անխեղչ
և անօրէն գործոցն : Լսեց ամիրմուսէն
ու շտա ելաց . և ասաց զբանս զայս ՚ի
թագուհւոյն բերնէն :

Դ զքարոզն զոր դու գրեցեր , իմաս
առն ճարտար թագուհի . յայս ժամն
ինձ շատ խեղչ թուեց , քո գանկատն
որ ես լըսեցի : Բայց յայս անչափ գան-
ձերէս , մեղ դատարկ գընաւ չըպիտի .
Քիչ մի մեղ վայելս առնումք , ու թո-
ղումք զայն ում որ դիպի :

Յայնժամ հըամայեց զօրացն , բե-
րէք զինչ որ աման ունիք , և լցէք որ-
չափ և պիտի ակն ու մարգարիտ և ոսկի :

Ասաց տալիս է , ես զայս ինչքս՝ որ ՚ի
վը թագուհւոյս է , կառնում , ու խալի-
ֆային ընծայ կու տանիմ : Ասաց ա-
միրմուսէն , ամ իրօք որ ոչ եմք կուշտ ,
նաև ոչ այնով կշտանամք : Ասաց տա-
լիս ն , ած զոսկին ու զարծաթն ու ըզ-
պարդեքն և զապրանքն՝ կենդանեացն է
տուեր և ոչ մեռելոց : Այլ սորա պա-
տանքն իւրեան բաւական է , զի հողէ
և ՚ի հող դառնալոց է . վա որոյ ես կառ-
նում զայն ակունքն ու տանիմ խալի-
ֆային ընծայ :

Եւ ասաց ամիրմուսէն զայս խրատս :

Անչ մարդ որ ագահ լինի , նա փու-
թով ինքըն կու կորի . հաղար խրատ քեզ
ասեմ , մի առներ այ իմսիրելի : Անպարտ
եմ ՚ի յայդ բանեդ , մի առներ դու բան
խոտելի . չլինի աղօթք թագուհւոյն , որ
՚ի վերայ քո կատարի :

Պահ ասաց ամիրմուսէն՝ թէ իմբա-
նիւս մի առնուր զայն ՚ի նմանէ . ես
անպարտ եմ ՚ի յերդմանէն , որ թագու-
հին էր գրեր : Չլսեց տալիս զխրատն .
այլ գնաց յառաջ՝ և կամեցաւ առնուր
զթագն ՚ի գլխոյ թագուհւոյն : Խսկ այն
սե մարդն որ զթօփուղն ունէր՝ էզարկ
՚ի վը թիկանցն ու ընկէց զտալիս :

ՃԵՐՄԱԿ մարդն որ զթուրն ունէր՝ է-
զարկ զգլուխն ու կտրեց :

Ասկ ամիրմուսէն զարմացեալ փախ-
եաւ ՚ի զատ . և ափսոսաց զտալիպն որ
կորաւ իւր յիմարութեն, ու չլսեց խը-
րատու իւրն : Եւ վն այն ասաց ամիր-
մուսէն զողբս զայս ՚ի վը տալիպին :

(1) Խըրատն զոր առւի ես քեզ, չը-
լսեցիր ՚այ իմ սիրելի . ով որ չողըմիր
դորա , նա նըման է սատանայի : Ո՛վ
շատ գանձ ժողովել կամի , նա յիւրմէն
շուտով կու զըրկի . ինքըն կարօտած-
մընայ , ՚ի գանձէն զոր ինչ ունիցի :

՚այնժամելաւ ամիրմուսէն ՚ի գըմ-
բեթէն ՚ի գուրս : Եւ բարձին ամքեան
որչափ և կարացին՝ զբաղում ակնս և մար
գարիտս և ոսկիս , և զոր ինչ գտինն :
Եւ ելք բարձան ամքեան՝ զմէկ գանձի
տալրանքն ու զոսկին չկարացին ամէնն
բառնալ : Իսացին թէ՝ զինչ որ ՚ի պաղ-
տատ մարդ կայ ու գրաստ՝ զայս ապ-
րանքս ու զոսկիս չկարեն վերջընել
՚ի քաղաքէս :

Եւ փակեցին զուռուռն , ու գնացին
ընդ ծովելելոքն քառասուն օր :

տեսան բարձր բլուր մի , և ՚ի վ՛լը բլըին
սև մարդիկք այլադէմք + Եւ՞ի ներ-
քոյ բլըին քար կայր , իջաւ ամիրմուսէն
անդ . և փախեան սև մարդիքն + շատ
մարդ ՚ի ներքոյ քարին մտան , և այլք ՚ի
լերինն թաքեան : Երբ պահ մի կացին
եկին սև մարդիքն , ու հայէին ՚ի վերայ
նոցա : Գնաց ալեորն՝ ձայնեաց և
հասկացոյց : Եւ սևերն գնացին բերին
զթագաւորն իւրեանց ՚ի մօտ ամիրմու-
սէին : Եւիւրեանց հալաւն սև էր ու
մազեղէն : Եւստան կերան ու խմեցին
և ուրախացան : Ծաց ամիրմուսէն ցա-
լւորն՝ հարցից թագաւորին , թէ մարմ-
նաւոր էք թէ անմարմին : Երբ հար-
ցաւ՝ ասաց թագաւորն , մեք մարմնաւոր
եմք յարաբիայի որդւոցն : Ծաց ամիր-
մուսէն , զենց հաւատք պաշտէք : Ծաց
սև պարոնն՝ թէ երկեցաւ ՚ի յայս ծո-
վուս մարդ լուսեղէն , որ ամ անձն լցու
տայր , և լուսաւորէք զերկին և զերկիր :
Եւ ՚ի մեղ ասաց , լսեցէք պարօն որդիք
և ՚ի միտ առէք , հաւատացէք արարչին
երկինի և երկրի՝ ծովու և ցամաքի , սար-
սեցէք ՚ի նմանէ , զե նա զամ տեսանէ ,
և նա միայն է ած կենդանի . աղօթք մա-
տուցէք նմա հանապազ . և տնւք զողոր-
մութի աղքատաց : Եա խրատեց զմեղ

և ուսոյց մի ած պաշտել . և ինքն վերա-
ցաւ լուսեղէն ամպօք յերկինս : Վւ մեք
յամէն օր եօթը անգամ աղօթք մատու-
ցանեմք , և զած փառաւորեմք , ու գո-
հանամք զնմանէ :

Վւ ասաց ամիրմուսէն զբանս զայս :

* **ՊԵՂ** փառք արարիչ ած , որ յամէն
տեղ օրհնաբանիս . բանիւ դուքարձել
ունիս , զամ երկիր և զերկինս : **Ի. ՅԼԿ**
յադամայ որդւոցս , ՚ի չարեաց զատիլըն
կամիս . զի աներեկի աւուրն , յոր լսեն
նոքա զեկայքն առիս :

—
Լապա եհարց զսե թագաւորն՝
թէ յայն կուժերէն՝ որ սողոմօն բարկա-
ցաւ դիւացն , և ՚ի պղնձէ կուժն էած ,
և ՚ի ծովն ձգեաց , աստ գտանի՞ թէ ոչ :
Վաց սե թագաւորն՝ թէ բազում որ-
սորդաց կարօտ է այդ բանդ , զոր կամիս
տեսանել : **Վ**աց ամիրմուսէն՝ մեք այն
կուժերուն համար եմք եկեր յայսքան
ճանապարհս : **Է**այնժամ հըստայեց սե
թագաւորն որսորդացն , որք բերին
երկոտասան կուժ առաջի ամիրմուսէ-
ին . զոր առեալ բազում ուրախութք
եդ ՚ի մէջ ոսկի սընտառկին իւրոց :

Աւ խիստ պատիւ արար սև թագաւորին . խիլաթեաց և ետուը նմա շատ ուկի , ակունս ու զօրեղ ձիանք : Ը նորհակալ եղեւ սև թագաւորն ու չէառ , ասաց թէ այդ մեղ չպիտի . ոչ ծախեմք և ոչ հեծնումք . մերն այն է որ որս առնումք զմիսն ուտեմք , և զմորթին հագնիմք և զած փառաւորեմք :

Յայնժամ ՚ի յորս ելաւ սև թագաւորն զօրօքն հանդերձ . կէսն ՚ի ծովու , և կէսն ՚ի ցամաքի , որք որսացին ու դիզեցին : Աւ այլ բազում հըեղէն ձի հանին ՚ի ծովէն , և մարդադէմ գաղանս և անսասունս՝ որ ոչ լինի յայլ երկիր , զոր բերեալ ետուն ամիրմուսէին : Այլ ՚ի յամէն ուրբաթի գիշերն դայր ՚ի ծովէն ՚ի դուրս ահեղագոչ ձայն մի բարձր՝ որ ասէր , փառք այ այնմ որ ստեղծեց զերկինս և զերկիր , և փառք իւր մեծութեն՝ որ զամ կենդանի մահկանացու է ստեղծեր , և ինքն միայն է անմահ : Ասեց ամիրմուսէն ու եհարց զսև թագաւորն , ովէ այն՝ որ յամէն ուրբաթ գիշեր կու փառաբանէ զած : Ասաց թագաւորն , մեք ոչ ինչ տեսանեմք՝ բայց զձայնն կու լսեմք :

Եւ ասաց ամիրմուսէն, զօրհնութիւնս զոյս :

Այժ արարիչը քարի, քո անունդ միշտ
փառաբանի . տէր ես դու երկնի և
երկրի, անսկիզբն ւանիմանալի : Ա երին
զօրքն ըղքեզ օրհնեն, անդադար և ան-
լուելի . այլւ երկրածինքս ամէն, խոնար-
հեալ քեզ երկրպագեն :

Այնժամ սև թագաւորն երկու-
լաւ մարդ եղիր զհետ ամիրմուսէին :
Եւ ամիրմուսէն չնորհակալեղւ, և ող-
ջունեցին զիրեարս : Եւ տարան զամիր-
մուսէն կարճ ճանապարհով յերկիրն
ականացւոց :

Այնժամ ամիրմուսէն շատ ոսկի
և տրծաթ, և ակունս պատուականս ու-
ղարկեց թագաւորին : Եւ թագաւորն
չէառ . ասաց թէ զայն կուժերն խնդրեմ
տեսանել : Ապա ամիրմուսէն երկու կուժ
ուղարկեց թագաւորին : Եւ թագաւորն
եթաց զբերան կուժերուն, ելաւ սև
մուխ ու բարձրացաւ յօդն, և եղև ՚ի
կերպարանս գիշատեսիլ մարդկան : Այս
զակեաց և ասէ, սողոմօն սողոմօն որդե
դաւթի մարդարէի, այլ չործեմզոր ենչ
գործեցի, և կամ ՚ի հրամանս քո . զի
գի

գիտաց դեմ թէ դեռ ևս սողոմնն կեն-
դանի է։ Աւ յոյժ զարմացաւ թղթորն։

¶ պատարաւ ամիրմուսէն դալեւորն
տռաջի թագաւորին և ասաց, այ մե-
ծաղօր թագաւոր՝ որ զայս խմաստուն
ծերս զհետ մեղդրիր, սա տարաւ զմեղ
և եքեր։ Աւ եօթն ուղտ բարձած ոս-
կի և արծաթ ետուր ալեւորին ամիրմու-
սէն։ և թագաւորն խիլաթեաց զծերն,
և զամիրմուսէն ևս լաւ պատուեաց, և
զօրեղ ձիանս ետուր և ուղարկեց ՚ի մոըր։
Լուց մնրայ տէրն և ուղարկեց մարդ-
առ ամիրմուսէն, և ետ բերել առաջի
իւր, և յոյժ պատուեաց զնոսա։ ¶ պա-
ելան անտի և գնացին յերկիրն իւր-
եանց, և հասան ՚ի պաղտատ։

¶ Խալբֆայն ՚ի դէմելաւ և մեծ ու-
րախութիւ արարին։ և բաշխեց խալբ-
ֆայն աղքատաց շատ ողորմութիւ վասն
նոցա գալուն, զի երեք տարի էր՝ որ
գնացեալ էին։ և հարց զամիրմուսէն
և ամիրմուսէն սկսաւ խօսիլ կարգաւ
թագաւորին։ Օսողոմնի կռուիլն՝ որ
քաջն ասաց, այլ և զքաղաքին։ և ըշ-
թագուհոյն գիրն կարգացին առաջի
խալբֆային։ ապա շատ ուրախացաւ խա-
լբֆայն ՚ի նց գնալն և ՚ի գալն, և ասաց՝

տալիպն ուր է . և տմիրմուսէն պատմեց
զմահ տալիպին . իբրև լըսեց խալիֆայն՝
ասաց վայ նմա , որ իւր յիմարութեն
կորեաւ . և ասաց զողըս զայս ՚ի վը նը :
Այս իմ տըխմար վեզիր , էք կորար
ընդ վայը ու նանիր . դու զիւրեանքըն
իսկ տեսար , և զգանկատն սացու լսեցիր :
Այս թէ դուն անմահ էիր , որ ըզնորա
թագն խլէիր . մուսէն քեզ խըրատ ե-
տուր , ոչ լըսեցիր զքեզ կորուսիր :

—
Յայնժամհրամայեց խալիֆայն՝ թէ
բերէք զկուժերն , որ տեսնում : Բերին
զկուժերն ու բացին առաջի նը . և ելան
՚ի նոցանէ որպէս զաւ մուխ քան զառա-
ջինն : Եւ երբ տեսաւ զայն խալիֆայն՝
զարմացումն կալաւ զինքն . և ասաց
փառք այ , որ մեծ պատիւ էր այս սո-
ղոմօնի . որ իւր իմաստութեն ՚ի յայս
նեղութիս և ՚ի բանտս էր դրեր զգեքն .
այսպիսի շնորհք հողեղինի չէր տուեր
աճ՝ բայց միայն սողոմօնի : Եւ ապա
հրամայեց որ բերին զամ ոսկին և ար-
ծաթն , զապրանքն և զակունսն և զմար
գարիտն առաջի իւր : Եւ տեսեալ
զնոսա զամենայն՝ շատ ելաց , և ասաց
զողըս զայս :

¶ Հաղ տամ հաղար բերան, քո տիրոջն որումդուն էիլ. • որ յայսչափ անհուն գանձէս, մէկ պատանք մի մէն է տարեր : Երդամ աղաչեմ զած, որ տայինձ աղեկ թապտիր : որ աստ տամ և անդ առնում, ու չժողում այսպէս 'ի յերկիր :

¶ Ճապա հըամայեց՝ զոր ինչ տպրանք և ոսկի բերած էին, զամէնն բաշխեց աղքատաց. և ասաց՝ թող ած զայս իւրեանց տիրոջ հոգւոցն համարի : Վպա բերել ետուր և ինքն զիւր ինչսն և զարծաթն և զոսկին և զապրանքն ամ, և բաշխեց աղքատաց : Անիայն մէկ կտաւմի էառ, և ասաց թէ զթագուհւոյն խըրատն լսեմ. աստ տամ, և անդէնն գտանեմ յաց : Օ որ 'ի զնտանն էր՝ արձակեց, զծառայսն աղատեց, և զհարկն վերցցց յաշխարհէն : Եւ պարոն մի եղիր 'ի յիւր տեղն . և ինքն շինել ետուր սենեակ մի աղօթանաց . և եմուտ յիներս, և եօթն տարի աղօթեաց . և ապտ փոխեցաւ յաշխարհէս :

¶ Ճապամուսէն ալ ետուր զպարօնութին իւր որդւոյն . և բաշխեց զիւր ինչսն և զոսկին և զապրանքն ամ աղքատաց : Հադաւ մաղեղէն և մաշկեղէն,

և գնաց ՚ի լեառն ընակեցաւ ապաշխա-
րութք մինչև ՚ի մահ։ Ի յսպէս փոխե-
ցան ՚ի սուտ և ՚ի փուտ յաշխարհէս, և
հասին ՚ի յաւիտենական կենքն և յերկ-
նային ուրախութին ՚ի քն յն ՚ի տէր
մեր ։ որ է օրհնեալ յաւիտեանս յա-
ւիտենից, ամեն։



Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին։

|| Կը սա մեծ թագաւոր և տէր
արևելեան աշխարհին ։ և էր
իմաստուն և առաքինի։ Անըէր զաղքա-
տութի, և ատէր զայս կեանքս և ասէր՝
փառք այ կենդանւոյն՝ որ կայ և մնայ
յաւիտեան ։ նաև ասէր ընդիւր ան-
ձինն զբանս զայս։

Դարժէ այս կենացս իլքն, այն
կենաց ոչ մեկին մին մաղ ։ յորժամ
բաժանի հոգին, կը մընայ շատ մարդոց
վըռաղ։ Լո՞ր կամիս սիրել զայն իլքն,
որ չգայ զհետ քեզ ՚ի վազ ։ արա դու
ինքնին քեզ զձար, և ժողովէ զբա-
րին անանց։ Ի յնպէս դու բարի գոր-

ծէ , և բաշխէ զինչու աղքատաց • զի
յօրըն մահուն հոգիդ , մարմինդ չառ-
նէ վազ ’ի վազ :

Առ ’ի ժամ աղօթիցն հաներ զամենն
’ի դուրս . և ինքն միայն մնայր , և աղօթս
առնէր ’ի վը ոսկի աթոռոցն . և դարձեալ
ասէր ընդ անձն իւրում զբանս զայս :

Վ ’ի յաղօթից ծոյլ կենար , դիր ու-
ղորդ հետ այ սէր . յիշեա զիւր ահեղ
անունն , որ փրկիս ող ադամն էր : Հ իւր
ձեռքն է երկինք ւերկիր , ըստեղծօղ և
տէր ամենի . ջանա խնդրել դու զբարի ,
որ փրկիս ’ի հըռոցն գեհենի :

Լ մէն օր զիւր սովորական աղօթսն
առնէր . և օր մի հայեցաւ ’ի դարպասն
’ի վեր , և տեսաւ մէկ մի ’ի ձե իւր ուղ-
տապանին . և ասաց՝ քեզ ով հրաման
ետ , որ յայդ տեղն ելէր : Վ սաց այն
մարդն , ես ուղտապան եմ և զուղտերս
կորուսեր եմ , աստ որոնեմ գտանել :

Վ սաց թագաւորն՝ ինչ կանէ ուղտն ’ի
վը դարպասին , յորում կամիս գտանել :

Եւ նա ասաց՝ ապա դու որպէս կամիս
զած գտանել ’ի վը ոսկի աթոռոցդ , և ’ի

վը փետրալից բարձիդ , և ՚ի մարդար տա-
շար գահցու : Այդ աղօթքդ չէ ըն-
դունելի այ . այլ արի , էջ յաթոռուցու ,
և Եկ ՚ի վը մոխրոյն , և այնպէս երկրպա-
գէ այ , որով գտանես զողորմութիւն :
Եւ ապա ասաց ուղտապանն՝ որ ՚ի ձե
մարդոյ երկեցաւ , զբանս զայս :

Երկրպագեան անմահ բանին , թապ-
էցո զերեսդ ՚ի հողին . զի այն ստեղծ-
զքեղ ՚ի բարին , և նման արար իւր
պատկերին : **Օ** այս կեանքըս քանի դու-
սիրես , անձար երթաս ներքե հողին .
մի' անշահ կենօք կենար , մի' փոխել
զոսկին պղնձին :

Ո այս ասաց և անյայտ եղեւ . և
ապա իմացաւ թագաւորն , որ հրեշտակ
էր մարդն այն . և անկաւ զեղջ յիւր
միտքն , և ելաց դառնապէս . և իջաւ յա-
թոռոյն ՚ի գետին , և երկիր եպագ այ :
Եւ թէպէտ ատէր զիւր կեանքն , այլ
աւելի ատեց այնուհետեւ զաշխարհս և
զմեծութիւնն . և ասաց ՚ի վերայ անձին
իւր զբանս զայս :

Պ անամ թէ ես հոգիս սիրեմ ,
մարմինս ինձ միշտ տայ ՚ի խափ . զինչ
որ խցանայ բաղէն , կաքաւքն չան-
կանին ՚ի յափ + կուտեցաւ առիս շատ

մեղք , որպէս անձրև որ գայ տարափ . խոցվերեմ մահու սրով , և եղերեմ զինչ որ շաղափ :

Առ ապա կոչեց զիւր մեծամեծան և զիշխանսն . և եբեր զիւր որդին , և նստոց առաջի նց՝ ՚ի յաթոռն իւր , և նոքա ոչ կամեցան . և նա՝ ուժով և իմաստութեն հաւանեցոց զիշխանսն և զզօրսն : Եւ ինքն գաղտաբար ելեալ ետ զանձն իւր յաղքատութի . և ելաւ յաշխարհէն իւրմէ , և եթող զթագաւորութին վասն սիրոյն այ . և ասաց ընդ իւր անձին զբանս զայս :

Իշեա զարարիչն աճ , տեւր հոգւոյդ առնել պատարադ . ընդ մութն է՛ը կամիս գընալ , երբ աստենս լինի քեզ ճարակ : Ի զմարմինդ քանի սիրես , և զհետ իւրն երթաս կամակ . ընկելք քո գնացին աստի , բնակեցան ՚ի տունն անքանակ : Ես քեզ ամէն օր ասեմ , հասիր շուտ նց դու միակ . թէ չէ եղկելի հոգիդ , առաքի ՚ի հուր ւ՚ի կըրակ :

Ապա գնաց աշխարհէ յաշխարհ , և համ ՚ի պաղտատ . և եմուտ ՚ի քաղաքն

և կամեցաւ մնալ անդ ՚ի կերպարանս
աղքատի մուրալով։ Եւ մարմինն նեղէր
զինքն ՚ի կողմանէ ուտելց և ըմպելց և
ագանելց . զի սովոր էր ՚ի սէր աշխար-
հիս՝ կեցեալ ՚ի տունն արքունի։ Շպա-
իմացաւ հնարք, և երթայր ՚ի շուկայն,
և լինէր սուտ խե։ Եւ մարդիքն ծե-
ծէին զինքն, և տղայքն զհետ երթայրին
և նեղէին . և ինքն վարէր և ասէր ՚ի մէջ
մարդկան դրանս զայս։

|| ՚արդիք մի' անհոգ կենայք, ձեր
մեղաց զաղտըն լըւացէք . ողորմեցէք աղ-
քատաց, և այնով ձեր մեղքըն քաւեցէք։
՚Իարձիք ՚ի մեղաց ձանփէն, և անդէն
ձեզ տուն շինեցէք . մի' թողուք ՚ի կից
նեղէլոց, վեր զմարմինսդ ՚ի կամաց
հանէք։

|| յ յեղէգն հեծնոյր, ՚ի վայր և ՚ի
վեր վաղէր, և ասէր բան զարմանալի։
՚Իսէին մարդիքն որք զհետ երթայրին՝
թէ մարգարիտն ՚ի բերանոյն ՚ի վայր կը
թաքի, և ոչ գիտէ թէ զինչ ասէ .
հազար աւաղ խելօք խումարիս . Եւ
ապա դրին իւր անունն փահլուլ, և նա
եղև ջրկիր՝ և ջուր կըէր ՚ի շուկայն .
և տային իւրեան հաց և փող . այլ նա

զամէնն տայր աղքատաց . և ասէը ըդ-
բանս զայս :

Ղքատաիրութիւն և պահք , և ա-
ղօթքն ընկերք են միմեանց . սիրէ՛ զայս
երեք բարիս , որ փըրկիս ՚ի մեծ տան-
ջանաց : Ա՞ի զմարմինդ ՚ի ձեռքդ առ-
նուր , կը գընայ օրերդ ՚ի ձեռաց . այս
օրերս որ մեք ունիմք , կը հատնի և
կերթայ ՚ի բաց :

—

Հուր մի երթայր ՚ի շուկայն ՚ի
վայր , մէկ մի խլեց զիւր փակեղն ՚ի գըւ-
խոյն՝ և փախեաւ : Եւ գնաց փահլուլն
՚ի հողվարքն , և որոնէր զայն մարդն՝
որ փակեղն էառ փախեաւ : Եւ տեսաւ
մէկ մի և ասաց , ով փահլուլ յայս տեղս
ինչ կանէ այն մարդն , գնա՛ ՚ի շուկայն
որոնէ : Ասաց փահլուլն՝ այ եղբայր ,
ուր երթայ վաղն անագան յայս տեղս
պիտի գայ . և ասաց դբանս զայս :

Ուկ շատ թէ սակաւ զըրկես ,
վայլես զերկիրս խընդալով . ունիս դու
աստի գնալ , և մարմինդ ծածկի հողով :
Դարձիր և բարիս գործէ , գիտ բըժիշէ
և դեղ քեզ շուտառվ . զի յահեղ և մեծ
ատեանն , չըլինիս ահով ամօթով :

Անտելացաւ ընդ քաղաքացւոյն , և
Ճանաչէին զինքն ամէն մարդ . և օր մի
միս ետ սորա մէկ մարդ մի , թէ տար ՚ի
մեր տունն . նա էառ՝ և ՚ի հողվարքն
տարաւ զայն : Եշ դարձաւ եկաւ այն
մարդն ՚ի տուն իւր , և տեսաւ՝ որ ըզ-
միսն չէր բերեր . գնաց գտաւ զփահ-
լուն ՚ի շուկայն՝ և ասաց ուր է միսն
իմ : Ասաց փահլուն , ՚ի քո տունն
տարի . ասաց մարդն այն , արի ցից զիմ
տունն : Ելաւ փահլուն , և էառ զայն
մարդն՝ գնաց ՚ի հողվարքն . և ասաց
այն մարդն , այս է իմ տունն : Ասաց
փահլուն , ահա այս է քո տունն . այն
տունն՝ որ այժմ կը կենաս , այն չէ
մնացական , զի յետոյ յայս տեղն պիտի
գտաս : և ասաց զբանս զայս :

Ա շխարհիս սահմանքն է հանց ,
կեահ կը լրցվե կեահ թերանայ . կը
թեթեցնէ զիւր բեռն , թէ ով շալկել
որ կարենայ : Ունկն մատու դու հիւսա-
նին , որ միշտ շինէ զդագաղնա . մէկըն
գայ մէկըն գընայ , ինքն բնաւ անգործ-
չըմնայ :

Օ արմացաւ այն մարդն ընդ փահ-
լունին խօսքն՝ թէ մեք զդա յիմար գի-
տէ

տէաք , նա մեզ վարդապէտ եղև : Եւ
ունէր սովորութի փահլուլն՝ որ եր-
թայր ՚ի հողվարքն և մնար , և շատ ան-
գամ ննջէր անդ : ()ը մի ՚ի դուրս էր
ելքը խալիֆայն շատ զօրօք՝ դէպ ՚ի հող
վարքն անցանէր , տեսաւ զփահլուլն ,
և ասաց փահլուլն՝ թէ հոտ ի՞նչ կանես :
Եւ ասաց փահլուլն՝ ով տիեզերակալ
խալիֆայ , զայս ամէն մեռեալքս կը
նզովեմ : Եւ ասաց խալիֆայն , էր կը-
նզովես . և ասաց ցնա փահլուլն զբա-
նըս զայս :

Թէ շատ թէ սակաւ զըրկէ մարդ ,
զհետ իւր տանիւ չըկարէ . մարդըն պիտի
հանց ջանայ , որ ՚ի յայն կեանքն չամաչէ :
Որ ասդէն տայ և անդ առնու , աստ զըրկէ
նա անդ վըճարէ . զի յայն կեանքըն ճարակ
չըկայ , որ փողով իւր պարտքն աղատէ :

Օ արմացաւ խալիֆայն՝ և ասաց ,
փառք այ կենդանւոյն՝ որ կայ և մնայ
յաւիտեան . զի խումարն այնչափ խելօք
խօսք կը խօսի : Եւ ասաց թէ այս
մարդս խելօք է , և վս մեղաց զայն առ-
նէ . զի թէ դա խումար էր՝ նա հանց բան
չասէր . և դարձաւ խալիֆայն ՚ի քաղաքն :

Եւ օր մի հեծեալ՝ ի ձի խալիքայն՝
անցանէր դեպ ՚ի հողվարքն , զի ճանա-
պարհն ընդայն էր . և տեսաւ զփահլուն
և ասաց , զինչ առնես ՚ի հողվարքն :
Եւ ասաց փահլուն , բազում աւուրբ
աստ կամ և կը չափեմ զիմ գերեզմանն
և զքցն , նա իսկի քցն աւելի չէ քան
զիմն . դու խալիքայ ես , և ես աղքատ
մուրացիկ եմ . և քո հողն և իմն մէկ չա-
փովէ : Եւ յետոյ ասաց զբանս զայս :

||'Վ մարդ մի զհոգիդ դատեր , և
զմարմինդ առնէր սիրելի . դարձի՛ը ՚ի
մեղաց ճանփիէն , որ չլինիս ողորմու լալիւ
Դանա և բարի գործէ , զի քեվըանըն
քեզ կը նայի . յայս հողոյս դու հանց
գընա , որ հոգիդ հըրցն չլինի :

Եւ ասաց խալիքայն ընդիւր մե-
ծամեծքն , տեսէք՝ ինչ իմաստուն է դո-
րա խօսքն . և համարձակապէս խօսին
զբանս , չէ պարտ որ զդա ՚ի մեղանից
՚ի զատ թողումք . և ապա հրամայեց կո-
չելզնա յիւր դարպանն : Եւ օր մի խա-
լիքայն յաթոռոյն ելեր գնացեր էր , և
գնաց փահլուն նստաւ յաթոռն խալի-
քային : Եւ եկին ճորտերն սկսան ծե-
ծել զնա , և նա ճչեց պինտ : Եսեց խա-

լիֆայն և բարկացաւ ՚ի վր ծառայիցն ,
և ասաց ով փահլուլ՝ է՞ր կը ծեծեն
զքեղ։ Ասաց փահլուլն , ով տիեզերա-
կալ խալիֆայ՝ երբ զիս այս մէկ պահ
նըստելուս համար հանց կը ծեծեն ,
ապա զքեղ զինչ պիտի առնեն դատաս
տանին օրն . և սկսաւ ասել զբանս զայս :

|| արդէք մի՛ ծեծեք դուք զիս , չեմ
ցանկար փառացդ աթոռոյ . զիմըն քա-
կեցի ւելայ , և չունիմ սրտիկ շնելոյ :
Իմ կեանքս յիմ աչտցն ելեր , այլ չու-
նիմ տեղիք խընդալոյ . դըրի զիմ մար-
մինս ՚ի մահ , զի չունիմ հոգի տանջելոյ :
|| մարդ որ փառացդ հասար , տէր
յերկրի եղեր աթոռոյ . դու հանց շը-
փացար ՚ի քեղ , որ չըդնես դու յանցանք
մարդոյ : Ահ ՚ի մահուանէ չունիս , ոչ
ձարես պաշտը գնալոյ . աշխարհիս փառ-
քըն այլոց թողուս , կը լինիս դու ափ
մի հողոյ :

—
|| սեց խալիֆայն զայն իմաստուն
բանս , և հարցանէր շատ բանս փահլու-
լին . և նա հնարիւք տայր զպատասխանին :
Եւ օր մի ալ հարցաւ խալիֆայն ընդ-
փահլուլն և ասէ , փահլուլ ասա ինձ ,

այսօր ինչ առնէ ած : Ասաց փահլուն ,
այդ դիմար հարցմունք է . այսօր համ-
բերեա ինձ , վաղիւն ասեմ : Եւ՝ ի վա-
ղիւն հեծեալ՝ ի սև էշ մի փահլուն գը-
նայր . տեսեալ խալիֆայն ասաց նմա ,
ով փահլուլ ինչ առնէ ած այսօր : Ան-
փահլուն , հրամայէ՛ որ ամէն ծառայքդ
՚ի դուրս ելանեն , և ես տամ զպատաս-
խանին : Եւ հրամայեաց խալիֆայն ծա-
ռայիցն ելանել՝ ի դուրս . և մնաց ինքն
և փահլուն մինակ : Եւ ասաց խալիֆայն ,
ինչ կանէ ած՝ ի յայս ժամս : Ասաց փահ-
լուն , ով խալիֆայ՝ արի պահ մի նիստ
՚ի յիմ էշս , և ես՝ ի քո յաթոռդ նստիմ
և ասեմ քեզ , թէ ինչ առնէ ած : Եւ
հայեցաւ խալիֆայն՝ որ մարդ չէր ե-
րեկը՝ ի բոլորն , ելաւ նստաւ՝ ի յէշն .
և փահլուն՝ ի խալիֆային աթոռն նըս-
տաւ , և ոչ խօսէր : Ասաց խալիֆայն , է՛՛
չես խօսիր , ինչ առնէ ած : Ասաց փահ-
լուն՝ ինչ խօսիմ , չե՞ս գիտէր ինչ առ-
նէ . դու որ խալիֆայ ես՝ ի յէշս իմ
նստոց , ես որ փահլուլ եմ՝ ի քո աթոռդ
նստոցոց : Ահա զայս արար՝ ի ժամնւս
յայսմիկ . և խալիֆայն զարմացաւ , և ոչ
կարէր խօսիլ . և ասաց փահլուն ըզ-
բանս զայս :

¶ Առւ զանքըննին է՞ր քըննես , Երբ
որ միտքըդ իւրեան չհամնի . զանք ովլ
կարէ տեսնուլ , կամ իմանալ զնա մարդ
իւնդանի : Երբ չես քո կենացըդ տէր ,
Ելը մընաս դու յերկուց շընչի . այլտէք
հայրենեացս է նա , որ երկինք ւերկիր
կը տանի :

Հայիծաղեցաւ խալիֆայն և ասաց ,
փառք այ կենդանւոյն և բարձրելոյն յա-
ւիտեան . զի այս ցեղ խես զարմանալի
պատասխան տունէ . բայց թուի ինձ ,
թէ չէ դա խե , այլ խելօք է . և գնաց
փահլուն : Եւ զկնի քանի մի աւուր
հրամայեց խալիֆայն կոչել զնա : Եւ
նա նստաւ յէշ մի , և եկաւ տու խալի-
ֆայն : Հայիծաղեցաւ խալիֆայն և ասաց ,
փառք այ կենդանւոյն և բարձրելոյն յա-
ւիտեան . և ասաց՝ կամիմ հարցանել
քեղ բան մի , և դու զըզորդն ասա :
Եւ նա ասաց՝ հրամայեա խալիֆայ . ա-
սաց խալիֆայն՝ քանի՛ աստղ կոյ յեր-
կինքն : Վսաց փահլուն՝ ես աղէկ գի-
տեմ , զամէնն համբեր եմ զի որչափ ի-
շոյս վերայ մազ կոյ՝ այնչափ աւ աստղ
կոյ յերկինքն . թէ չես հաւատար՝ իջեր
դու համրէ : Եւ իջաւ խալիֆայն յա-
թու

թոռոյն, և սկսաւ համրելզիշոյն մազն *
Ասաց փահլուն, յառաջ զագին համրէ *
Եւ սկսաւ խալիֆայն այնպէս առնել,
և ոչ կարէր: Եւ ապա սկսաւ փահլուն
ասել զբանս զայս :

Դառ որ ըսդիտես այժմ, թէ գլ-
խոյդ մազըն քանի է . էր ինձ թուել
հրամայես, թէ երկնից աստղըն քանի է :
Օ ինչ որ աստ գործել լինի, ամէնին
համար տալոց է . որչափ զըրկէ գանձ
ժողվէ, աստ թողու տանիւ չկարէ :

Վմաշեց խալիֆայն, և եթող զիշոյն
ագին 'ի համրելոյն, և ելաւ նստաւ յա-
թոռն: Եւ ասաց փառք այ՝ որ այսպէս
գիտութ պատուէ զսիրելիս իւր և տայ
զիմաստուի ում որ կամի . որում ոչ ոք
կարէ տալ պատասխան 'ի բանս և 'ի
հարցմունս իւր: Այսպիսի վարուք կե-
ցեալ փահլուն՝ և երանելի կենօք փո-
խեցաւ յանվախճան թագաւորութիւնն
'ի քայ յա ՚ի տէր մեր: Որում վայելէ
փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և
միշտ և յաւիտեանս, ամէն :



Խրատք օդտակարք արարեալ բանաստեղծ թագաւորին՝ որոյ անունն է՝ ‘Սուշըհվան’ :

Աասեն թագ մի ուներ ոսկի և
պատուական ակներով, և շինած-
էր քսան և երկու անկիւնով, և յամեն
անկիւն՝ այս խրատներս գրած էր . և
յորժամելաներ ՚ի դուրս՝ կտրդայր ա-
ռաջի զօրացն, և ասեր թէ ՚ի միտ առեք.
և ապա դներ ՚ի գլուխն զթագն զայն :

Խրատ . Ա

Օ անձնահաճ մարդն յինեն ՚ի զատ
պահեցեք : **Վ**աժանաւորաց յիմ գան-
ձէն բաժին տրվէք : **Բ**անգէտ մարդ-
կանց դէմ՝ անպատեհ խօսք մի՛ խօսիք :
Օ անգըտանելին՝ մի՛ որոնէք : **Դ**ա-
մանակս գործոց ձերոց՝ մի՛ ըշտապիք :
Օ գործն ձեր՝ ժամե՛ ՚ի ժամմի՛ ձգէք :

Խրատ . Բ

՚**Ա**բանին սկիզբն և ՚ի կատարածն
հոյեցէք : **Հ**օր տուն մտանէք՝ յառաջ
զելն իմացէք : **Օ** ամեն բան կամ իր-
62 տաւ՝

տաւ՝ տասը տպրայ չափեցէք, և ապա
կտրեցէք։ Օ փորձածն՝ կրկին մի՛ փոր-
ձէք։ Ի՞նփորձ մարդկանց՝ զլսորհուրդն
ձեր մի՛ յայտնէք։ Օ խոստումն որ ՚ի
ձեղէ՝ մինչև ՚ի ձեր անձն մի՛ խնայէք։
Աակաւ խոստացէք՝ և աւելի կտրեցէք։

Խրատ . Դ

Եղոնտարհութիւն և հեղութիւն ուսարմէք։
Համ ժամ զշշմարտութիւն սիրեցէք։
Օ կարողութեան չափն գիտացէք։ Օ համ-
բերօղ մարդն ճանաչեցէք։ Օ այս կեան
քըս՝ մի օր գիտացէք։ Օ առողջութեան
հարկիքն գիտացէք։ Օ ձեր կեանքն
անգիտութեամբ մի՛ անցնէք։ ՚Ի յայլոց
տրտմութիւն մի՛ խնդայք։ Ի՞նդ կոտրա-
ծըն՝ ընդգնացածն՝ ընդ թափածն՝ ընդ
այրածն՝ մի՛ տրտմիք։

Խրատ . Դ

՚Ա մ-ծամեծաց յորոգայթն կոծե-
ցարմէք։ Աարդկանց՝ ամենայն իրաց
համբերեցէք։ ՚Ի տեղի ուր համբերել
պէտքէ՝ մի՛ ըշտապիք։ Օ հետ մարդոյ՝
ոխակալ մի՛ լինիք։ Օ չափ անձին ձե-
րոյ ճանաչեցէք։ Օ ձեր ղոտան քան ըզ
ձեր անկողինն աւելի մի՛ երկնցնէք։
՚Ի պատերազմէ զերես մի՛ դարձընէք։
Օ չայլոց կոիւն ՚ի ձեր յանձն մի՛ առնցք։

Խրատ · Ե

Առիւ թէ հանդիպի ՚ի ձեր մէջն՝
միջակ արարէք, բայց շուտ հաշտեցա-
բուք։ ՚Ա մէջ սրտից ձերոց նախանձ մի
պահէք։ ՞Օ ամէն բան՝ համբերելով
արարէք։ ՞Օ անպէտսն ՚ի բաց թողէք,
և զպիտանացուն ընկալարնէք։ ՞Օ երևե
լի զգայարանքն ձեր՝ պատրաստ պահե-
ցէք։ ՞Յանպատեհ բանից՝ ՚ի զատ կա-
ցէք։ ՚Ա մէջ մարդկանց՝ վատ անուն մի
ստանայք։

Խրատ · Զ

՚Ա գողունեաց ընչեց մի՛ շահէք։
՚Ա յեզէր թագաւորի՝ տուն մի՛ շինէք։
՞Օ ձեր բնակուին՝ մօտ ՚իսանութ մի՛ առ-
նէք։ ՚Ա պիղծ գործոց և տեղեաց ՚ի բաց
կացէք։ Վնիսրատ և անկիրթ մարդկանց՝
ծառայութի մի՛ առնէք։ Վնընկեր ՚ի
ճանապարհ մի՛ երթայք։ Վնարժանից՝
մի՛ խոնարհէք։ ՞Օ հետ չար կամաց՝ մի՛
դատիք։ ՚Ա յօտար հող՝ ծառ մի՛ տընկէք։

Խրատ · Է

՚Ա յաղահատ տեղիք՝ սերմմի՛ ցանէք։
՞Օ հետ ամէն ազդ մարդոյ՝ մի օրինակ
մի՛ վարիք։ ՞Օ հետ անարժան մարդ-
կանց՝ մի՛ նըստիք։ ՞Օ հետ անհարկից՝
՚Ա

սէր մի' դնէք : Վասմաս մարդկանց՝ մի'
հաւատայք, և զիետ նց՝ աղուհաց մի'
ուտէք : Օ հետ մարդոյ՝ խռովութիւն և
կոխւ մի' առնէք : Օ հետ չտեսած մար-
դոյ՝ սիրելութիւն մի' առնէք :

Խրատ . Ը

Օ հետ հպարտ մարդոյն և խելա-
ռին և արբեցողին՝ մի' խօսիք : Դուք
զձեղ՝ մեծ մի' համորիք : Դ լեզուսնի
կնոջէ՝ պատրաստ կացէք : Ո՛վ որ ըշ-
խրատն սիրէ՝ զայն խրատեցէք : Օ ու-
տելն և զմկելն՝ մինակ մի' սիրէք : Ձեզ
հնազանդելոցն՝ անհնարին և անկարօղ
բանս մի' դնէք : Օ ձեզ սիրողն՝ մի' ա-
տէք : Ո՛վ որ զիետ ձեր սէր ունի՝ զնա-
անտես մի' առնէք : Քանզատեհ պտո-
ճառէ՝ զծառայն ձեր մի' ծեծէք :

Այլոց ապրուստին՝ աչք մի' ձգէք :

Խրատ . Թ

Օ ձեր հացն՝ յայլոց սեղան մի'
դնէք, Երբ զձեր հացն ուտէք՝ զձեր
զրոյցն արարէք : Տղայոց և երիտասար-
դից զիետ՝ բան մի' խորհիք : ()տար կին
կամ պառաւ՝ ի մէջ տան մինակ մի' թո-
ղուք : Դ չար կնոջ հանդերձից՝ պատ-
րաստ կացէք : Օ ձեր հոդին՝ ձեր մարմ-

Նոյն ծառայ մի տռնելք։ ՚Ի ձեր որդւոց
և դստերաց մահն՝ մի՛ տրտիլք։ ՚Յօտար
բան՝ առանց փորձի մի՛ վըստահանայք։

Խրառ ։ Ժ.

Օ սցգին ձեր՝ ՚ի պահ օտարի մի՛
տայք։ ՚Յայլոց ապրանք իւրեւ ըղտելըն
իւր՝ մի՛ վստահանայք։ ՚Յօտար մարդոց
տռն՝ տանուտերութիւն մի՛ տռնելք։
Օ օտարն որ չելք ճանաչէր՝ ՚ի ձեր տռւ-
նըն վարձկան մի՛ դնելք։ ՚Այն մարդիքն
որ զայս կեանքս խիստ կը սիրեն՝ դուք
զնոսա մի՛ սիրելք։ ՚Ի մէջ առն և կնոջ՝
կամ ծառայի և տետռն՝ բանսարկութիւ-
մի՛ առնելք։

Խրառ ։ ԺԱ.

՚Ա թագաւորն՝ զգոյշ և պատրաստ
կացէք։ թագաւորն թէպէտ խոնարհի՝
դուք մի՛ համարձակիք։ ՚Իշխանաւորաց
և գլխաւորաց հնազանդ լերուք։ ՚Ոխա-
կալ մարդկանց՝ ՚ի զան կացէք։ Օ ամէն
մարդոց պատիւն իմացէլք։ ՚Անդ բախ-
տաւորն և ընդ մեծատունսն՝ մի՛ նա-
խանձիք։ ՚Անդ իմաստունսն՝ մի՛ հակա-
ռատկիք և մի՛ այպանելք դրանս նցողի նորա-
տէր են գըշի և իմաստուն։ Օ գիտունսն
և զիմաստունն պատուեցէք։ թէպէտ

Դուք իմաստուն եք՝ այլ քան զձեզ ա-
ռելի համարեցեք։ Օ ձերսն պատուե-
ցեք և գաւաղան լերուք նոցա։

Խըստ ։ ԺԲ

Օ մեծն մեծ, և զփոքրն փոքր սիր-
եցեք։ Օ խաբուսիկն՝ ՚ի միջյ ձերմէ
բարձեք։ Օ հետ ժլատի և ոչ ինչ
մարդկանց՝ մի՛ դատիք։ Օ հօր և զմօր՝
և զազգի պատիւն պահեցեք։ Ա զգա-
կանաց և ընտանեաց ձերոց՝ խնամք տա-
րեք։ ՚Ի բարեկամաց ձերոց՝ զշշմարիան
ընտրեցեք։ Ա մենայն մարդոյ՝ մի՛ հաւա-
տոյք։ Օ ոսկի և զարծաթ՝ քան զչափն
առելի մի՛ սիրեք։

Խարստ ։ ԺԳ

Յամաւուրս ձեր՝ խրատիւ և իմաս-
տութե՛ կացեք։ Յամժամ՝ արթուն և
պատրաստ լերուք։ Օ չարն՝ ՚ի միջյ
ձերմէ բարձեք։ Ա ատ մարդկանց սրբ-
աին՝ մի՛ օդնեք։ ՚Ի սիրելոյ և ՚ի զարմէ՝
զգութն ձեր մի՛ բառնայք։ Օ հետ
պիղծ մեռելի՝ զձեր մեռեալն մի՛ թա-
ղեք։ ՚Ի մշջ մարդկանց՝ քան զբարին
այլ բան մի՛ խօսիք։ Ա ւսման և դիմուն
միշտ հետեւցեք։

Խրատ · ՃԴ

Վեզք քան զձեզ աղէկ է և գիտուն՝ զնա աւելի պատուեցէք, ԱՌիշտ զհետ խմաստնոց և գիտնոց շրջեցարծւք։ Օ անցեալ ժամանակն՝ հեշտ մի՛ համարիք։ Օ ինչ որ յաշխարհիս մէջն չունիք՝ ՚ի մարդկանէ մի՛ խնդրէք՝ բաց ՚ի գիտութե՛։ Ուշ կամիք զի անհոգ մընայք՝ աղէկ արուեստ ուսմիք։ Իւան մի որ ՚ի պահ առնուք՝ ՚ի տէրն հասուցէք։ Փոխ որ առնուք՝ վճարեցէք։

Խրատ · ՃԵ

Խօսք որ ՚ի խելաց չէ՝ մի՛ խօսիք։ Խօսք որ ասելու չէ՝ մի՛ ասէք։ Օ լեզուն ձեր՝ ՚ի չար խօսից զերծ պահեցէք։ Անպատեհ խօսից՝ ունկն մի՛ դնէք։ Պիղծ խօսից՝ պատասխան մի՛ տայք։ Ուագաւորաց՝ յոյս մի՛ դնէք։ Ա ինչ լսէք ըզբանս ՚ի մարդկանէ՝ առնոյն պատասխան մի՛ տայք։ Օ այն բանն զոր դուք լաւ չգիտէք՝ տմենեին մի՛ ասէք։ Օ ինչ ըսն որ ՚ի ձեր սիրտն չկայ՝ զայն լեզուաւ մի՛ խօսիք։

Խրատ · ՃԶ

Վենայն մարդոյ խօսից՝ մի՛ վըստահանայք։ Օ բարի խօսքն՝ յամէն մար-

Պայ ընդունեցէք։ Աչ իրաւ և ոչ սուտ՝
բնաւ մի Երդնուիք։ Օ այս կեանքն՝ ը
այս կենցաղոյս մի՛ փոխէք։ Վայն մարդոյ
զայն կամեցարծւք՝ զինչ որ ձեր անձին
կը կամիք։ Որբոց բան՝ մի՛ խնայէք։
Երկայն ձանապարհի՝ պաշար պատրաս-
տեցէք։ Վայրեաց՝ հանտարազ ողորմե-
ցէք։ Քերիտասարդութեն ժամանակն՝
զծերութին միտք բերէք։ Օ ծերութեանն՝
յերիտասարդութեան ժամանա-
կըն հոգացէք։

Խրատ · ԺԵ

Վայլատութեն և յառահուեն փախիք։
Վառատութեն արուեստ ուսիք։ Մկիզքն
առատութեն՝ ՚ի ձեր արդար արդեանցն
արարէք։ Օ մարդկուեն կերպն՝ ձանա-
ցեցէք։ Օ հետ հարկեորաց՝ սէր դըքէք։
Քանարգ և անգէտ մարդոյ՝ բան մի՛
խնդրէք։ Օ հետ ամէն մարդոյ՝ սէր
և հարկեորուի ը ժամանակին արարէք։

Խրատ · ԺԲ

Զմռան գործն՝ յամառն հոգացէք։
Օ այս աւուր բանն՝ ՚ի վաղուեան մի՛
ձգէք։ Օ դեղն և զարկւնն ՚ի հարկաւո-
րուեն ժամռ գործ ածեցէք։ Օ բան-
գէտ մարդն՝ ՚ի վը բանի դրէք։ Օ երի-

տասարդն և զերկըոտն՝ ՚ի վ՛լ բանի մի'
դնէք: ՚ յօխտկալ և յանողորմմարդկանց՝
հեռի կացէք: ՚ մենայն բանից՝ շուտ մի'
հաւասարյք: ՚ Օ ձեր ընտանիքն՝ միշտ
սիրեցէք:

Խրառու ծ. Ժ. Թ.

Օ հետ ճշմարիտ սիրելեաց՝ սիրե-
լութի արարէք: ՚ Օ աղդականս ձեր՝ մի'
վիրաւորէք: ՚ ՚ ի թողուք զձերայինսն՝
և զօտարսն հոգայք: ՚ Օ ձեր սիրելն՝
մի' մոռանայք: ՚ Օ ձեր թշնամին՝ խիստ
մի' արհամարհէք: ՚ ՚ իմաստուն թշնամ-
ւոյ՝ յոյժ մի' երկնչէք: ՚ ՚ անգետ սիրե-
լեաց՝ հեռի մնացէք: ՚ ՚ մէջ թշնամուն՝
սիրոյ տեղի պահեցէք: ՚ ՚ սիրելութե՛
ժամուն՝ զթշնամունի յիշեցէք: ՚ ՚ ուլուն
արուեստ՝ մի' ուսանիք: ՚ ՚ Եր սիրելեաց՝
յաղքատութե՛ ժամուն օգնեցէք:

Խրառու ծ. Ի

Օ հետ վատ մարդկանց՝ մի' վատթա-
րանայք: ՚ մեն մարդ՝ թհղ զիւր չափն
վայելէ: ՚ շխարհլս՝ ձեզ խաղաղ թհղ
չթուի: ՚ Օ հոգւոյ բաժինն՝ ՚ի մարմնա-
ւորս մի' մոռանայք: ՚ ՚ ղայոց ձերոց՝
հնորաւորութե՛ արուեստ ուսուցէք:
՚ Օ ձեր կերպարանն՝ ՚ի սիրելեաց և ՚ի
թշնամեաց ծածուկ պահեցէք: ՚ Օ ձեր

լոռիուրդն՝ ամէն մարդոյ մի՛ յայտնեք ։
Ունացն բանից՝ ականջ մի՛ դնեք։

Խրատ ։ ԻԱ

Օ ձեր խորհրդակիցն՝ ՚ի ժամանա-
կի բարկութե փորձեցէք ։ Օ կին և
զորդիս՝ ՚ի ժամանակի աղքատութե մի՛
ուրանացք ։ Վ մէն իրաց զչափն սիրեցէք ։
Օ հպարտութի՝ քան ըզմահն դառն
իմացէք ։ Օ անհոգութին ՚ի ձեզ՝ անկեն
դանութի գիտացէք ։ Ծ նկեր զայն ձա-
նաշեցէք՝ որ ցաւակից ձեզ լինի ։

Խրատ ։ ԻԲ

՚ Ա ժամանակի անհոգութե քան ՚ի
նեղութե ժամանակն խիստ պատրաստ
կացէք ։ Օ ամէն բան՝ ՚ի յառատութե
ժամն հոգացէք ։ ՚ Ե յաժնութե զթան-
կութին յիշեցէք ։ Յ առողջութե ժա-
մանակին՝ զհիւանդութին ՚ի միտ ածէք ։
Օ աղջիկն կամ զկին՝ ՚ի ձանաշ տեղեաց
առէք ։ Օ մարդ միանգամատեսանելով՝
մի՛ խաբուիք ։ Օ աշխարհիս փառքն և
մեծութին՝ ոչ ինչ համարեցէք ։ Վ իշտ
և հանապազ զյաւիտենական փառքն ՚ի
միտք բերէք ։



Խրատք սլիտանիք և օգտակարք, զոք ասացեալ
է խիկարայ իմաստնոյ :

Այս խիկարս դպիր էի սենէքերի-
մայ աըքային ասորեստանեայց,
առի ինձ վաթսուն կինս, և շինեցի վաթ
սուն ապարանս . և եղէ վաթսուն ա-
մաց, ոչ եղև ինձ որդի : Հայնժամ մտի
առ կուռքն բազում ընծայիւք . և վա-
ռեցի հուր, և արկի խունկս անուշա-
հոտս ՚ի վը նորա . մատուցի զընծայս, և
զոհեցի զոհս վասն ծննդեան : Եւ աղա-
շեցի ասելով, ով աեարք իմ և չոճք իմ
բելշիմ և շահիմ, հրամայեցէք և տուք
ինձ արու զաւակ . քանզի ահա խիկարս
կենդանւցն մեռանի : Եւ զի՞նչ ասեն մար
դէք, թէ խիկար իմաստուն էր և ձար-
տար, մեռաւ՝ և ոչ գոյր նորա որդի, որ
թազէր զնա, և ոչ դուստը՝ որ լայր
զնա . զի՞նչ ասեմ, չունիմ ժառանգ յետ
մահուան իմոյ : Եւ եթէ որդին իմ զօր ամ
տասն քանքարս ծախեցէ, ոչ կարէ ըս-
տառել զի՞նչս իմ . այլ զի միայն արկցէ
հող ձեռոք իւրովք ՚ի վերայ իմ . և զի
մի՛ մեացից անյիշատակ :

Յայնժամ ձայն եղեւ ՚ի չոճոցն ի-
մոց՝ թէ խիկար, ոչ հրամայեալէ լինիլ
քեզ զաւակ . բայց թէ առցես զնաթան
քեռ որդին քոյ, և մնուսցես զնա որդի
քեզ, և նա հատուսցէ քեզ զանուն քո :
Եւ ապա առի զնաթան քեռ որդին իմ
առիս, որ էր մի ամաց . և հագուցի նմա
քեհեզս և ծիրանիս . և եդի մանեակ ոս-
կի ՚ի պարանոց նը ող որդի թագաւորի .
գեղաշուք զարդարեցի զնա . և արբուցի
նմա կաթն և մեղք և ննջեցուցանէի զնա
՚ի վը արծուոց և աղաւնեաց իմոց, մինչեւ
եղեւ եօթն ամաց : Եւ ապա սկսայ ու-
սուցանել նմա զդպրութի և զիմաստութի և
զհանձարագիտութի, և զպատասխանիս
հրովարտակաց, և զդարձուածս հակա-
ռակ խօսից . և ՚ի տուէ և ՚ի գիշերի ոչ
դադարէի ուսուցանելոյ . և յագեցուցի
զնա ուսմամբ իբր հացիւ և ջրով :

Պապա ասաց արքայն առիս՝ գըպիր և
իմաստուն խիկար, գիտեմ զի ծերացեալ
ես, և յետ վախճանի քոյ ովլէ, որ կա-
տարէ ճարտարութ և իմաստութ զգործս
աբքունեաց մերոց . զի ես հանապազ
արտումեմ վս այդ բանիդ : Պատաս-
խանի ետու նմա և սուացի, արքայ յա-
ւիտեան կաց . է՛ իմ որդի՝ որ առաւել

Հանձարեղ և իմաստուն է քոն զիս։
Սաց թագաւորն , ած առիս՝ զի
տեսից զնա . և ես կացուցի զնա առաջի
թագաւորին : Յորժամ ետես թագաւ-
որն՝ ուրախ եղեւ և ասաց , այս օրս
օրհնեալ եղիցի . քանզի խիկար ՚ի կեն-
դանութե իւրում էած և կացոյց զոր-
դին իւր առաջի իմ , և ինքն ՚ի հանգըս-
տեան եղիցի : Եշ ես երկրպագի ար-
քային իմց , և առեալ տարայ զնաթան
յապարանս իմ . և այսպէս ասէի ՚ի խը-
բատելն իմում :

Խրառք խիկարոյ՝ զոր ետ որդւցն իւրց
նաթանայ :

Ո՞րդեակ՝ եթէ լսես խօսք ՚ի դուռն
թադ աւորաց և իշխանաց և մեծամեծաց ,
պահեա և մեռն զնա ՚ի սրտի քում . և մի՛
յայտներ մարդոց՝ մի՞չե այլքն ասեն քեզ
Ո՞րդեակ՝ զմարդոց կապած և կըն-
քածն մի՛ արձակեր , և զարձակեալն մի՛
կապեր :

Ո՞րդեակ՝ լաւ է իմաստուն մարդոցն
զհետ քար կրելն՝ քան զանգետին հետ
ուտել և ըմպելն :

Ո՞րդեակ՝ եթէ առաքեսցեն զքեզ ՚ի
տեղի ինչ վլուսնի , լաւ ՚ի միտ առ զըանն

զոր ասելոց ես և ապա գնա՞ + զի մի՛ գուցէ
յետոյ լինիցիս ծաղը առաջի այլոց :

Ո'րդեակ՝ եթէ գնասս ՚ի հրաւիրեալ
տեղիս յորում գտանի քան զքեղ մեծ
և յարգի, մի՛ նստիր ՚ի վերին կողմն . զի
յետոյ սակաւ առսակաւ իջանես ամօ-
թով ՚ի ստորին կողմն :

Ո'րդեակ՝ եթէ ընկերն քո հիւանդ-
է, մի՛ ասեր ՚ի մասի քում, թէ տանձ կամ
խնձոր գտանեմ, և ապա երթամ ՚ի տես
այլ երթ ոտիւք՝ և տես աչօք . զի զիւ-
ւանդն դատարկ ռեսանել շատ լաւ է՝
քան զբազում միրգս տանել :

Ո'րդեակ՝ մի՛ հեղուր զարիւն մար-
դոյ, զի մի՛ այլքն հեղցեն զարիւն քո :

Ո'րդեակ՝ մի՛ շնար ընդ այլոց կա-
նանց, զի մի՛ այլք շնասցեն ը կուջ քո :

Ո'րդեակ՝ լաւ է ծառային միամառութ-
տալ սրատասխանի տն իւրում, քան զոր
խրատելով խօսի, և ած է ՚ի բարկութի:

Ո'րդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել
զոտս քո, զի մի՛ համարձակեսցի և կո-
խեսցէ զպարանոց քո :

Ո'րդեակ՝ մի՛ լինիր քաղցը որ կլանեն
զքեղ, և մի՛ լինիր դառն որ թքանեն
զքեղ :

Ո'րդեակ՝ լաւ է կյու աչօք՝ քան կյու
մտօք . զի կյուն՝ արագ ռեսանէ զերթ և
եկն

Եկն ճանսոպարհին , և կցը մոք՝ հա-
նապաղ գնայ կամակոր :

Ո՞րդեակ՝ լաւ է աղջիկ՝ որ ծնանի
և շուտ մեռանի , քան թէ ապրի և աղ-
ջին իւրոյ լինի նախատինք :

Ո՞րդեակ՝ լաւ է ուլմի ՚ի ձեր տանն
զենած , քան թէ եղմի ՚ի տունս այլոց :

Ո՞րդեակ՝ ՚ի յապարանս թագաւորաց
մի' մտաներ , և ընդկնոջ դատաւորի մի'
խօսիր :

Ո՞րդեակ՝ աչք մարդոյ ագահ է , ոչ
շատանայ գանձով մինչ մտանէ ՚ի հող :

Ո՞րդեակ՝ մի' պատճառ լինիր հարս-
նացուցանելոյ զդուստրն ուրուք ընդ-
առն օտարի . զի թէ յետոյ այլն վատ
լինի՝ անիծանեն զքեղ , և թէ աղէկ լի-
նի՝ ոչ յիշեն բնաւ զքեղ :

Ո՞րդեակ՝ յորժամ դատաստան եր-
թաս , մի' շատախօս լինիր , և մի' սուտ
խօսիր՝ զի մի' յետոյ մտանիցես ՚ի բանդ :

Ո՞րդեակ՝ յառաջ զլսուքն ՚ի մոտի
քում խորհեա , թէ սուտ ես՝ մեղայ
տսա՝ զի մի' դատաւորն արկցէ ՚ի բանտ
և տուժեսցէ զքեղ :

Ո՞րդեակ՝ եթէ զմարդն ՚ի կտխելտա-
նին՝ մի' յառաջնորա ընթանացը , զի մի'
մատնեսցէ զքեղ և ասասցէ՝ թէ սա ես
իմ ընկեր է :

Ո՞րդեակ՝ յորժամ երթաս ՚ի հարսան-
կամ կամ ՚ի մեռելոյ տուն՝ յառաջ հաց
կեր ՚ի տունդ, և ապա գնա՛ . զի թէ
հարսանիս է՝ ՚ի շատ խնդութէն մոռա-
նան զքեզ, և թէ մեռելոյ տուն է՝ ՚ի
շատ տրամութէն մոռանան զքեզ, և
դու մնաս քաղցեալ:

Ո՞րդեակ՝ կամուրջ մի՛ հեռի գնալան-
ցանել լաւ է, քան մտանել ՚ի ջուր մօտիկ:

Ո՞րդեակ՝ նոր դատաստան մի՛ սահ-
մաներ անիրաւութէ . թէպէտ և իշխան
լինիս՝ ՚ի սահմանէ դուրս մի՛ ելաներ:

Ո՞րդեակ՝ մի՛ բանար զաչս քո և տե-
սաներ զկին գեղեցիկ, զի դեղեալէ զե-
րեսն՝ և ծարուրեալէ զաչսն . և թէ
վատնես զամ ինչս քո ՚ի սէր նորա՝ ոչ
ինչ առաւել գտանես՝ քան զկնոջ քոյ,
բայց միայն զմեղքն և զսկերեսութին:

Ո՞րդեակ՝ եթէ աեսանես զերիտա-
սարդն թռուցեալ յօդս՝ մի՛ հաւատար
գործոց նր . զի բան ծերոց հաստատ է,
բայց երիտասարդին՝ ոչ:

Ո՞րդեակ՝ թէպէտ և որդին քո իմաս
տուն է՝ յառաջագոյն փորձեա զնա, և
ապա տուր զինչս քո ՚ի ձեռն նորա:

Ո՞րդեակ՝ ով ոք քան զքեզ պինդ-
երես է, մի՛ հակառակիր ընդ նմա:

Ո՞րդեակ՝ եթէ բարձր է տան շեմն

քո առաջւել քան ինն կանգունս , ՚ի
մասնելն քո ընդ այն խոնարհեցն ըդ-
գլուխ քո :

Ո՞րդեակ՝ մի' առնուր կշռով մեծ՝ և
ծախեր փոքր , և ասեր ՚ի մասի քում թէ
շահեցայ . զի ոչ գիտես՝ թէ փոխանակ
այնը շահուն բարկանայ ած ՚ի վը քո ,
և զոր ունիս՝ առնու ՚ի ձեռաց քոց , և
տայ այլոց :

Ո՞րդեակ՝ մի' Երդնուր և մի' ասեր
սուտ , զի սուտ Երդումն և սուտ ասելն՝
զմարդոց կենաց պակասութի բերէ :

Ո՞րդեակ՝ Եթէ կամո խնդրել բանս
ինչ յայ՝ ՚ի կամաց նը մի հեռանար , զի
զոր ինչ խնդրես՝ տայ քեզ :

Ո՞րդեակ՝ զինչ բան՝ չա՛ր թուի
քեղ , ընկերին քում՝ մի' կամենար :

Ո՞րդեակ՝ թէ կամիս գտանել յամե-
նեցունց զբարիսարա դու այլոց զբարիս :

Ո՞րդեակ՝ յորժամլինիս ՚ի մէջ մարդ-
կան՝ մի' յայտներ զպարտքդ և զպակա-
սութիդ քո , զի ՚ի նոցանէ շահ ոչ լինի
քեղ , և դու արհամարհիս ՚ի մէջ նոցա :

Ո՞րդեակ՝ սիրեա զին քո , զի մարմին
քո է , և աշխատանօք սնուցանէ զորդիսն
քո , և կցորդ կենաց քո է :

Ո՞րդեակ՝ սիրեա զեղբայր քո իբրև
զանձն քո , զի ՚ի հասանիլ որդւոց քոց՝
խնդասցես :

Ո՛րդեակ՝ ուսմ զորդին քո ՚ի քաղց
և ՚ի ծաբաւ, զի ուսանիցին համբերել
նեղուե . և յորժամ հանդիպի ժամա-
նակ սովոյ՝ կարասցեն ժուժկուել:

Ո՛րդեակ՝ մարդոյ գործք՝ որ ոչ է
բարի և չունի անուն բարի յնի, լաւ է
մարդն այն մեռած՝ քան թէ կենդանի :

Ո՛րդեակ՝ մի' ասեր չոր բարեկամին
քոյ, այլ ծիծաղեա ընդերես նորա, զի
դու ուրախ լինիս ՚ի մէջ ընկերոց քոց :

Ո՛րդեակ՝ զամ բարութի կնոջ քոյ
արա, բայց զիսորհուրդ սրտի քոյ մի'
յայտներ . զի կինն բնութիւն տկարէ, և
ոչ կարէ պահել զըան քո . այլ յայտնե
դրացեաց քոց, և դու անկանիս ՚ի փոր-
ձութիս և ՚ի նեղութիւն :

Ո՛րդեակ՝ նախ խորհեա զըանն ՚ի
սրտի քում, և ընտրեա զպիտանին, և
ապա խօսիր, զի մի' յետոյ ծաղը լիցիս
յայլոց :

Ո՛րդեակ՝ եթէ տեսանես զկուռիլն
երկու մարդոյ ընդ միմեանս, մի' մտաներ
՚ի մէջ նց, զի մի' ՚ի զուր մեռանիցիս :

Ո՛րդեակ՝ եթէ կամիս իմաստուն
լինիւ պահեա զլեղուդ քո ՚ի չար խօսից:
Ո՛րդեակ՝ միշտ խորհեա զաղքատն և
շտնանկն, զի յաւուր չարէ փրկէ ած-
զանձն քո :

Ո՛րդեակ՝ պատուեան զհայը քո և ըղ-
մայը, զի ՚ի հասանիլ որդւոց քոց՝ գըտ-
ցես և դու զնոյն :

Ո՛րդեակ՝ մի՛ գողանար զինչս մարդ-
կանց, զի մի՛ գուցէ աստ մահու մեռա-
նիցիս, և անդ յանշէջ հուրն այրիցիս :

Ո՛րդեակ՝ ընդ թշնամոյն կորստեան
մի խնդար, զի առաջի քո մահ կայ :

Ո՛րդեակ՝ յորժամտեսանես զծերն,
յոտն կաց և պատուեան զնա, զի և այլք
զնոյն արասցեն քեզ :

Ո՛րդեակ՝ եթէ դադարի գետն ՚ի
գնացիցն՝ կամ քաղցրանայ ող զմեղու-
և կամ սպիտակի ադուաւն որպէս զա-
ղաւնի, նցնպէս թողու անզգամն զա-
նըզգամութիւն իւր :

Ո՛րդեակ՝ մի՛ յաճախեր ՚ի տուն բա-
րեկամին քո, զի մի՛ յագելատիցեն զքեզ:

Ո՛րդեակ՝ օրինաց ոյ ունկնդիր լեր,
զի պատուիրանն ոյ ամուր պարիսպէ
մարդոյ :

Ո՛րդեակ՝ կրթեան զլեզուդ քո՝ խօ-
սիլ զըարի ՚ի մէջ ամենեցուն :

Ո՛րդեակ՝ եթէ խրատ բարի տացես
մարդոյ, գտանես դու զըտրի. զի չարն՝
հանապաղ ՚ի չար մարդէն ծնանի :

Ո՛րդեակ՝ եթէ կամիս զգործս ինչ
բարիս գործել յառաջ մի պարծիր, զի

մի՛ գուցէ յետոյ չկարիցես գործել, և
լինիցիս ծաղը այլոց :

Ո՛րդեակ՝ մի՛ ցանկար մարդոյ արեան,
և մի՛ սիրեր զկուիւ . այլ սիրեա զխօսքս
կակուղս, որ շիջուցանէ դժբարը ըրովք
գազանացեալ սիրտս մարդոյ :

Ո՛րդեակ՝ յորժամ ըմպես գինի, մի՛
շատախօս լինիր . զի՞ շատ խօսից ծնա-
նի կուիւ և յետոյ խռովութի՛ գուցէ
և սպանութիւն :

Ո՛րդեակ՝ խաղաղութին մայր է ամ
առաքինութեան :

Ո՛րդեակ՝ մինչ կօշիկդ յոտս քո է՝
կոխեա զփուշն, և արա ձանապարհ ըն-
կերի քում՝ որ ընդ քեզ գնալոց է :

Ո՛րդեակ՝ ջանա և ստացիր անուն
բարի, զի լաւ է մարդոյն անուն բարի՝
քան թէ զգեղ գովելի . զի գեղեցկութին
հիւանդուք և մահուամբ ապականի, և
անուն բարի մնայ յաւիտեան :

Ո՛րդեակ՝ Եթէ հանդիպիս կնոջ ա-
նըզդամի՞ հնաղանդիր նմա, և կամփա-
խիր ՚ի նմանէ :

Ո՛րդեակ՝ ՚ի լեզւյ քումնէ երկնչիր՝
քան յօտար թշնամւոյ . զի այլոք ոչ կա-
րէ այնչափ վնասել զքեզ՝ Եթէ ոչ նա :

Ո՛րդեակ՝ լաւ է թշնամութիւ առն ի-
մաստնոյ, քան թէ սիրելութիւ առն անմտիւ :

Ո՞րդեակ՝ զայր անմիտ և արբեցօղ՚ի
գործ ինչ մի առաքելը, զի բազում չա-
րիս ածէ ՚ի վերայ քո :

Ո՞րդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տա-
լըն այնպէս է, որպէս թէ ոք փոշի ցանէ
՚ի գնացս գետոց :

Ո՞րդեակ՝ զչար և զանմիտ և զլեզուա
նի և զամբարհաւաճ մարդն՝ ՚ի մէջ տան
քո մի՛ ընդունիլը, զի ՚ի գործոց նորա
ամօթով լինիս :

Ո՞րդեակ՝ Եթէ լինիս տէլ աշխար-
հի, զմահն քո մի՛ մոռանար . և որչափ
մեծութե՛ հասանիս, այնքան ՚ի խոնար-
հութեան կալ զանձն քո :

Ո՞րդեակ՝ ած զգինի վե՛ռախուռե՛,
բայց տես՝ թէ մի՛ գուցէ ըմպէ գինին
զքեզ . զի փառաւոր առնէ Երբեմն ըզ-
մարդն, և Երբեմն ամօթալից և ծաղը :

Ո՞րդեակ՝ լաւէ կռուիլ ընդ մարդոյ
զինուորի, քան թէ զհետ կնոջ անզգամի:

Ո՞րդեակ՝ մարդ չարաբարոյ և ամբար
տաւան՝ յորժամ տեսանէ զկռիւ ընկե-
րի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի . և կար-
ծէ ՚ի մտի իւրում՝ թէ փառս ինչ յա-
ւելու յանձին իւրում:

Ո՞րդեակ՝ յորժամ քաղցրանայ տչք
ոյ ՚ի վը քո՝ առաւել Երկնչիլը ՚ի պատ-
ուիրանացն նը, որով յաչս թադաւո-

բաց հաճոյ երեխս , և ամ մարդ սիրէ
զքեղ . և յորժամ արհամարհիս յայ՝
յայնժամ թագաւորք և իշխանք և ամ
սիրելիք քո ատեն զքեղ :

Ո՞րդեակ՝ մի' ասեր աղքատին , թէ
դու ինձ չար ոչ կարես առնել , զի բա-
զում չարիք և անարդանք յոշինչ մարդ-
կանէ ելանեն .

Ո՞րդեակ՝ Եթէ կին օտար սիրէ ըզ-
քեղ , և ասէ՝ թէ դու լաւ ես քան զիմ
այրն , մի' հաւատար նմա . զի կին պոռ-
նիկ՝ նման է շան որ խառնակի ընդ ամ
շանց , և նման է գերեզմանի ըռելց՝ որ
՚ի ներքս լի՛ է գարշահոտութե՛ :

Ո՞րդեակ՝ մի' լրբալեզու լինիր ՚ի մէջ
ընկերացդ , և կարծեր թէ սիրելի ես
նոցա . զի յորժամ յանդիմանեն զքեղ ,
լինի բան քո ամօթալից :

Ո՞րդեակ՝ որ ամբարտուան է աչօք
և ագահ սրտիւ , այնպիսի մարդն թէ-
պէտ ունի ինչս բազումս , այլ ունայն
է և կենդանի մեռեալ :

Ո՞րդեակ՝ նախ փորձեա՛ զբարեկամս
քո , և ապա յայտնեա՛ նմա զխորհուրդ-
մտաց քոց . զի՞ այն է ձշմարիտ և ստոյդ-
բարեկամն՝ որ ՚ի ժամանակի բարկուե՛
և կամ կռւոյ սիրելոյն իւրոյ՝ ոչ եր-
եկք յայտնէ զխորհուրդ մարդոյ , այլ

առաւելքան՝ ՚ի ժամանակս սիրոյ՝ թա-
քուցանէ զայն՝ ՚ի սրտի իւրում:

Ո՛րդեակ՝ ադահութին մայր է ամ
չարեաց և ծնուցիչ ամ մեղաց, բայց ո-
ղորմութին ձեռնտու է ամ բարեաց:

Ո՛րդեակ՝ Եթէ սիրես զխաղաղուի,
՚ի դատաստանէ պատրաստ կաց . զի որ
հանապաղ յօժարի ՚ի դատաստան, նա
մայր է ամ մեղաց և չարեաց, յիմարեալ
է և ոչ գիտէ զի՞նչ առնիցէ :

Ո՛րդեակ՝ զչարախօսուի զումեքէ մի'
ասեր և մի' լսեր . զի կարի խոցէ զսիրտ
մարդոյն, և ապականէ զփառս մարդ-
կան, զի նախատինք մեծ է :

Ո՛րդեակ՝ Եթէ կամիս մարդոյ զի՞նչս
տալ յառաջ մի' սլուզիր և մի' խոստա-
նար . զի մի' գուցէ յետոյ ոչ կարիցես
տալ, և լինիցիս ծաղը և սյան այլոց :

Ո՛րդեակ՝ ամբարտաւան մարդն հե-
ռի է և օտար յընտանեաց և ՚ի բարեկա-
մաց իւրոց . այլ խոնարհն միշտ մերձ է՝
ոչ միայն ընտանեաց և բարեկամաց իւ-
րոց, այլև հեռաւորաց և անծանօթից :

Ո՛րդեակ՝ լաւ է ստանալ ձի ծոյլ և
պղերդ և էշը ըստ վարուք, քան թէ ծա-
ռայ փախչօղ և սրտասաց :

Ո՛րդեակ՝ մի' երաշխաւոր լինիր բա-
րեկամին քո, զի յետոյ բաղում վիշտս

Կըես մինչև վճարես զպարտս նորա :

Ո՞րդեակ՝ մարդ չարախորհուրդ և
նախանձոտ՝ ոչ թէ միայն ատելեացն
առնէ զշարութի, այլ բնութք ամենե-
ցունց հակառակ կայ :

Ո՞րդեակ՝ ողպ լերինք շտեմարանք սա-
ռաց են, նոյնպէս և նենգաւորք՝ բնա-
կարան չարեաց են :

Ո՞րդեակ՝ մի՛ զհետ այլոց կանանց կա-
տարեր զցանկութի քո . զի օտար կինն
նման է աղի ջրոյ, զոր որքան ըմպես՝
այնքան առաւել ծարաւիս, և զանուն
վատ ժառանգես :

Ո՞րդեակ՝ որոպ հուր միշտ ՚ի տապոյ
բորբոքի, և ողպ արեգակն ՚ի ճառագայ-
թից երեխ և լուսաւորէ զարարածս, և
կամ որպէս առիւծ՝ որ ուժեղութքն
գովի, և ողպ բազայն սրբնթաց առ ՚ի շա-
շելոյ թևոցն գովի . նոյնպէս և իմաս-
տունն միշտ իմաստութք իւրով պայ-
ծառ երեխ ՚ի մէջ ամենեցուն, և մանա-
ւանդ ՚ի թագաւորաց և ՚ի մ-ծամեծաց
և յիշխանաց պատիւս ընդունի :

Ո՞րդեակ՝ առն խողամտի ոչ գոյ սի-
րելի երբէք . զի ասէ ՚ի սրտի իւրում՝
թէ կեանքս ոչ անցանի, և ինչքս ոչ պա-
կասին . և ոչ գիտէ թէ յանկարծ ած-
տայ այնպիսւց մահ, և զինչս նը այլոց,

որք ոչ երբէք յիշեն զնա :

Ո՞րդեակ՝ այր անմիտ յորժամ ար-
բենայ , յօժարի ՚ի կոփւ . և կարծէ ՚ի
միտս իւր՝ թէ ոչ գոյ մեծ և հզօր քան
զինքն . զի ոչ գիտէ . թէ յորժամ հան-
դիպի ուրումն քաջի՝ յաղթի ՚ի նմանէ ,
գուցէ և տայցէ սպանանել զինքն :

Ո՞րդեակ՝ ող հողն մայր է ամ տըն-
կոց , նոյնպէս և արբեցութին մայր է
ամենայն չարեաց :

Ո՞րդեակ՝ եթէ իշխան ես աշխարհի
և մարդկան , պահեա զանձն քո ՚ի զեղ-
խութէ . վասն զի ՚ի քեզ են հոգք երկ-
րաւորաց ամ :

Ո՞րդեակ՝ տեսի զգազան կատաղեալ
որ արձակեցաւ ՚ի վերայ իւր , ոչ երկեայ
՚ի նմանէ . և հանդիպեցայ թշնամւոյ ի-
մոյ , ոչ յաղթեցայ ՚ի նմանէ . բայց հան-
դիպեցայ կնոջ լեզուանւոյ , յաղթե-
ցայ ՚ի նմանէ :

Ո՞րդեակ՝ անկանի անօրէնն վա չար
գործոց իւրոց , և ոչ կարէ կանգնիլ վե-
րատին . բայց թէ և անկանի արդարն ,
անդէն կանգնի վա բարեաց իւրոց :

Ո՞րդեակ իմ նաթան՝ զայս ամ զոր
ուսուցի քեզ , ՚ի միտ առ և կատարեա .
որով լինիս իմաստուն ՚ի մէջ ընկերաց
քոց , և ՚ի յաչս թագաւորաց երեւլի :

¶ յս է խրատն՝ զոր ուսուցի որդ-
ւոյն իմոյ նաթանայ . և ես խիկարս գի-
տէի թէ զամ խրատս իմ պահէր ՚ի սըր-
տի իւրում . այլնա ող զփոշի զոր հոսէ
հողմ ՚ի վը երեսաց երկրի , այնպէս ա-
րար զխրատս իմ : ՞ Օ է յառաջ ետու-
նմա զտունս , զծառայքս , զինչս և զա-
պարանս և զիշխանութիս իմ , և արարի
ատենադպիր սենէքերիմ արքային իմոյ :
Ի այց նա մոռացեալ վաղվաղակի զխր-
ատս իմ , և սկսաւ չարիս գործել և
առնել անիրաւութիս . զծառայքս իմ ոչ
խնայէր , և զինչս իմ վատնէր , և զբա-
զում խրատս իմ անտես արար :

¶ Եւ ես խիկարս յորժամ տեսի զչա-
րուի նաթանայ՝ գնացի առ թագաւորն
իմ սենէքերիմ , և պատմեցի նմա մի ըստ
միոջէ զչարուի նը . և խնդրեցի թուղթ
՚ի թագաւորէն , զի մի' իշխեսցէ նաթան
մերձենաւ ընչեց իմոց : ՚ Եւ հրամայեաց
թագաւորն՝ բերին զնաթան . և ետուը
պատուէր նմա՝ ոչ մերձենաւ ընչեց ի-
մոց . և ես խիկարս ելեաւ գնացի ՚ի
առւնս իմ :

՚ Եւ նաթան սկսաւ մտօք չարիս գոր-
ծել վասն իմ ՚ի դուռն թագաւորին .
և խորհեաւ շինեաց ինիք մի ըստ նմա-

նութեան կնքոյ իմց , և փորեաց զիմ
անունս , և կոխեաց ՚ի թղթի միում ,
գրեալ զգիր ՚ի բերանոյ իմմէ առ փարա
ւօն ալքայն Եգիպտացւոց՝ որ չարկամէր
զհետ իմ առ թագաւորին իմց սենէքե-
րիմայ . և գրեալէր այսպէս :

՚ Ա խիկար իմաստասիրէ ողջոյն ընդ
քեզ՝ փարաւօն ալքայ . յորժամ գիրս
առ քեզ հասանի՝ փութով ժողովէ ըդ-
զօրք , և Եկ ՚ի դաշտն արծրունեաց՝ ՚ի
քսան և եօթն օրն հրօտից ամսոյն , յո-
րում ըմբռնեացես զսենէքերիմ թագա-
ւորն առանց պատերազմի :

՚ Ճ յորժամ գրեաց նաթան այս-
պէս , խորհեցաւ և գրեաց թուղթ մի
ևս նման սմա՝ ՚ի բերանոյ թագաւորին
իմց առիս , զոր գրեալէր այսպէս :

՚ Ա սենէքերիմ ալքայէ ողջոյն ընդ
քեզ՝ սիրելի և իմաստուն իմ խիկար .
յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փու-
թով ժողովէ զզօրք բազում , և Եկ ՚ի
դաշտն արծրունեաց՝ ՚ի քսան և եօթն
օրն հրօտից ամսոյն , յորում պատերազ-
մեացեն զհետ զօրացն փարաւօնի . քանզի
դեսպանք փարաւօնի Եկեալ են առիս :

Աւ յորժամ գրեաց զգիրն՝ գաղտնաբար տարեալ ետուր հաւատարիմ մարդոյ , զոր բերեալ հասոց ՚ի ձեռսիմ : Եւ ես խիկարս յորժամ տոի ըզթուղթն՝ բացի և կարդացի զդրեալն , վաղվաղակի ժողովեցի զօրք , և կատարեցի զհրամայեալն ՚ի թագաւորէն իմմէանմեղութք . և ոչ գիտացի զշարութինաթանայ՝ որ առիս :

Եւ զմիւս թուղթն՝ զոր գրեալէր ՚ի բերանոյ իմմէ առ փարաւօն արքայն , զայն կնքեալ և տարեալ ձգեաց գաղտնաբար ՚ի դուռն դարպասի թագաւորին . զոր գտեալ մի ոմն ՚ի ծառայից տարեալ ետուր ՚ի ձեռն սենէքերիմ արքային իմց : Եւ իբրև բացեալ կարդացին զթուղթն առաջի թագաւորին՝ զահիհարեալ լի եղև արտմութք , և ոչ գիտէր զինչ առնելն իւիկարիս :

Հայնժամ նաթան՝ որ դպիր էր թագաւորին՝ եմուտ առ թագաւորն և երկրպագեաց և ասէ , Վղջ լըր արքայ և տէր իմ . զի հայր իմ խիկար ոչ գիտաց զերախտիքս քո , և կամի խափանել ըզթագաւորուի քո . և եթէ ոչ հաւատաս բանիս՝ կացցուք մինչև եղիցի կատարումն քոան և եօթն աւուրն հրոտից

ամսոյն . և ապա Ելցուք և գնասցուք ՚ի
դաշտն արծրունեաց , և տեսցուք աչօք
մերովք զերախտամուացուի Խիկարայ՝
որ առ քեզ :

Յայնժամ սենէքերիմ թադաւորն
երկմտեալ կայր տրտմութբ՝ մինչև եղե
օրն այն . յորում ես խիկարս առեալ
ընդ իս զզօրս իմ՝ եկեալ բնակեցայ ՚ի
դաշտն արծրունեաց : Եւ Ելեալ թա-
դաւորն սենէքերիմ գայր ՚ի դաշտն
արծրունեաց փորձել զիս : Եւ ես յոր-
ժամ տեսի զզօրքն սենէքերիմայ՝ ծաղը
տրարեալ խաղացի ՚ի մէջ դաշտին՝ դէմ
յանդիման զհետ զօրաց նց պատերազմիլ.
քանդի կարծէի թէ զօրք փարաւօնի է :

Յայնժամ տեսեալ սենէքերիմայ ըդ
զօրքն իմ, փախստական եղե . և ես գը-
նացի զօրօք խմովք փոքր ինչ զկնի նը
և ոչ գտի . գործայ և եկի յօթեա-
նըս իմ, և ուրախացայ մաօք խմովք՝ թէ
փախուցի զփարաւօն զօրօքն իւրովք :
Եւ գնաց սենէքերիմ փախըստական ՚ի
դարպասն իւր խելտգարեալ լի՛ տրտմու-
թեամբ , և ոչ գիտեր թէ զինչ արասցէ
խիկարիս զոր ըմբունեցէ :

Յայնժամ եմուտ նաթան առ թա-
դաւորն՝ ողջունեաց և ասէ , ահա տեսը

աչօքդ զԵրախտամոռացու՛ խիկարայ .
այժմ մի' տրտմիր , զի ես ածից դհայըն
իմ խիկար առաջի քու Եւ ասաց սե-
նէքերիմ ցնաթան , եթէ դու բերցես
զիսիկար և տացես 'ի ձեռս իմ , զոր ինչ
խնդրեսցես՝ տաց քեզ : Եւ երկրպա-
գեալ նաթան՝ ել արտաքս և գնաց . և
գրեաց թուղթ մի 'ի բերանց թագաւո-
րին իմց , և ետուր հաւասարիմ մարդոց
միում ասելով թէ տարեալ տացես զայս
'ի ձեռս խիկարայ , զոր եր գրել այսպէս :

|| Ա սենէքերիմ արքայէ ողջոյն ընդ
քեզ սիրելի և իմաստուն իմ խիկար .
քանզի յոյժ հաճոյ թուեցաւ թագաւո-
րիս սենէքերիմայ երախտիքն քո , և զի
փախեան զօրք փարաւօնի յերեսաց քոց .
այժմ տուր հրաման զօրաց քոց գնալ
խաղաղութե՛ ՚ի տեղիս խւրեանց . և դու
ել և եկ , զի ուրախ եղէց ընդ քեզ :

—
Եւ ես խիկարս յորժամ կարդացի՝
ուրախ եղէ յոյժ . և ետու հրաման զօ-
րաց իմց գնալ յօթեանս իւրեանց .
և ես ելեալ գնացի ուրախ լինել ընդ
թագաւորին իմց : Եւ յորժամ հասի
միստութե՛ ՚ի դուռն թագաւորին , աւ-
սեալ զիս զինուորացն՝ ըմբռնեալ տա-

ըան ածին առաջի թագաւորին :

Աւ յորժամ ետես թագաւորն զիս՝
լի եղե տրամաւթք, և հրամայեաց տալ
զայն թուղթն ՚ի ձեռս իմ . զոր մինչ-
դեռ բացեալ կարդացի՝ յայնժամ կա-
պեցաւ լեզուս, և գնաց իմաստուիս, և
ոչ գիտէի թէ զինչ պատասխան տացից
սենէքերիմայ արքային իմոյ : Եւ ողո-
քանօք ասացի՝ արքայ և տէր իմ, մի՛ ՚ի
զուր դատեր զիս, զի չունիմ տեղեկուի
յայս բանէս, այլ անպարտ եմ : Եւ ոչ
եղ ունկն աղտանաց իմոց, և հրամայ-
եաց սպանանել զիս :

Կայնժամ նաթան քեռ որդին իմ
կապեաց զձեռս յետս վուսանակ բա-
րի խրատուցն իմոց զոր յառաջն ետու-
նմա : Եւ ես դարձեալ աղաչեցի թա-
գաւորին իմոյ՝ թէ տուր զիս ՚ի ձեռն
աբուսմաքայ զօրապետին, զի նա տար-
եալ զիս ՚ի տունս իմ՝ ՚ի վը սեմոց դը-
րանց իմոց կատարեսցէ զհրամանս քո .
Բայց զիս գլխատել՝ զգլուխն իմ հարիւր
կանգուն հեռի թաղեսցէ ՚ի մարմնոցս :
Եւ հրամայեաց թագաւորն աբուսմա-
քայ կատարել զհրամանս իւր ըստ խնդ-
րանաց իմոց : Եւ կալեալ զիս աբուս-
մաքայ տանիւ՝ ՚ի գլխատումն՝ ես խիկարս
գաղտնաբար աղդ արարի սոս աբեստան

կինն իմ, թէ պատրաստեա հաղար աղ-
ջկունս, և արա կերակուրս աղգի աղգի .
զի յորժամ եկեսցուք այդը՝ արա ընթ-
րիս, և բե՛ր հաղար կոյս աղջկունս, որք
լայցեն զմահն իմ. և կինն իմ վաղվաղա
կի կատարեաց զհրամանս իմ: Եւ յոր-
ժամ գնացաք հասաք՝ ի տունս իմ, խընդ-
րեցի աղաչանօք յաբուսմաքայ զօրապե-
տէն և ասացի , տուր ինձ զհրամանս
առնուլ ընթրիս առ սիրելիս և առ բա-
րեկամնն իմ փոքր ինչ, քանզի այլ ոչ
մնամ կենդանի: Եւ ասաց աբուսմաք՝
արա ոնք և կամիս. և արարի ընթրիս մեծ-
սիրելեաց իմոց, որք եկեալ էին անդ . և
բերի կերակուրս զանազան , և զգինիս
զանազակս , նաև զբաղում աղջկունսն՝
ոք լայցեն առաջի նց զմահն իմ: Եւ
նոքա ՚ի ստատիկ տրտմութէն արբեալ
՚ի գինւոյն՝ անկեալ նիրհեցին: Եւ ես
խիկարս կապեալ երկաթեօք, գնացեալ
զարթուցի զաբուսմաք զօրապետն և ո-
ղաքանօք ասացի նմա , գիտե՞ս Եղբայր՝
զի երբ բարկացաւ թագաւորն ՚ի վերայ
քո՝ ետ ՚ի ձեռս իմ, թէ տար սպան զա-
բուսմաք . և ես առեալ տարայ զքեզ, և
ոչ սպանի . այլ պահեցի գաղտ , և եկ-
եալ ասացի թագաւորին թէ սպանի զա-
բուսմաքն: Եւ յորժամ անցաւ փոքր

Ժամանակ ՚ի վ՛ր, գնաց բարկութիւն թագաւորին, և զղջացաւ ՚ի սպանումն քո, և ասաց՝ աւաղքեղ աբուսմաք, զի դու կենդանի լինելոց էիր : Եւ ես երբ լուսյ զայս ՚ի թագաւորէն՝ եկեալ հանի զքեղ, և տարայ առաջի թագաւորին, և բաղում պարգևս առի : Այժմ աղաչեմ զքեղ, արասցես փոխարէն նը առիս . զի գոյ ՚ի ներքոյ սեմոց դրանց իմոց հոր մի մեծ, ձգեա զիս անդ գաղտնաբար, և ես ունիմ ծառայ մի մահապարտ՝ որ է մարդասպան, և ահա կապեալ կայ ՚ի բանան, և ունի զնմանութիւն իմ, զգեցն նմա ըզ հանդերձս իմ, և զարթող զժողովուրդն, և շուտով կտրեա զգլուխն նը, և տար թաղէ զդլուխն հարիւր կանդուն հեռի ՚ի մարմնոյն : Եւ եղե ունկնդիր աբուսմաք խնդրուածոց խիկարիս, և արար այնպէս . և գնաց առ թագաւորն՝ թէ սպանի զխիկար . և յոյժ ուրախացաւ թագաւորն ՚ի սպանումն իմ :

Եւ ապա գնաց նաթան խնդրել ՚ի թագաւորէն հովուել զատացուածս իմ . և թագաւորն հրամայեաց տալ նաթանայ զամ ինչս : Եւ գայր նաթան ՚ի տունն իմ հանապաղ . ուտէր և ըմպէր և տղտեղէր զժառացքս և զաղախնեայքս իմ . և կամէր չարիս գործել զշետ կնոջ .

իմոյ . և կինն իմ ոչ հնազանդեր կամաց
նորա : Եւ ես ղայսոսիկ լսէի ականջօք
իմովք . զձայնն գուշանաց , և զպագշո-
տին ընդ կնոջ իմոյ . բայց խնդրէի օր
նմա , և ոչ գտանէի : Եւ յորժամ ան-
ցաւ ժամանակ ինչ՝ լսեց փարաւօն ար-
քայն եղիպտացւոց , եթէ սենէքերիմ
արքայն ետ սպանանել զիսիկար՝ յոյժ-
ուրախացաւ , և առաքեաց գիր առ սե-
նէքերիմ արքայ զոր գրեալէր ոյսպէս :

” Ա փարաւօն արքայէ ողջունիւ ծա-
նիր սենէքերիմ թագաւոր . քանզի կա-
միմ շինել դարպաս մի ՚ի յօդս երկնից
անսիւն և անգերան . առաքեա ինձ ճար-
տարագործս , որ եկեալ շուտով կա-
տարեսցեն զիրամանս իմ . և թէ ոչ առա-
քես՝ գտմ բաղում զօրօք , և աւեր
ածէմ ՚ի վերայ երկրիդ , և առնում ՚ի
քէն հարկ :

—
Եւ յորժամ բերեալ ետուն ըդ-
թուղթն ՚ի ձեռն սենէքերիմայ՝ բացեալ
կարդաց զայն , և իսկցն զարհուրեցաւ
ըոլոր անձն նորա ՚ի բանից փարաւօնի :
Եւ կոչեալ զմեծամեծս և զէմաստու-
նըս և զդպիրս և ասէ՝ քանզի սպանե-
ցաք զիսիկար , ոյլ ուկարե տուլ պատաս

խանի փարաւոնի : Եշտ ասացին մեծա-
մեծքն՝ աղքայ յաւիտեան կաց • քանզի
ահա դպ որդեգիր խիկարայ նաթան՝
որ առաւել հանձարեղ և իմաստուն է
քան զիսիկար , և նա կարէ տալ պա-
տասխանի գրոյս :

Եշտ հրամայեաց թագաւորն կոչել
ղնաթան . և իբրև եկն՝ ետուն զթուղթն
՚ի ձեռն և կարդաց : Իսէ թագաւորն՝
կորօղ ես տալ պատասխանի փարաւոնի .
և ասէ նաթան՝ այս անհնարին է ՚ի
մարդկանէ . զայնժամ տարակուսեալ
սենէքերիմ կոծէը զանձն իւր ասելով
տւաղ քեղ խիկար իմաստուն իմ , զի
սպանեցաք զքեղ . այժմ ոչ կարեմք տալ
պատասխանի , և կըեմք վիշտ բաղում ՚ի
փարաւոնէ : Եշտ եթէ ոք բերցէ զքեղ
կենդանի առաջի իմ խիկար , տաց նմա
լստ կշռոյ անձին քում ոսկի :

Եշտ լուեալ աբուսմաք՝ երկիր եպագ
թագաւորին և ասաց՝ ողջ լեր արքայ իմ
զի թէպէտ այժմ կոծէս զանձն քո
՚ի վերայ սպանման խիկարայ , այլ յե-
տոյ եթէ ոք բերցէ զիսիկար կենդանի ա-
ռաջի քո՝ փոխանակ նը սպանման զնա :
Եշտ ասէ թագուորն՝ ոչ սպանանեմ զնա,
այլ տամ պարգևս բաղումն նմա : Եշտ
երկրպագեալ աբուսմաք թագաւորին՝

Եկեալ վաղվաղակի Եհան զիս ՚ի հորեն .
և տարեալ կացոյց առաջի սենէքերիմայ :
Եւ յորժամ ետես թագաւորն զիս կեն-
դանի՝ յարեաւ յաթոռոյն , և անկաւ ըդ
պարանոցաւս իմով . և համբուրեաց զիս
և ասաց , ով խիկար՝ մեռեալ էիր և կեն-
դանացար : Եւ յոյժ ուրախ եղե թա-
գաւորն . և ետ պարգևս մեծամեծս ա-
բումաբայ զօրապետին . և հրամայեաց
պատուել զիս յաւուրս քառասուն . և
յետ լրման քառասուն աւուրց՝ հրա-
մայեաց թագաւորն բերել զիս առաջի
իւրն . և ետ կարդալ ինձ զթուղթն փա-
րաւօնի : Եւ յորժամ կարդացի ես խի-
կարս՝ ասացի առ թագաւորն՝ մի' տըստ-
միր և մի' կոծեր զանձն քո , զի ես եր-
թամ և տամ պատասխանիս փարաւօնի ,
և առնում հարկս ՚ի նմանէ և գամ : Եւ
իբրև լուաւ թագաւորն իմ , յոյժ ու-
րախ եղե ՚ի բանից իմոց :

—

Եւ ապա ես խիկարս՝ առաքեցի պատ-
ուէր առ աբեստան կին իմ , թէ ըմբըու-
նեա երկու ձագս արծուոյ , և տուր մա-
նել պարան մի երկայն . և բե՛ր զերկուս
ստնդեայ տղայս , և երկու կին որ պա-
հեն զտղայսն : Եւ ուսո տղայոցն գո-

չել, թէ կաւ՝ ծեփ՝ աղիւս բերէք։ Եւ
զօր ամ կապեան զերկու տղայսն ՚ի վը¹
արծուց ձագուցն, և թոռ ՚ի յօդն պա-
րանաւն, և իջ՛ ՚ի վայր՝ մինչև կատար-
եալ ուսանիցին զելանելն և զեջանելն և
զբարբառիլն։

Եւ կինն իմ իմաստուն էր, և փու-
թով կատարեաց զհրամայեալն իմ։ Եւ
ես առի հըաման ՚ի թագաւորէն իմմէ,
և ելեալ գնացի ՚ի տունս իմ։ Եւ առի
զերկու տղայսն և զճագս արծուց, և
եղի ՚ի մէջ արկեղ մից և ելեալ գնացի
առ փարաւօն արբայն։ Եւ յորժամհա-
սի յեգիպտոս՝ իջեվսնեցայ ՚ի տան մի-
ում, և թողի անդ զարկելն, յոր իջեվս
նեալ էի. և ես գնացի առաջի փարա-
ւօնի և երկրպագի նմա։ Եւ ասաց ցիս
փարաւօն, ինչ մարդ ես դու, կամ
ուստի՞ գաս. և ես ասացի, արբայ յա-
ւիտեան կաց. ահա ծառայ քո է, զոր
առաքեաց սենէքերիմ արբայն կատարել
զհրամանս քո. և բերեալ եմ ՛ը իմ ձար-
տարագործս, որ շինեսցեն դարպաս յօդս։
Եւ ասաց փարաւօն, զինչ է անուն քո.
և ես ասացի՝ ապակայ է իմ անունն։
Եւ հարցեալ ցիս փարաւօն՝ թէ զինչ
պէտք են ձարտարագործացդ ՚ի պէտո
դարպասին, և ես ասացի ցնա՝ տուր չե-

թելկաւ՝ ծեփ՝ աղիւս : Եւ հրամայեաց
թագաւորն զոր բերին վազվաղակի . և
ես խիկարս գնացի կապեցի զերկու տը-
ղայսն ՚ի վր երկու արծուոյ ձագուցն ,
և թռուցի դէպ ՚ի յօդս : Եւ տղայքն
աղաղակէին գոչելով , կաւ՝ ծեփ՝ աղիւս
բերէք , որով շինեմք զդարպասն : Եւ
ոչ ոք կարեր հանելինչ ՚ի վեր . և ես ա-
սացի՝ հանեցէք ՚ի վեր , զի մի՝ դատարկ
մնասցեն : Եւ տեսեալ զայս զօրքն փա-
րաւոնի՝ փախեան և անկան ՚ի դարպա-
սըն . և պատմեցին փարաւոնի զսքանչե-
լիսն ամ : Եւ ելեալ փարաւոն ետես
զաղաղակ տղայոցն ՚ի յօդն , զարմացաւ
և ասաց ՚ի մտի իւրում՝ թէ սա շատ
լաւ է իմաստութ քան զխիկար . և ոչ
գիտէր թէ ես էի խիկարն , որ մտի առ
թագաւորն և երկրպագի նմա : Եւ ա-
սաց ցիս փարաւոն , երդ մնեցուցանեմ
զքեղ , զի ասա ինձ զստոյգն ով ես դու .
և ասացի ցնա , ես եմ խիկարն : Եւ ա-
սաց փարաւոն՝ ով թշուառական , կեն-
դանացար . և դարձեալ ասաց , ով իմաս-
տուն խիկար մեկնեա ինձ զայս՝ թէ
զինչ է սիւնն այն ՚ի վր սեան , և մայրք
երկուասամն ՚ի վր մայրից , և անուանք ե-
րեսուն ՚ի վր անուանց , և սուրհանդակիք
երկու՝ մինն սեաւ և միւսն սպիտակ :

այնժամ և ես ետու պատասխան
նմա և ասացի, թէ սիւնն այն՝ տարին
է. մայրքն երկոտասան՝ ամիսք տարւոյն
են. անուանքն երեսուն՝ աւուրզ ամսոյն
են. սուրհանդակքն երկու՝ տիւն և գի-
շելն է. Եւ դարձեալ ասաց փարաւօն,
ով խիկար մանեա ինձ պարան յաւազց:
Եւ ես գնացի ծակեցի ղկողն որմոյ միոյ
դէպ յարեւելս. և ’ի ծագել արեւուն,
տնկաւ շողն ՚ի ներս. և ես առի աւազ
և փոշի երկու ափս, և ետու դէմ արե-
գական, որ տանէր ոլոր ոլոր ՚ի ծակէն
՚ի ներս. և ես գոչէի՝ կծեցէք ղպարան
շուտով: Եւ զահի հարեալ փարաւօն
ապուշ մնաց. և կոչեալ զիս առ ինքն՝
ետ ինձ պարգևս բազումն՝ և հարկս
թագաւորին իմոյ, և շնորհակալ եղեւ ՚ի
նմանէ:

Եւ ես խիկարս ելեալ եկի առ սե-
նէքերիմ թագաւորն իմ, և անկեալ համ-
բուրեցի զոտս նը. և պատմեցի մի ըստ
միոջէ զպատասխանիսն փարաւօնի. այլւ
զառաջին գրցն զանմեղութին իմ: Եւ
յորժամ լուաւ զայս ամ, յայնժամ
յոյժ ուրախ եղեւ սենէքերիմ ասելով,
խիկար իմաստուն իմ՝ այժմ ցնծութք
ուրախ եմ ՚ի կենդանութիքո, և զոր ինչ
խնդրես յինէն՝ տաց քեզ:

Աւես խիկարս շնորհակալեղէ յարքայէս իմմէ և ասացի, «չ է պիտոյ ինձ գանձս կամ պատիւս՝ բայց միայն զայս ինչ խնդրեմ՝ ի քէն, զի զնաթան քեռորդին իմ որ է որդեգիր ինձ և աշակերտ, հրամանաւ քո տացես ինձ • զի ուսուցից նմա զպակասորդսն խրատուց իմոց՝ զոր յառաջագոյն ետու նմա • Եւ հրամայեաց թագաւորն տալ զնաթան՝ ի ձեռս իմ, և ասաց՝ զոր ինչ կամիս արա՞ դմա :

Աւես կալայ զնաթան, և տարայ ՚ի տունս իմ. և սկսայ ասել ցնա այսպէս : Որդեակ իմ նաթան՝ զառաջին խրատսըն զոր ետու քեզ քաղցրութք՝ «չ պահեցեր ՚ի մտի քում, այլ կորուսեր • արդ՝ այժմ ուսուցանեմ քեզ դառնութք : Եւ կապեցի զնա երկաթի կապանօք, և եղի ՚ի պարանոց նորա հինգ հարիւր լիտր երկաթ, և յանձնեցի զնա բելիար ծառային իմոյ • և հրամայեցի առնուլ թուղթ և գրիչ ՚ի ձեռին իւրում, զի ՚ի մտանելն և յելանելն իմ զոր ինչ առնիցեմ նաթանայ՝ գրեսցէ : Եւ ետու պատուէր նմա, զի զհաց և զջուր տացէ նմա այնքան՝ որ ոչ մեռանի և ոչ զուարթանայ :

Ա, ախ և յառաջ զարկի բեր ՚ի թի-
կունս նորա և ասացի :

Ո՞րդեակ իմ նաթան՝ ունկն մարդոց
եթէ ոչ լուիցէ, զթիկունսն ծեծելով
լսեցուցանեն :

Ո՞րդեակ իմ նաթան՝ յաթոռ փառաց
նստուցի զքեղ. այլ դու յաթոռոց իմց
ընկեցեր զիս և կործանեցեր : Խօսեցաւ
ընդիս նաթան և ասաց, զիարդ ուրացար
զքեռ որդին քոյ : Եւես ասացի, ո՞րպէս
ոչ ուրացայց . քանզի եղեր ինձ որդեակ՝
որպէս կարիքն այն որ եհար զասեղն, որ
ասղան ծայրն չար էր քան զիւրն . և
դարձել եհար զոտից ուղտուն, որ հար-
եալ զթաթն կարձին՝ սատակեաց զնա :

Ո՞րդեակ՝ զի եղեր ինձ որպէս վայրե-
նացեալ եղն, որ էարկ զտորդն, և անկաւ
վարոցն, և վիրաւորեցաւ իւր ոտքն :

Ո՞րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այծն
այն՝ որ ուտէր զտորոնն, և ասէր՝ ես ՚ի
կենդանութեան իմում ուտէմ զքեղ,
թող յետոյ հանեն զքո արմատն, և ներ-
կեն զմորթին իմ :

Ո՞րդեակ՝ զի եղեր ինձ ո՞ր այրն այն՝
որ ձգեաց նետ դէպ ՚ի յերկինս թէպէտ
ոչ կարաց հասուցանել, այլ զանօրէնուին
շահեցաւ, և դարձաւ նետն ՚ի գլուխն
իւր, նցնողէս և դու կտմեցար սպանա-

նել զիս, այլ անմեղուն իմապրեցոյց զիս։
Որդեակ՝ զի թէ ագի խողին ութն
կանգուն երկայն լինի, ՚ի տեղի ձիոյն
ոչ կարէ լինիլ։

Որդեակ՝ զի եղեր ինձ ող արջն այն՝
որ հանդիպեցաւ եշոյ միոյ, և ասաց ող-
ջյն ընդ քեզ. և ասաց էշն՝ այդ ողջյ-
նըդ ՚ի վեզն տեառն իմոյ եղիցի, որ ար-
ձակեաց զիս ՚ի մսրէն, և ես եկի և հան-
դիպեցայ քեզ, և տեսի զքո չար երեսդ։

Որդեակ՝ զի եղեր ինձ ող որոգայ-
թըն այն՝ որ թաղեալ կայր ՚ի յաղըն,
և եկեալ Ճնձղուկ մի ասէ, զինչ կայցես
աստ. ասէ ակնատն՝ աղօթս առնեմ առ-
ած. ասէ Ճնձղուկն՝ զինչ է այդ ՚ի բե-
րանդ. ասէ ակնատն՝ քաղցելոց հաց. և
վաղեաց Ճնձղուկն առնուլ զնացն ՚ի
յակնատէն, և ակնատն անկաւ ՚ի վեզն
նորա. և ասէ Ճնձղուկն՝ թէ այդ
է քաղցելոց հացն. ապա և ած այսպէս
լէ աղօթից քոց։

Որդեակ՝ զի եղեր ինձ ող շունն այն՝
որ դողայր ՚ի ցրտոյն, և եմուտ ՚ի հնոց
բրտին. և յորժամ տաքացաւ՝ սկսաւ
հաջել ընդ երես բրտին։

Որդեակ՝ զի եղեր ինձ որոշ շունն
այն ագահ, որ ունէր հաց մի ՚ի բերա-
նըն՝ երթայր յեզեր գետոյն, և տեսեալ

շուն մի այլ՝ ՚ի մէջ ջըռն և հաց մի ՚ի
բերան նը, ձգեալ զիւր հացն ՚ի բերա-
նոյն, և անկաւ ՚ի ջուրն զի առցէ յայն-
մանէ հացն . և իբրև եհաս ՚ի մէջ գե-
տոյն՝ ոչ դշունն եղիտ և ոչ զհացն,
այլ խեղդեցաւ՝ և զրկեցաւ յիւր հա-
ցէն . նոյնպէս և դու զհացն իմ խլել
կամեցար՝ և զրկեցար դու ՚ի քո հացէն:

Եւ դարձեալ նաթան աղաչանօք ա-
սաց առիս՝ մեղայ քեզ հայր, այլ չգոր-
ծեմ զոր ինչ գործեցի . մի՛ չարաչար
տանջեր զիս: Եւ ես ասացի՝ ահա տամ
քեզ օրինակ մի. զի ոոկ ծառն այն՝ որ բու-
սեալ էր յեզր գետոյ միոյ, և մարդ մի
ծառայէր նմա . և յորժամ հասանէր
պտուղն՝ թափէր ՚ի գետն և կորուսա-
նէր, և դայր տէրն՝ ոչ գտանէր ըլ
պտուղն . և աշխատեցաւ այրն սյն երկու
և երեք տարի, այլ ՚ի հասանիլ սկտղոյն
թափէր ՚ի ջուրն, և ոչ շահէր ՚ի նմանէ.
և ապա կտրեաց զծառն, և ձգեաց ՚ի
ջուրն ասելով՝ այսքան աշխատեցայ,
զինչ շահէցայ մինչև ցայժմ որ այսու-
հետեւ ես շահէցայց: ՚ի ոյնպէս և դու
եղէր ինձ . զի յառաջագոյն այսչափ խը-
րատ ետու քեզ՝ և ոչ լուար . այժմ ես
չունիս լսել . վաս որոյ արժանի ես այդմ
չարչանացդ՝ մինչև մեռանիցիս: Եւ

ապա սպանի զնա , և բարձաւ չորս ՚ի
միջյ , և եղե խաղաղութեա : Արդ՝ զի՞նչ
մարդ՝ որ փոխանակ բարւոյն չար հա-
տուցանէ , իբրև զնաթան չարաչար մահ-
ուամք կորնչի . յորմէ փրկեսցէ զմեղ
քո ած մեր , և նմա փառք յաւիտեանս ,
ամեն :



Պատմութեա աղջկան և մանկան , և հարց մունք
նոցա ընդ միմեանս :

Այլ մի էր մեծատուն և իշխան ՚ի
քաղաքի միում , և ունէր բա-
զումգանձս , ոսկի և մարդարիտ անգին ,
և պատուական ակունս . և ոչ գոյր ՚ի մէջ
քաղաքին այնմիկ քան զնա աւելի մե-
ծատուն : Եւ ինքն ծերացեալ էր և
զաւակ ոչ ունէր . և հանապաղ աղաշէր
վա զաւակի առած՝ որ ետ նմա որդի
աննման և գեղեցիկ : Երբ մեծացաւ
տղայն՝ ետ զնա հայրն յուսումն իմաս-
տութեան : Եւ նա ուստւ զամ իմաս-
տասիրական բանս , և էր պատերազմօղ
անյաղթ . բայց յետոյ անկեալ ՚ի զեղ
խուե՝ սպառեաց զգանձս հօրն և մօրն ,

որք մնացին դատարկ : Վսաց որդին ընդ
հօրն և մօրն , կամիք հեռանալ յայս
երկրէս , և երթալ յօտար երկիր՝ յորում
ոչ ձանաշեն զմեղ . և անդ զամօթն ՚ի
բաց թողեալ մուղանամք և ապրիմք . և
ոչ մեք տրտմիմք , և ոչ մեր չարկամն ու-
րախանայ ՚ի վը մեր : Վսացին ծնողքն ,
դու գիտես որդեակ : Խառ մանուկն
զհայրն և զմայրն , և գնաց ՚ի հռօմ քա-
ղաք , յորում կայր թագաւոր մի բարի
և խմաստուն : Խւ թագաւորն այն յորս
էր ելեալ . և երբ եկն յորսցն՝ եմուտ
մանուկն առ թագաւորն , եղ ծունը և
կանգնեցաւ : Խւ սկսաւ թագաւորն խօ
սիլ ընդ մանկանն և տսաց , զինչ խընդ-
րես յինէն , զոր տացից քեզ : Վսաց մա-
նուկն , թագաւոր՝ յաւիտեան կաց .
ես երկու ծառայ ունիմայր և կին՝ զոր
կամիմ վաճառել , բայց խնդրեմ զի առ-
ցես զնոստ . ասաց թագաւորն՝ բեր , և
ես առից : Գնաց մանուկն առ հայրն և
մայրն , և ասաց ցնոստ թէ ինչ պատեհէ
ինձ այնպէս առնեմ , այսինքն՝ դուք
զատ ասլրիք , և ես զատ . ասացին ծնող-
քըն , դու գիտես որդեակ : Վսաց մա-
նուկն , կամիմ վաճառել զձեղ այս թա-
գաւորիս , որ հասուցանէ ձեղ բարի ,
և ինձ ես բարի լինի . բայց ջանամ շու-
տով

առվ աղատելզձեղ, արդ զինչ հրամայեք
ով ծնօղք իմ. և նոքա ասացին՝ դու
գիտես որդեակ : Եւ էառ մանուկն ըզ
հայրն և զմայրն, և գնաց առ թագաւորն:
Ասաց թագաւորն ցմանուկն թէ քանի՛
վաճառես. ասաց մանուկն ցթագաւորն,
տուր ինձ վասն այս կին ծառայիս գին՝
լաւ ձի և զէն իւր սարօքն : Եւ վ՛ այր
մարդոյն գին՝ տուր ինձ հանդերձ և
զգեստ պատուական :

Հրամայեաց թագաւորն՝ զինչ որ
մանուկն խնդրեաց վ՛ իւր ծառայիցն
գին, լրապէս ետուն նմա և թուր մի ոս-
կի գօտւով . և էառ մանուկն զամ, զոր
պարգեեաց նմա թագաւորն : Ապա ա-
սաց թագաւորն մանկանն, զայլ ինչ
կամիս խնդրել յինէն՝ խնդրեա զոր տաց
քեղ. ասաց մանուկն, հարիւր ֆլորի և
տուր ինձ վասն ծախուց ձանապարհի. Հրամայեաց թագաւորն և ետուն նմա:
Դարձեալ տսաց թագաւորն, զայլ ինչ
խնդրես յինէն. ասաց մանուկն, հրաման
տուր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայ-
իցն՝ զորս յինէն գնեցեր, և առնում
զօրհնութիս ՚ի նոցանէ :

Այնժամ ծանեաւ թագաւորն՝
թէ նը ծնողքն են ծառայքն այնոքիկ, ետ
հրաման մանկանն . և նու գնաց և անկաւ

յոտս ծնողացն և ասաց մի՛ հոգայք ,
եթէ ած կամենայ՝ զձեղ շուտով ազա-
տեմ . և ծնողքն օրհնեցին զղաւակն
իւրեանց : Եշտ մանուկն յիշեաց զած , և
մեկնեցաւ՝ ի ծնողացն լալով . և գնաց զե-
րիս տիւս և զերիս գիշեր՝ ի մեծ դաշտ մի՛:
Եշտ՝ ի գնալն հանդիպեցաւ ընտիր մանկն
միոյ , բարեւեցին զմիմեանս , և ընկերացան
՝ ի ճանապարհին : Եշտ երբ ընկերացան՝
միւս մանուկն ծանեաւ զխորհուրդ ման
կանն , որ զհայրն և զմայրն վաճառեալ
էր : Եշտ ասաց նմա , գիտացի՞ր եղբայր՝
զի իմ թագաւորն զիս խիստ սիրէ , վա-
րոյ թուղթ աւետեաց ետ ինձ զոր տա-
նիմ առ կղզեաց թագաւորն , և առնում
՝ ի նմանէ պարգևս մեծամեծս . այլ տե-
սանեմ՝ զքեզ՝ զի դու խոհեմ մանուկ
ես , և լաւ ձիաւոր քան զիս , առ ըզ-
թուղթն և դու տար զայն թագաւո-
րին , զի քեզ շատ բարիս պարգևէ ,
Եշտ զինչ ած ինձ արժանի արարեալէ՝
քեզ լիցի . բայց ես աստ սպասեմ , մինչև
դու գաս առիս : Եշտ մանուկն զայն
թուղթն և եղ՝ ի մէջ՝ ի սեկէ գործեալ
քսակին , և գնաց ՝ ի ճանապարհն իւր
՝ ի մեծ դաշտ մի՛ : Եշտ յանկարծակի յի-
շեաց զհայրն և զմայրն և ելաց , և՝ ի
շատ հառաջանացն ննջեաց ՝ ի վերայ ձի-

ոյն . և ձին ՚ի ճանապարհէն ելեալ ՚ի
դուրս՝ կորոյս ՚ի քնոյն զՃանապարհն :
Եւ յանկարծակի զարթեաւ ՚ի քնոյն ,
և էր ծարաւեալ ինքն և ձին , և ջուր ոչ
գցը . այլ մոլորեալ շրջէին : Եւ եգիտ
ջրհոր մի հին ժամանակաց , և ՚ի ծարա-
ւոյն կամէր ՚ի ջրհորն անկանիլ . ապա
եհան ՚ի սեկէ գործեալ քսակն՝ յորում
եղեալէր զթուղթն , կապեաց ՚ի նա
պարան , և եհան նովաւ ջուր ՚ի ջրհո-
րոյ , և ըմպեաց ինքն և արբոյց ևս ձիոյն
իւրոյ . և ապա սկսաւ ինքնին կարդալ
զթուղթն զայն , որ գրեալէր այսպէս:
յս անուն կղզեաց թագաւորի ող-
ջոյն սիրոյ . գիտացիր Եղբայր , զի այդ
թղթաբերդ անհաւատ մարդ է , և մեզ
նենդաւոր . դա մեծ էր առ մեզ , և ամ-
գանձուց սպառօղ . մերձեցաւ առ դուս-
տըր իմ , և նվաս գործեաց ընդ նմա , և
ես կամեցայ զինքն կորուսանել . այլ
պատրաստեցի քեզ , զի մի՛ ոք խոյտա-
ռակութին մեր իմասցէ աստ . վարոյ
առաբեցի առ քեզ՝ կորուսանել զսա ՚ի
սէր Եղբայրութե մերոյ :

Երբ ծանեաւ մանուկն զայս՝ պա-
տառեաց զթուղթն և գոհացաւ զոյ , և

օրհնեաց զիւր ծնօղքն , որ զինքն ու-
սումնագէտ արարին , զի գիտութքն
իւրով ապրեցաւ 'ի մահուանէ . և աղա-
չեաց զամ՝ ցցց տալ ինքեան ղջանա-
պարհն : Ո ի մոլորեալ շուրջ գայր ըզ
տիւ և զգիշեր , և հարցանէր զանուն
թագաւորին , և զայն քաղաքն՝ յոր գլ-
նալոց էր . և առաջնորդեաց աճ նմա-
ղջանապարհն , և եմուտ ՚ի քաղաքն յայն:
Եւ էր այն քաղաքին թագաւորն մեծ ,
և քաղաքն բարելի , յորում իջելանեցաւ
մանուկն ՚ի տան պառաւի միոյ . և յետ
հանգչելոյ սակաւիկ ինչ՝ սկսաւ հարցա-
նել ցպառաւն զորպիսութէ քաղաքին
և թագաւորին : Եւ պառաւն ասաց թէ
այս քաղաքիս թագաւորն դուստր մի
ունի խիստ աննման և գեղեցիկ և իմաս-
տուն՝ որ ոչ գոյր իւր նման . բայց ՚ի ման-
կութենէն մինչեւ ցայժմ զիննսուն և ինն
որդի թագաւորի ետ սպանանել : Ասաց
մանուկն , վա ինչ պատճառի ետ սպանա-
նել : Ասաց պառաւն , որդեակ՝ դուստրն
այն ասէ թէ ով զիս յաղթէ իմաստու-
թք , ես զնտ առնեմ ինձ այր . և թէ
ես յաղթեմզնա՝ տամ սպանանել զինքն :
Եւ այդ պատճառաւ յաղթէ զթագա-
ւորաց որդիսն և սպանանէ . և զգլուխսն
նց ՚ի վը բարձրաւանդակի իւրոյ ցցեալ

կանգնեցուցանէ զի բարձրաւանդակն
իւր զբոլոր քաղաքն տեսանէ . և՝ի նմա
ռւնի աթոռ ոսկի՝ ակամք և մարդարտով
շինեալ, անդ նստի և հայի առ մարդիկ
՚ի տեղւոջէն ՚ի վայր . զի մարդ բնաւ
զինքն չկարէ տեսանել: Եւունի պա-
ռաւ մի թարդման՝ նա խօսի զհետ մար-
դց, որ առ ինքն մտանեն:

Եւ ՚ի լսել մանկանն զբանս զայսոսիկ
՚ի պառաւոյն զգիշերն ողջոյն ոչ ննջեաց
՚ի քուն . և երբ լուսացաւ՝ գնաց ՚ի բաղա
նիք, և զգեցաւ զիւր ոսկեկար հնդերձն,
և անուշահոտեցաւ մշկով և բուրկենիւ:
Եւ գնաց ՚ի թագաւորի դստեր դուռն.
և խնդրեաց հրաման մօտ առ թագու-
հին մտանել: Եւ մարդիքն որ ՚ի դուռն
էին՝ խրատ ետուն մանկանն, թէ պատ-
րաստ կաց, զի շատ թագաւորի որդին
ետ ըսպանանել:

Եւ երբ եմուտ մանուկն ՚ի ներս՝ բա-
րեեաց զաղջիկն . և նա հրամայեաց սպա-
սաւորացն իւրոց, եղին զոսկեղէն աթոռ
յորոյ վր նստաւ մանուկն: Եւ դիտաց
աղջիկն թէ վր պատասխանի տալոյ հարց-
մանն իւրոյ եկեալէ մանուկն այն, վր
որոյ աղդ արար հօրն և մօրն իւր և կար-
դացողաց և իշխանաց քաղաքին, որք
եկեալ ժողովեցան ՚ի միասին անդ:

Եւ ասաց աղջիկն իւր պառաւ թարգ-
մանին՝ թէ ասա մանկանդ այդմիկ՝ կամի՞-
ըմպելզբաժակ մահու ՚ի կթղայէն յայն
մանէ յորմէ ետու ըմպելընկերացն իւ-
րոց։ Եւ ասաց մանուկն ցթարգմանն
այն՝ թէ եղեցին կամք ո՞ն օրհնեալ, զի
որպէս կամի՝ այնպէս առնէ ո՞ր։

Այնժամասաց աղջիկն առջի հօրն
և մօրն և կարդացողաց և իշխանաց քա-
ղաքին, եթէ մանուկս այս տացէ պատաս
խանի հարցմանս իմց, առցէ զիս ՚ի կնուն
իւր ապա թէ ոչ՝ ևս տացից սպանանել
զնա, վս որոյ և դուք ամենեքին եղերուք
վկայ քանիցս այսոցիկ։ Եւ մանուկն ևս
հաճեալ հաւանեցաւ խօսից աղջկանն,
և կացոց զնո՞ վկայս։

Հարցմանք . Ա:

Եսէ աղջիկն . ովէ քո հայրն,
Եսէ մանուկն . հողմն և հուրն;
Եսէ աղջիկն . ովէ քո մայրն;
Եսէ մանուկն . հողն և ջուրն;
Եսէ աղջիկն . յորում կենդանակերպի
ծնեալ ես;

Եսէ մանուկն . ՚ի խոյ կենդանակերպի;
Եսէ աղջիկն . ովէ քո դայեակն։

Ասէ մանուկն . այն է իմ դայետկն՝ որ
զիս տեսանէ , և ես զնա ոչ տեսանեմ . նա
զիմձայնն լսէ , և ես զնը ձայնն ոչ լսեմ :

Ճշտաց աղջիկն՝ թէ հարց պատաս
խանիքս զոր արարաք , են խաղալիկ տր-
դայոց . ապա թողցուք զայնպիսիս , և
նորոգ սկսեսցուք առնել հարց պատաս-
խանիս :

Ասէ աղջիկն . որոյ արիւնն էր այն՝ որ
անմեղ սպանուք հեղաւ՚ի վը երկրի :

Ասէ մանուկն . տբելի արիւնն էր այն՝
զոր եղբայրն իւր կայէն սպան :
Ասէ աղջիկն . ոյք էին որք ոչ ծնան ՚ի
մօրէ , բայց ողջ մնացին ՚ի վը երկրի , և
յետոյ մեռան :

Ասէ մանուկն . աղամ և եայ էին , և
խցն այն կախեալ՚ի սաբեկայ ծառոյն ,
զոր առեալ աբրահամ փոխանակ որդւոյ
իւրոյ իսահակայ արար ողջակեզ :

Ասէ աղջիկն . ոյք էին որք ծնան ՚ի հօրէ
և ՚ի մօրէ , և ոչ մեռան :

Ասէ մանուկն . ենովք և եղիտ էին , որք
մարմնով վերացան յերկինս , և կան անդ-
կենդանի մինչե յաւուրս նեռին :

Ասէ աղջիկն . այն ինչ ծառ էր՝ որ ունէր
ճիւղ և տերեւ , և յետոյ ՚ի միս և յարիւն
փոխեցաւ :

Վակ մանուկն . այդ մովսէս մարգարէի
գաւաղանն էր , որ մինչ ծառ էր՝ ունէր
ձիւլ և տերե . և երբ օձ դարձաւ , միս
և արիւն եղե :

Վակ աղջիկն . ովկէր այն՝ զոր առաքեաց
ած ող դեսպան առ ադամ , որ ոչ հրեշ-
տակ էր և ոչ մարդ :

Վակ մանուկն . երբ կայէն սպան զեղ-
բայրն իւր զաքէլ , ադամ հայրն իւր ոչ
գիտէր թէ զինչ արասցէ զմարմինն մե-
ռելցն . վաս որոյ առաքեաց ած զերկու-
ագուաւս իբր դեսպան՝ որ եկեալ առ ա-
դամ մինն զմիւսն սպան և թաղեաց ՚ի
հող . ապա և ադամ ուսեալ ՚ի նմանէ
փորեաց զգետինն և թաղեաց զմարմինն
որդւոյ իւրոյ աբելի :

Վակ աղջիկն . ովկէր այն՝ որ մեռաւ և
մարմինն իւր ոչ թաղեցաւ ՚ի հող , և հո-
գին ոչ գնաց առ ած :

Վակ մանուկն . այդ ղովտայ կինն էր ,
որ յելտնելն յերկրէն սողոմացւոց ընդ-
դէմ հրամանին այ դարձաւ և հայեցաւ
յետս և եղե արձան աղի . վաս որոյ ոչ մար-
մին նը ՚ի հող եմուտ , և ոչ հոգին առ
ած գնաց :

Վակ աղջիկն . ովկէր այն՝ զի երբ տա-
րան զնա լինել կերակուր գաղանաց ,
գաղանքն թողեալ զնա՝ զտանօղն կերին :

Ասէ մանուկն . այդ դանիել մարգարէն
էր , զոր տարան կերակուր առխւծուց ,
այլ դաղանքն թողեալ զնա՝ զտանօդն
կերին :

Ասէ աղջիկն . ովէլ էր այն՝ որ իբր ՚ի գե-
րեզմանի թաղեցաւ , և ինքն ողջ մնաց :
Ասէ մանուկն . այդ յոնչան մարգարէն
էր՝ զոր ձուկն եկուլ , բայց ինքն ՚ի փոր
ձկան ողջ մնաց , և եղեւ շարժուն և
գնայուն :

Ասէ աղջիկն . ովէլ էր այն՝ որ մինչ կեն-
դանի էր , յարդ և գարի ուտէր և ջուր
ըմպէր . և երբ մեռաւ , միս և արիւն
մարդոյ կերաւ և ըմպեց :

Ասէ մանուկն . այդ այն իշոյ ծնօտն
էր , զոր մանուկն սամփաօն էառ ՚ի ձե-
ռին իւր և նովաւ սպան զհաղար մարդ :
Ասէ աղջիկն . որոյ մարմինն էր այն՝ զոր
էդին ՚ի հող , հողն ասաց թէ ես կոյս եմ :
Ասէ մանուկն . այդ աբելի մարմինն էր ,
որ եղեւ սկիզբն մտանելոյ ՚ի հող . զի մին-
չեւ ցայն չեւ էր թաղեալ ՚ի վերայ երկըն
մարմին մարդոյ :

Ասէ աղջիկն . ովէլ էր այն՝ որ ոչ հըեշ-
տակ է և ոչ մարդ և ոչ կենդանի , բայց
՚ի տասն և հինգ ամ թագաւորէ , և ՚ի
տասն և վեց ամին թագաւորուեն իւրոյ
հիւանդանայ , և յերեսուն ամին մեռա-
նի , և դարձեալ ողջանայ :

Ասէ մանուկն . այդ լուսինն է՝ որ մինչ
օրն ամսոյ լինի տասն և հինգ՝ լրումն առ-
նու , և ’ի տասն և վեց օրէն սկսոնի սա-
կաւ առ սակաւ նուազիլ մինչև ’ի քսան
և ինն օրն , և ’ի լրանալ երեսուն աւուր
ամսոյն՝ ոչ երեխ պայծառ լոյս նը որպէ
զառաջինն՝ իբր թէ մեռանի , և ապա
անդէն սկսանի կենդանալ :

Ասէ աղջիկն . այն ինչ ծառ է՝ որ ունի
երկոտասան ձիւղս , և իւրաքանչիւր
ձիւղք՝ երեսուն տերես , և պտուղն
իւր սեաւ և սպիտակ է :

Ասէ մանուկն . այդ ծառն ցուցանէ ըդ
տարին , և երկոտասան ձիւղքն՝ զերկո-
տասան տմիսս տարւոյն , և երեսուն տե-
րեքն՝ զերեսուն օրն ամսոյն , և պտուղն
իւր սեաւ և սպիտակ՝ զգիշերն և զտիւն :
Ասէ աղջիկն . այն ինչ երկու իրք են
հակառակ միմեանց՝ և զկնի միմեանց
ընթանան , և ոչ կարէ մինն զմիւսն
ըմբռնել :

Ասէ մանուկն . այդ տիւն և գիշերն է՝
որ միշտ ներհակք են միմեանց . զի մինն
զմիւսն ’ի բաց վարէ յինքենէ՝ կամ
ծագմամբ արեու լուսաւորելով զոլորտս
ու տիեզերաց , և կամ խաւարաւ ծած-
կելով զերեսս երկրի :

Ասէ աղջիկն այն ինչ թռչուն է՝ որ ու-
տէ

տէ դդալարիս զյարդ զցորեան և ըշ-
գարի, և սպառէ :

Ասէ մանուկն . այդ մորեխն է՝ որ է
փոքր կենդանի ինչ թևաւոր, և թռչն
և ոստոստէ և ձարակեալ ծախէ դդա-
լարիս, և թռուցեալ ծածկէ զերեսս
երկնից բազում մղոնիւք :

Եւ ապա տեսեալ աղջիկն զհամար-
ձակուի մանկանն՝ զոր աներկիւղ տայր
պատասխանի հարցմանն իւրոյ, ասաց
ցնա՝ արի Ել և գնա աստի ով մանուկ
դու, զի թէպէտ այսօր աղատեցար ՚ի
ձեռաց իմոց՝ այլ ՚ի վաղիւն տեսցուք
թէ զիարդ կարիցես աղատիլ : Եւ մա-
նուկն ասաց նմա՝ թէ նոյն ածն որ
փրկեաց զիս այսօր ՚ի ձեռաց քոց, կա-
րողէ ևս ՚ի վաղիւն փրկել. և զայս ասա-
ցեալ գնաց խնդալով առ իջեվանսն իւր
մօտ առ պառաւն, որ լայր և կոծէր
զանձն դտուն արտասուօք, զի կարծէր
թէ մանուկն մեռեալ է . ապա երբ ետես
զնա ողջ՝ խիստ ուրախացաւ, և ասաց
ցմանուկն՝ բարի եկիր դու որդեակ,
ահա այսօր նոր ծնար յարգանդէ մօր
քո : Եւ ամենեքին ևս որք տեսին ողջ
զմանուկն՝ զարմացան յոյժ . զի մինչեւ
ցայն ոչ ոք էր ՚ի մարդկանէ ապրեալ ՚ի
ձեռաց թագուհոյն :

Եցւ ՚ի լուսանալ տուաւօտուն գնաց
մանուկին ՚ի դուռն թագուհւոյն, և բա-
րեւեաց զնա . և նա հրամայեաց սպասա-
ւորացն իւրոց , եղին զնոյն զոսկեղէն
աթուն յորոց վը նստաւ մանուկն : Եցւ
ասաց աղջիկն , բարի եկիր դու մանուկ՝
ունիս այսօր ևս կարողութի տալ պա-
տասխանի հարցմանս իմց : Եցւ նա ա-
սաց՝ թէ մեծ է զօրուին և կարողուին
այ , զի անհնարինքն ՚ի մարդկանէ՝ հնա-
րաւորք են առ ած . վը որոց հրամայեա
ով թագուհի զինչ և կամիս հարց :

Հարցմանք . Բ :

Վսէ աղջիկն . ովէր էդն այն՝ որ ծնաւ
յորձէն :

Վսէ մանուկն . այդ ևայ էր՝ որ ծնաւ
հրամանաւն այ ՚ի կողիցն ադամայ :

Վսէ աղջիկն . ովէր այն որ սպան զմարդ՝
գնաց հոգի իւր յարքայութի , և մեռա-
նողին՝ ՚ի դժոխիքն :

Վսէ մանուկն . այդ դամեք է՝ որ սպան
զկայէն , գնաց հոգի իւր յարքայութի , և
կայէնին՝ ՚ի դժոխիքն . զի անմեղ սպանու-
թը սպանեալէր զեղքայըն իւր զաքէլ :

Վսէ աղջիկն . ովէր այն՝ զոր արկին ՚ի
գուրք կերակուր գազանաց , և նոքա ոչ
կերին զնա :

Ասէ մանուկն . այդ յովսէփ գեղեցիկն
էր՝ զոր եղբարքն իւր տարեալ ընկեցին
՚ի գութ լինել կերակուր գաղանաց ,
բայց գաղանքն ոչ կերին զնա , և ինքն
ողջ մնաց :

Ասէ աղջիկն . ովէր այն՝ որ զմերկութիւն
հօրն յայտնեաց եղբարց իւրոց , և յետոյ
ինքն ընկալաւ ՚ի հօրէն իւրմէ զանէծս :
Ասէ մանուկն . այդ քամբէր որ ետես զնոյ
զհայր իւր արբեալ ՚ի գինւոյ զի մերկ
ննջէր ՚ի տան՝ և ոչ ծածկեաց զմերկու-
թին , այլ յայտնեաց եղբարցն իւրոց .
վս որոյ ընկալաւ ինքն զանէծս ՚ի հօրէն ,
և եղբարքն իւր՝ զօրհնութիս . զի նոքա
զերեսս իւրեանց յետս ունելով ծածկե
ցին զմերկութիւն իւրեանց :

Ասէ աղջիկն . ովէր մանուկն այն՝ զոր
մայրն իւր եղեալ՝ ՚ի մշջ տապանակի ըն-
կեց ՚ի գետն , և նա ողջ մնաց :

Ասէ մանուկն . այդ մովսէս մարգարէն
էր՝ զոր մինչ մանուկ էր իբր չորից ամսոց՝
մայրն իւր վս ահին փարաւոնի եղ ՚ի մշջ
պրտուեայ տապանակի ծեփեալ կըպըա-
ձիւթուլ ընկեց զնա ՚ի գետն , զոր տես-
եալ դուստրն փարաւոնի հանեալ՝ ՚ի գե-
տոյն՝ եթաց զտապանակն , և էառ զմա-
նուկն ՚ի միջոյ նը յորում լայր :

Ասէ աղջիկն . ովէր այն որ փոքր էր մարմ-
նով ,

նով, և մանուկի հասակաւ, և քան զինքն
զօրեղն և մեծն՝ միով քարամբ սպան։
Վաէ մանուկն . այդ դաւիթ մարգարէն
էր, զի երբ փոքր էր՝ ի մէջ եղբարց իւրոց՝
եւ ընդ դէմ գողիադու տուն զօրաւորի
և հսկայի, և միով պարսաքարիւ եհար
զձակատ նը, և ընթացեալ՝ ի վը նը էառ
զառւսեր նորին, և եհատ զգլուխն։

Վաէ աղջիկն . այն ինչ ստորին տեղի է՝
որ ՚ի ստեղծմանէ աշխարհի ոչ տեսեալէ
զլոյս արեւու։

Վաէ մանուկն . այդ ծովու յատակն է՝
յորում ժողով բաղմութե ջուրց կու-
տակեալ՝ ոչ երբէք տեսանէ զձառագոյ-
թըս արեւու։

Վաէ աղջիկն . այն ինչ երկու իրք են՝ որք
քանի ապրին այնքան մեծանան մինչ զի
ոչ գտանի աւելի մեծ քան զնոսա։

Վաէ մանուկն . մինն ձուկն է՝ և միւսն
օձն, զի ձուկն ոբքան անանի ՚ի ջուրս՝
այնքան մեծանայ, և ոչ գտանի աւելի
մեծ քան դնտ . նոյնպէս և օձն՝ մինչ
սկսանի սողալ՝ ի վերայ երկրի, այնքան
առաւել աճի և մեծանայ և ոչ գտանի
քան զնտ աւելի մեծ։

Վաէ աղջիկն . այն ինչ երկու սիրելիք են՝
որք տաեն զմիմեանս։

Վաէ մանուկն . այդ հոդին և մարմին
մար

մարդոյ է , զի մինչ միաւորեալ են ընդ
միմեանս՝ սիրեն զիրեարս . բայց երբ բա
ժանին ՚ի միմեանց , ատեն զիրեարս :

Վաէ աղջիկն . այն ինչ երկու իրք են՝ որք
առնեն երբեմն զմարդն աղքատ , և դար
ձեալ հարուստ և փարթամ:

Վաէ մանուկն . ապրշմի ճճին է և խելքն
մարդոյ . զի ճճին այն երբեմն տայ սա-
կաւ զապրումորովտեարքն իւրեան լի-
նին աղքատ , բայց երբեմն տայ առատ
քան զոր ակն ոչ ունին , և լինին անդէն
հարուստ . նոյնպէս և խելքն մարդոյ եր
բեմն սխալեալ յառետուրս՝ տայ վնաս
բազում , և առնէ զմարդն աղքատ , այլ
անդրադարձ խորհրդովուղղեալ՝ առնէ
հարուստ և փարթամ:

Վաէ աղջիկն . այն ինչ տուն է՝ որոյ մէջն
լի է ոսկւով՝ և դուռն նո՞ շրջապատեալ
է արծաթով , բայց երբ մի կողմն որմոյ
իւրոյ արատաւորի և քակի , ոչ կարեն
շնուրզնա թէ և ճարտարք ամ աշխարհի
՚ի մի եկեսցեն :

Վաէ մանուկն . այդ ձուն է յորոյ մէջն
եղեալ գեղնուցն՝ նման է ոսկւոյ , և ՚ի վո՞
նո՞ շրջապատեալ կեղեն՝ նման է արծա-
թոյ . սակայն երբ խորտակի ինքն , ոչ ոք
՚ի մարդ կանէ կարէ շնուր լոյն :

Առ ապա հայեցեալ աղջիկն ՚ի համար-
ձակ և յաներկիւղ պատասխանիս ման-
կանն ասաց ցնա արի Եւ և գնա աստի
մանուկ դու . և թէպէտ այսօր աղատե-
ցար ՚ի ձեռաց իմոց , բայց ՚ի վաղեւն տամ
քեզ ըմպել զբաժակ մահու որպէտու
ըմպել ընկերաց քոց . և այսպէս կամէր
ահ արկանելնմա : Եւ մանուկն ոոպէտ յա-
ռաջագոյն ասաց աղջկանն , զնոյն այժմ
երկրորդեաց , և Եւ անտի և գնաց խնդա
լով ՚ի տեղի իւր :

Եւ ընդ առաւօտն յորժամ արեգակն
յերկիր ծաւալեաց զւոյս իւր , գնաց
մանուկն ՚ի դուռն թագուհոյն , և ետ
քարե նմա և ասաց՝ թէ գիշերս այս բար
եաւ լուսացաւ քեզ : Եւ հրամայեաց
աղջիկն և եղին զոսկեղէն աթոռն նըս-
տաւ մանուկն : Եւ ասաց աղջիկն , ափ-
սոսամ և ցաւիմ ՚ի վը գեղեցիկ մանկուն
քո , զի այսօր եթէ ոչ կարիցես տալպա-
տասխանի հարցմանս իմոց՝ վաղվաղակի
տամ ածել զսուր ՚ի պարանոց քո : Եւ
մանուկն յաւէտ քան զառաջնն համար-
ձակ և աներկիւղ ասաց ցնա՝ հրամայեա-
նը թագուհի զի՞նչ և կամիս հարց :

Վսէ աղջեկն . ոյք էին՝ որք անմշաս անցին գնացին լնդ մէջ ծովու իբր ընդ ցամաք , բայց զինի նոցա եկողքն ընկղմեցան ՚ի խորս ծովու և ոչ մնաց ողջ ՚ի նոցանէ և ոչ մի :

Վսէ մանուկն . իսրայէլացիք էին՝ զորառեալ ընդ իւր մարդարէն մովսէս ձրգեաց զդաւազան իւր ՚ի վլր կարմիր ծովուն , և պատառեալ զջուրն՝ անցոյց ընդցամաք . այլ զինի նոցա մտին եղիպտացիքն , և ծածկեաց զնան ջուր ծովուն և ընկղմեցան ամենեքին որպէս կապար ՚ի ջուրս սաստիկս :

Վսէ աղջեկն . ոյք էին՝ զորս արկին ՚ի մէջ հրցն բորբոքելոյ , և ոչ մերձեցաւ ՚ի նահնուրն , և մնացին ողջ :

Վսէ մանուկն . երեք մանկունքն էին՝ այսինքն սեդրաք՝ միսորք և նաբեղնագով , որք ոչ երկրպագին պատկերին ոսկւոյ . վլր որոյ ետ նաբուգոդոնոսոր կապել զձեռս և զոտս նոցա և արկանել ՚ի հնոց հրցն բորբոքելոյ , յորում գնային նոքա և օրհնէին և փառաւոր առնէին զանձ՝ որ ապրեցոյց վնան ՚ի հնոցէ անտի :

Վսէ աղջեկն . ովէր այն՝ զոր անձ ՚ի ձեռն սատանայի փորձեաց յոյժ , և նա տռնէր

Համբերութե այնպիսի անըմբերելի ար-
կածիցն սատանայի զոր ածէր ՚ի վե նը,
և ոչ երբէք մեղաւ ընդ դէմ կամացն այ;
Վսէ մանուկն . այդ յոր երանելին էր՝
առ որ թոյլատովն այ եկն սատանայ, և
քանիցս անգամ փորձեաց զնա պէս պէս
մահաբեր ինասիւք . զրկեաց զնա յընչեց
և ՚ի ստացուածոց, յորդւոց և ՚ի դստե-
րաց, և մերկ կողոպուտ նստոյց զնա չս-
րաչար վիրօք յաղբեւսս արտաքոյ քաղա-
քին, և ոչ կարաց տաւ մեղանչեւ ընդ
դէմ օրինացն այ . զի երանելին այն զայս
ասէր՝ թէ զամ ինչ զոր ունէի ես՝ ար
ետ ինձ, և այժմ ևս ար էառ ՚ի ձեռաց
իմոց, վա որոյ եղիցին կամք ան օրհնեալ;
Վսէ աղջիկն . ովէր այն՝ որ ոչ հրեշտակ
էր և ոչ մարդ, և ետ խրատ մարդոց +
Վսէ մանուկն . այդ բաղաամու էշն էր,
զի մինչ երթայր բաղաամ անիծանելզիս-
րայէլ տեսեաւ իշոյն զհրեշտակ այ, դար
ձառ ընդ դէմ բաղաամու, և նա եհար
զնա գաւաղանաւն իւրով . յայնժամ
երաց ած զբերան իշոյն, որ սկսաւ խրատ
տաւ և ասէլ ցբաղաամ՝ դարձիր յետս,
և մի՛ երթար անիծանել զիսրայէլ:
Վսէ աղջիկն . ոյք էին՝ որք ոչ հրեշտակ
էին և ոչ մարդ, և առաքեցան նման մար
թց՝ բերել յաշխարհէ զլուր աւետեց:

Ասէ մանուկն . ագռաւն և աղաւնին էր՝
զորս նոյ ՚ի տապանէ իւրմէ արձակեաց ՚ի
ցամաք՝ տեսանել թէ իցէ ցածուցեալ
ջուրն ջրհեղեղին յերեսաց երկրէ . բայց
աղաւնին միայն ունելով շիդ ձիթենւոյ
՚ի բերան իւր՝ դարձաւ առ նոյ տալով զա
ւետիս նուազելոյ ջրոյն յերեսաց երկրէ :
Ասէ աղջիկն . ովէր այն՝ որ էր մեծ և
անդրանիկ , բայց միով ոսպնեայ թանիւ
վաճառեաց զանդրանկութին իւր կրտսեր
եղբօր իւրում :

Ասէ մանուկն . այդ իսահակայ որդին
եսաւն էր՝ որ մինչ եկն ՚ի դաշտէ քաղ-
ցեալ , ասաց յակոր կրտսեր եղբայր իւր
որ եփեալ էր զթան , թէ տուր ինձ ձա-
շակել յայնմանէ . և նա ասաց ցնա՝ եթէ
ոչ վաճառեացես ինձ զանդրանկութիւնքո՞
ոչ կտրես ձաշակել ՚ի նմանէ . և եսաւ ոչ
երբէք համբերելով վաճառեաց միով
ոսպնեայ թանիւ զանդրանկութին իւր
յակորայ եղբօր իւրոյ :

Ասէ աղջիկն . ոյք էին՝ որը երբ մտին
յեգիպտոս՝ Եօթանասուն և հինգ ոգիք
էին , բայց երբ անտի չուեցին՝ վեց հար
իւր հազար ոգիք եղեն :

Ասէ մանուկն . յակոր նահապետն և ամ
որդիքն և դստերք իւր և որդիք որդւոց
իւրոց հանդերձ ընտանեօքն իւրեանց՝
125. Երբ-

Երբ ելեալ յերկրէն քանանացւոց մտին
յեգիպտոս , էին ոգիք եօթանասուն և
հինգ . այլ երբ անտի չուեցին յանա-
պատ ’ի սոկքովթ , եղեն վեց հարիւր հա-
զար այր :

Վսէ աղջիկն . դանբոյսն ’ի վը անծնին
բարձին , և անդադարին երդովքն ան-
ցուցին ,

Վսէ մանուկն . անբոյսն՝ աղն է , անծի-
նըն՝ ջորին է , անդադարն՝ ջուրն է , եր-
դիքն՝ կամուրջն է . քանզի դաղն երբ
բառնան ’ի վը ջորւոյ եթէ իցէ յանցս ճա-
նապարհի գետ ջոյ , անցուցանեն զջորին
ընդ կամուրջս ջուրց ’ի ցամաք :

Վսէ աղջիկն . այն ինչ երեք իրք են յորոց
մինն խուփ չունի , երկրորդն՝ սիւն , եր-
րորդն՝ կաթն :

Վսէ մանուկն . այդ երեքին բանքդ են
այսոքիկ . առաջինն՝ ծովն է որ ոչ ունի
’ի վը իւր խուփս , այսինքն՝ ծածկոցս .
երկրորդն՝ երկինքն է որ առանց սեան
հաստատեալ կայ . երրորդն՝ հաւն է որ
չունի զկաթն : Ի՞այց ընդ սոսին գոյ մի
ևս , և է այն մարդոց ձեռաց մէջն՝ յորում
ամենեին ոչ բուսանի մաղ :

Ճշ աղջիկն յայսոցիկ պատասխա-
նեցս մանկանն երկեաւ , և ասաց ցնա-
թէ դու մի տւելի ասացեր . զի ես երիս

բանս հարցի քեզ, և դու ղջորս ետուր
պատասխանի . արդ՝ արի Ել և գնա զի
այսօր ևս աղատեցար՚ի ձեռաց իմոց, բայց
՚ի վաղիւն տամ զպատիժ մահու կենաց
քոց ոնկ ետու ընկերացդ : Եւ մանուկն
ասաց ցնա՝ թէ ևս յարարիչն երկնի և
երկրի միայն ապաւինելեմ և ոչ՚ի մարդ
յուսացեալ, զի ոնկ կամի ար՝ նոյնպէս
առնէ . և զայս ասացեալ ելանտի և գնաց
ինդալով յիւր իջեվանքն :

Եւ ընդ լուսանալ առաւօտուն եկն
մանուկն ՚ի դուռն թագուհւոյն և բա-
րեւեաց զաղջիկն , և նա հրամայեաց և
եղին զոսկեղէն աթոռն և նստաւ մա-
նուկն : Եւ ասաց աղջկանն հրամայեա-
նվ թագուհի զայլ ինչ կամիս հարց :
Եւ նա ասաց ցնա՝ ով մանուկ դու՝
այժմ կարդն հարցման քո է . վասն որոյ
հարց զինչ և կամիս , և ես տացից քեզ
պատասխանի :

—
Այսէ մանուկն ովէր այն որ հարուստ
էր՝ աղքատացաւ , և յիւր աղքատուեն
զգեցաւ զհայրն իւր ոնկ զհանդերձ , և
հեծաւ ՚ի վը մօրն ոնկ ՚ի վը ձից , և գնաց
գտանել զինչն և զաղըրանքն իւր զո՞ր
կորուսեալէր , եհաս ՚ի վը իւր մահն .

և նա էտո զմահն ՚ի վը ձիոյն, և նովաւ
էտրը զջուր և արբոյց ևս իւր ձիոյն .
բոյց ինքն և ձին ևս երկոքին ՚ի միասին
ողջ մնացին :

Եւ աղջիկն ոչ կարաց տալպատասխանի
այսմիկ հարցման մանկանն , ասաց ցնա՝
այսօր գնա աստի , և ՚ի վաղիւն տամպա-
տասխանի . զի ոյդ գժուար զըսց է զոր
ասացեր : Եւ մանուկն ելեալանտի գը-
նաց խնդութք ՚ի տեղի իւր :

Ապա ասաց աղջիկն իւր պառաւ
թարգմանին՝ թէ առ ընդ քեզ երկուս
կամերիս ՚ի հաւատարիմ ծառայիցս , և
գնա ՚ի շուկայն և առ զսպիտակ հացս
և զդեր սադ մի և զքանի ինչ պարարտ
հաւս : Օսագն լից բրնձով խառնեալ
շաքարօք , և զհաւմն խորովեա . և առ
ընդ սոսին զերկու մաքուր ամանս և տուր
ընուլ ՚ի նո զանուշ և զանտպակ գինի , և
պատրաստեա զայսոսիկ ՚ի ծածուկ :

Եւ առեալ ընդ իւր թարգմանն այն
զծառայան՝ գնացին և զհրամանան թա-
գուշւոյն կատարեցին :

Ճաւ երբ ամենեքին ՚ի խոր քուն եղեն,
զդեցաւ աղջիկն զիւր պատուական ոս-
կեկար հանդերձն , և անուշահոտեցաւ
մշկով և բուրկենիւ և վարդէջով :

Եշտ առեալ ընդ իւր զերկու ևս գեղեցիկ աղջկունս՝ հրամայեաց ծառայիցն այնոցիկ և բարձին զոր ինչ հրամայեալն էր նց, և եկին առ իջեվան մանկանն, և բաղկացին զուռուն:

Եշտ մանուկն ասաց՝ ովէք որք բաղկացիկ զուռուն, և նոքա ասացին՝ թէ մեք աղջկունք եմք՝ ի դարպասէ թագաւորի, և ովք լուսինն՝ արեգական սիրոյ տէր է, նոյնպէս և մեք քո սիրոյ տէրն եմք. • Վարոյ կամիմք տեսանել միանգամ զքեզ: Եշտ ասաց մանուկն՝ գնացէք՝ ի բաց յինէն, գիտէ որ զի նա ոչ երբէք մտեալ է ընդ այս, և ես ոչ գիտէմ և ոչ ձանտչեմ զնա:

Եշտ նոքա յաւէտ աղաչանօք պնդեալ զերեսս իւրեանց՝ ասացին ցնա թէ ոչ երթամք աստի մինչեւ ոչ տեսանիցեմք զքեզ և զերեսս քո:

Եշտ մանուկն ոչ ինչ կարացեալ համբերել ողորմագին աղերսանաց նց՝ թոյլետ մտանել՝ իներս:

Այնժամաղջիկն հանեալ՝ ի գլխոյն զվարշամակս երաց զերեսս իւր, զոր մինչ ետես մանուկն՝ վառեցաւ՝ ի սիրոյ նը:

Եշտ աղջիկն նստաւ և նստոց ընդ իւր զմանուկն, և ասաց ցնա՝ ունին կերակուր ինչ ուտելոյ և գինի ինչ ըմպելոյ, բեր զնոսա զի կերիցուք և արքցուք.

ուրախ լիցուք . բայց զձայնն իւր փոխել
էր զոր ոչ կարաց ճանաչել մանուկին :
Եւնա ասաց՝ գիտէ որ՝ ոչ ունիմ ՚ի
ժամաւս յայսմիկ պատրաստեալ , զի ոչ
գիտէի զգալուսան ձեր առիս :

Եւ ասաց աղջիկն ծառայիցն իւրոց՝
բերէք զոր ինչ ունիք դուք . և նոքա բե-
րին զոր ինչ զհետիւրեանց առեալէին ,
և պատրաստեցին սեղան , յորում նստան
Երկոքին և սկսան ուտել և ըմակել և ու-
րախ լինել . բայց աղջիկն աւելի արբոց
մանկանն զանազակ գինիս , և առնէք
ընդ նմա քաղցր և մեղմ խօսակցութիս .
և խտաղեալ զնա՝ առաւել բորբոքու-
ցանէք զհուր ցանկութե նը առինքն ,
մինչ զի այլոչ ևս կարացեալ համբերել
ասաց աղջիանն հրամայեա զի ննշեսցուք
՚ի միասին :

Այնժամ ասաց աղջիկն ցմանուկն՝
Եթէ սիրես զիս՝ պատմեա ինձ զքանն
զայն զոր յերեկն ասացեր դստերն թա-
գաւորի : Եւնա ասաց՝ թէ չունիմ
այժմ կարողութի մեկնելոյ քեզ զայն ,
մանաւանդ երկնչիմ իսկ՝ զի յասելն ի-
մում զայն մահու մեռանիմ . վասն որոյ
զայլ ինչ բանս հարց զըսց տացից պա-
տասխանի : Եւ աղջիկն Երդուաւ յած՝

թէ մինչոչ լսեմ ՚ի քէն զբանն զայն ,
ոչ կատարեմ զկամս քո , և սկսաւ խաղալ
զհետ նը : Եւ մանուկն առաւել քան
զհուր վառեալ բորբոքեալ ՚ի սիրոյ աղ-
ջբկանն և արքեալ ՚ի գինոյ յաղթեցաւ ,
և սկսաւ ասել զպատասխանին հարցմանն
իւրոյ , և ապա ասաց արի զի ննջեսցուք
՚ի միասին :

Հայնժամ աղջիկն եհան զհանդերձ-
սըն ընդ նմին և զշարեշապիկն , զոր եդ
՚ի ներքոյ մնարից գլխոյն , և սկսաւ խա-
ղալ զհետ նորա . և մանուկն թմրեալ ՚ի
սիրոյ և՝ ՚ի գինոյ անտի՝ ՚ի քուն եղեւ , և
ոչ ինչ կարաց առնել նմա : Եւ աղջիկն
խնդալով ՚ի միտսն իւր՝ սահեցաւ յան-
կողնոյն , և առեալ ընդ իւր զծառայսն
գնաց ուրախութբ ՚ի տեղի իւր . բայց
յառաւել խնդուեն մոռացեալ էր անդ
զշարեշապիկն : Վանզի ասէր ՚ի մտի իւ-
րում թէ ես յաղթեցի նմա՝ ուսեալ ՚ի
նմանէ զբանն զայն , և նա ոչ ինչ կարաց
առնել ինձ . վասն որոյ և ընդ լուսանալ
առաւօտուն տացից սպանանել զնա :

Եւ երբ մանուկն ուշաբերեալ ՚ի
քնոյն և սթափեալ ՚ի գինոյ զարթեաւ ,
իմացաւ թէ աղջիկն այն դուստը թագա-
ւորին էր որ հնարիւք եկեալ տու ինքն՝

պէս պէս խաքէութեամբ ուսաւ զըանն
զայն, տրտմեցաւ յոյժ։ Իսայց՝ ի տեսա-
նելն իւրում զշարեշապիկոն նը զոր մո-
ռացեալէր անդ՝ անդէն ուրախութե-
ուրախ եղև, և էառ պահեաց զայն յին-
քեան։ Եւընդ առաւօտն ել գնաց՝ ի
դուռն թագուհւոյն, և բարեւաց զնա-
և նստաւ՝ ի վը աթոռոյն այնմիկ։

Եւ աղջիկն աղբ արար հօրն և մօրն
և կարդացողաց և իշխանաց քաղաքին որք
միաբան եկեալ ժողովեցան անդ։
Եւ մանուկն յոտն կացեալ խոնարհեցոց
զծունը առաջի թագաւորին, և նստաւ
դարձեալ՝ ի վերայ աթոռոյ իւրոյ։ Եւ
սկսաւ աղջիկն տալ կարգաւ պատասխա-
նի՝ երեկեան հարցման մանկանն ։ Քանզի
ուսեալէր՝ ի նմանէ՝ ի գիշերին յայնմիկ
խաքէութե։ Եւ ամենեքին այնոքիկ որք
լսեցինն զայն, զարմացան ընդ գիտութի
աղջկանն ։ զի բանն այն յոյժ դժուար
և մին էր։

Այնժամ ասաց մանուկն ցթագա-
ւորն առաջի ամենեցուն ով տիեզերա-
կալ արքայ՝ դուստրն քո յաւուրս երիս
եհարց ինձ զըանս, և ես ետու զդա-
տասխանիս ։ Բայց այժմ ևս հարցից ցնա
ես զմի բանս, եթէ գիտասցէ՝ նա ինձ
յաղթեալէ և ես ոչ նմա։ Եսաց թա-
գա

գաւորն՝ այդմ բանիդ և մեք ամենեքին
վկայ լինիմք, զե մի այլ ևս աւելի զբոց
լիցի ՚ի մէջ երկոցունցդ :


Ասաց մանուկն առ աղջիկն՝ թէ ինչ
թռչուն էր այն որ ունէր ընդ իւր զայլ
տեսակ թռչունս, և իւր փետուրն գե-
ղեցիկ էր ողպ զոսկի . և կալսյ ես զնա և
զենի և զփետուրն պահեցի առիս, և
զմիսն նը խորովեալ մինչ եդի առաջի իմ
ուտել՝ նա յանկարծակի թռեաւ և փա-
խեաւ յինէն . բայց եթէ ոչ հաւատայք
բանից իմոց, զփետուրն զայն բերեմ
առաջի ամենեցունցդ զոր տեսանիցէք :

Առ երբ աղջիկն լուաւ զբանս զայս՝
երկեաւ յոյժ, զի գիտաց թէ ազդ առնե-
լոց է առաջի ամցուն զգնալն իւր առ նա
՚ի գիշերին յայնմիկ . վս որոյ աճապարել
ասաց ցնա՝ այդ կարի իմն դժուար հարց-
մունք է, և ոչ կարեմ գիտել զպատաս-
խանիս դորա . արդ այժմ յաղթեցեր
ինձ, խնդրեա դու յինէն զինչ և կամիս:
Եւ մանուկն ասաց՝ թէ քան զքեզաւե
լի բանս ոչ խնդրեմ ՚ի քէն :

Այնժամ ամենեքին վկայեցին և
հաւանեցան խնդրանաց մանկանն, և
պսակեցին զաղջիկն ընդ նմա, և արարին

ղեօթնօր հարսանիս : Եւ ետ թագաւորն զկէսն թագաւորութե և ընչից և գանձուց իւրոց , և նա տիրեաց նոցա : Եւ ապա առաքեաց մանուկին զմարդիկ բազում գանձիւք առ այն թագաւորն՝ որում վաճառեալէր զհայրն և զմայրն իւր . և գնացեալնոքա բերին զծնողն իւր առ ինքն : Որք տեսեալ զմիմեանս ուրախացան և գոհացան զայ որ արժանի արար վերստին տեսանել զիրեարսն : Եւ զասպնջական պառաւն զայն տարել ընդ իւր ՚ի դարպասն՝ կացոց մեծ ՚ի վը նաժշտացն :

Եւ թագաւորն կարգեաց զնա ողը և իշխան ՚ի վը բոլոր գանձուց և քաղաքաց իւրոց , որ զկնի մահուն իւրոյ իշխեսցէ ՚ի վը նց , և նստցի փոխանակ նը յաթոռ թագաւորութե իւրոյ : Քայց մանուկին այն զօր ոմ միցն իմաստնոցն ոյ յերկիր խոնարհեալ կանխէր յաղօթս ՚ի բոլոր սրտէ , և գոհութի և փառս մատուցանէր ամբաւ ինստմոցն մորդասիրին՝ որ փրկեաց զանձն իւր ՚ի մահուանէ , և արժանի արար զենքն այնպիսի փառաց և իշխանսութե :



Վաղք և պատմութիւն Աւելքուիանոսի ճգնաւորին :

Եր մի էր՝ ՚ի քաղաքին կոստանդնուպօլոսյ՝ մեծատուն յցժ և իշխան մեծ, և հրամանատու բազումգառառի։ և էր անուն նը Եփիմիանոս, և կնոջն՝ աննայ։ Եւ էր Եփիմիանոս յցժ սիրելի յաչս թագաւորին իւրոց։ Առա էին հասեալ մերձ ՚ի ծերութիւն, և ոչ ունէին զաւակ ՚ի վը երկրի, որ ժառանգէր զինչս նոցա. և էին կարի տրտում և անմիջար վասն ժառանգութեան. տիւ և գիշեր հանապաղ աղտչէին զած վասն զաւակի։

Եւ յաւուր միում կինն աննայ՝ բազում աղախնեօք և ծառցիւք գնաց ՚ի մեծ յեկեղեցին ՚ի սրբ սովիս, և կայր յաղօթս առ որ. և բարեխօսութ որ ածանին և ամ ոքցն՝ հայցէր ՚ի քոէ ժառանգ բարի։ Եւ յետ աղօթիցն բազում ողորմութիւն առնէր աղքատաց և կարօտելց, և քահանայիցն ամենեցուն, և ելեալ գնայր ՚ի տուն իւր։

Եւ ՚ի գնալն ՚ի ճանապարհին հանդի-

պեցաւ աղքատ մի խեղճ և ողորմելի և
ասաց, տիկին՝ տուր ինձ ողորմութիւն վա-
միակ որդւոյդ արևուն : Եւ տիկինն
հիացեալ՚ի միտս իւր՝ ասաց թէ վայ ինձ՝
զի ես անժառանգ եմ, և դու ինձ երանի
տայ վա որդւոյ . արտասուեաց և ելաց,
և հանեալ ետուր նմա ողորմութիւն, և եանց
գնաց ՚ի տուն իւր :

Եւ ՚ի գիշերին յայնմիկ ետես ՚ի տես
լեանն ծեր մի և աւետեաց զաննայ և ա-
սաց, կի՞ն դու՝ ահա կատարեցաւ խըն-
դրուած քո առաջի այ : Իսայց զայդ-
արծաթապատ դարպասն՝ որ ոսկւով և
արծաթովէ զարդարեալ՝ տացես զայն
ողորմութիւն աղքատաց և կարօտելոց :
Եւ ընդ առաւոտն ելեալ կոչեաց զերի-
ցունս և զքահաննայս, և արար մատաղս
մեծ և ընդունելութիւն :

Եւ պատմեաց զտեսին իւր՝ տուն իւ-
րումեփիմբանոսի. իսկ նա ոչ կամէք տալ
սապա դժուարաւ ետ. քանզի սիրեր զդար
պասն զայն որ յոսկւոյ էր շնուեալ, և
յայսկոյս և յայնկոյս մարդարտով շարել
և զարդարեալ : Եւ չորս բաղայ ՚ի զուտ
արծաթոյ՝ էր թուուցեալ նման արծւոյ,
և մի ես զթես իւր տարածեալ՚ի վայել-
չութիւն տնկողնոյ իւրոյ :

Եւ առեալ զայս կի՞ն նորա, կոչեաց

զոսկերիչս և արար զնա դրամն և դահեկանս . և քարող կարդաց և ասաց ժողովել զամ քահանայսն , և զամ աղքատա և զխեղս և զկաղս և զկոյրս , և պահել զնա 'ի հրոտից ամիսն բոլոր մինչև յեւ ամսոյն : Եւ առեալ ընդ իւր չորս հարիւր քառասուն և հինգ քահանայս , և իջեալ 'ի վանսն հսկեցին զգիշերն մինչև ցառաւաւօտն . և պատարագ մատուցին վորդէծնութեն նը . և նա ետ նյ եօթն եօթն դահեկանս :

Եւ յետ երեք ամսոց գիտաց կինն զյղութիւն իւր , և ետ առետիս առ այրն իւր . և յետ ինն ամսոց ծնաւ կինն 'ի ծերութեն իւրում արու զաւակ : Եւ յարուցեալ այրն՝ արձակեաց զհրաւիրակս , կոչել զքահանայս և զեպիսկոպոսունս և զիշխանս . և արար մեծ ընդունելուի , և մկրտեաց զմանուկն . և եդին զանուն նը ալէքսիանու :

Եւ իբրև զարդացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն գրոց : Եւ էր պատանին առատամիտ և առատաձեւն քան զհայրն իւր , և էր գեղեցիկ յցժ , և ձայն նորա՝ էր քաղցր իբրև զքնարի : Եւ իբրև եղեւ պատանին տասն և ութն ամաց՝ եզեն հայրն արջառս և ոչխարս բաղումն վոն նը : Եւ էր հսկայաձեւ և

Ընթերցօղ ածային նը գրոց , հին և նոր
կտակարանացն : Եւ եհաս լուր նը յա-
պտրանս թագաւորին . և յաւուր միում
ասէ թագաւորն ցեփիմիանոս , ած ետ
պտուղորովայնի քումհորոյ լուր նը եհաս
առիս . և է իմ դուստր զոր դու ձանա-
շես , արդ՝ տուր զնա ինձ ՚ի փեսայուի :
Ասկի և արծաթ իմ նմա եղեցի , և յետ
մահուան իմց՝ ժառնգեսցէ զաթոռն իմ :

Եւ ել եփիմիանոս յերեսաց թագաւոր
ըին , և գնայր թմբկօք և պարուք՝ ՚ի տուն
իւր : Երբե լուաւ ալեքսիանոս զգա-
լուստ հօրն իւրոյ , յարեաւ ընդառաջ՝
և երկիր եպագ նմա և ասաց , հայր իմ
պատուական՝ զի՞է քեզ : Պատասխանի
ետ հայրն նը և ասէ , խնդամ և ուրախ
եմ վաքո . զի թագաւորն խոստացաւ փե-
սայցուցանել զքեզ : Պատասխանի ետ
ալեքսիանոս և ասէ , գրեաւէ ՚ի նը աւե-
տարանն , թէ որ դառնայ ընդ դէմձնո-
ղացն իւրոց՝ տրտմութ իջանէ ՚ի դժոխս :

Ի այց դու ստիպեցեր զիս ընդ դէմ դառ-
նալ , զի յցժ խղեցին քանիք քո զիրտ իմ :

Եւ իբրե լուաւ եփիմիանոս՝ դարձաւ
տրտում , և անկաւ առաջի թագաւորին
և ասէ , վայ է ինձ այսօր՝ զի որդին իմ
տրհամարհեաց զիրաման թագաւորիդ և
զբանս իմ : Ասէ թագաւորն ցեփիմիա-
նոս ,

նոս, մի՛ հոգար զայդ, զի թերես ես դար
ձուցեց զնա յայնպիսի խորհրդոյն:

Եւ հրամայեաց թագաւորն կոչել զա
լէքսիանոս. և գնացեալ գտին զալէքսի-
անոս, որ ընթեռնոցը զաղմոսարանն՝ զոր
ունէր՝ ի ձեռին իւրում. և ասացին ցնա՝
կոչէ զքեղ թագաւորն: Եւ յարուցել
գնաց ալէքսիանոս զհետ նց յապարանս
թագաւորին: Ասէ թագաւորն ցալէքսի-
անոս, որդեակ՝ զամուսնութին պիղծ հա-
մարիս: Պատասխանի ետ ալէքսիանոս և
ասէ, ոչ թէ զամուսնութին պիղծ համա-
րիմ, այլ գրեալէ՝ ի ոք աւետարանին,
թէ որ ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ
զկին՝ կամ զորդիս՝ կամ զակդականս՝ և
ոչ առնու զիսաշն իւր և գայ զկնի իմ, չէ
ինձ արժանի. ոսկի և արծաթ՝ կերակուր
է ժանկոյ, և հանդերձ փափուկ՝ ցեցոյ,
իսկ բարեպաշտութի մնայ յաւիտեան:

Քայնժամ կոչեաց թագաւորն զեր-
կոտասան իշխանս տանուտէրս՝ ոք էին
խրատատու թագաւորութե իւրոյ, և
ասէ ցնո՝ զինչ արտօից, քանզի ոչ կարա-
ցի դարձուցանել զալէքսիանոս յայնպի-
սի խորհրդոյն: Պատասխանի ետուն իշ-
խանքն և ասեն, ոչ թէ բանիւ նը վարի
թագաւորութիս մեր, այլ հրամայեա ար-
կանել՝ ի սենեակ: Եւ թագաւորն հրա-
մայ

մայեաց արձակել զալէքսիանոս . և առա-
քեաց հրաւիրակս ընդ ամ իշխանութիւ-
նուր , ժողովել զաման գալ'ի հարսանիս :

Եւ իբրև գնացին քահանայքն կոչել
զալէքսիանոս , զի պսակեսցեն ընդ դստեր
թագաւորին , ասաց ալէքսիանոս ընդ
դէմ քահանայիցն՝ մի՛ դնէք ինձ պսակ
թառամելի , զի զանթառամն շահեցայց :

Պատասխանի ետուն քահանայքն և ա-
սեն , որդեակ՝ թէպէտ ՚ի թագաւորէն
ոչ երկնչիս , այլ ՚ի մէնջ պատկառեա . և
նա լուռ եղեւ . և տարեալ պսակեցին ընդ
դստեր թագաւորին . և արարին տասներ
կու օր հարսանիս : Եւ ապա առեալ թա-
գաւորն զձեռանէ մանկան և աղջկան՝
էարկ զնո՞ի սենեակ և փակեաց ՚ի վերայ
նոցա զեօթն դուռն :

Եւ յարուցեալ զմանուկն շիջցց զկան
թեղմն և զմոմեղէնան , և ասէ ցաղջիկն
քոյր՝ պարտ է ինձ և քեզ յաղօթս կալ և
ապա ննջել ՚ի միասին : Եւ ելեալ կացին
յաղօթս և ննջեցին սրբութե : Եւ յետ
տասներկու աւուր անցանելոյ՝ ասէ աղ-
ջիկն ցալէքսիանոս , ընդէ՞ր ոչ յայտնե-
ցեր զքեղ հօր և մօր քոյ . զի բազում
դէղատու բժիշկք կան ՚ի քաղաքիս :

Ասէ ցնա ալէքսիանոս , սահմանէ՝ զի
այր մարդ համարձակ է քան զկինն .

պարտ է ինձ Երեք անդամ խօսիլ , և
քեզ ոչ տալ պատասխանի :

Եւյարուցեալ եկաց յաղօթս և ասաց
այսպէս , ած աբրահամու խահակայ և
յակոբայ՝ որ փրկեցեր զերիս մանկունսն
՚ի հրցն բորբոքելոյ , փրկեա և զիս յայս
կնոջէս . զի մարմին կնոջ ող հուրէ , և
ես ող խոտ առաջի հրց կամ ՚ի յայրու
մըն . և լռեալ ննջեցին : Եւյարուցեալ
առաւօտուն ալէքսիանոս ասէ ցաղջիկն
արի կացցուք յաղօթս : Իսէ աղջիկն ցա-
լէքսիանոս , ընդէ՞ր ոչ խօսիս ընդիս և
ոչ բանիւ միսիթարես զիս :

Յայնժամալէքսիանոս ետ զմատանին
ուկի ՚ի նա և ասէ , քոյր՝ առ զսա և պա-
հեա ՚ի քեզ յիշելիք՝ մինչ ես երթայց ՚ի
դուռն եկեղեցւոյն յաղօթս , և ապա
գամ կատարեմ զկամս քո : Եւբացեալ
զդրունսն , ելեալ գնաց մինչեւ յանկելա-
նոցն . և տեսեալ զաղքատիկ մի՝ որ ունէր
նա մազեղէն մի զանձամբն իւրով , ետ
նմա զծիրանին և էառ զմազեղէն նը և
ագաւ ինքն : Եւ էր գին ծիրանւոյն
Երեք հարիւր դահեկան . և աղքատիկն
թաքոյց զայն : Եւ առեալ ալէքսիանոս
ոյլ կարկատուն կտաւ մի , էարկ զգլսովն
և ծածկեաց զերեսն իւր :

Իբրև էանց պահ մի գիշերոյն իմա-
ցաւ

ցաւ կինն զխորհուրդս նը, ձիչ և աղա-
ղակ բարձեալ լայր։ Եւ յարուցեալ
գունապանն ետես զդրունան բացեալ. և
վառեցին ջահս և ընթացան ՚ի յորոնել։
Եւ՝ ՚ի յորոնելն առ ոտն կոխէին զնա, և
նա ասէր՝ մի՛ նեղէք զիս՝ թէպէտ աղքատ
եմ, այլ այ արարած եմ։

Եւ էջառ եղը ծովուն՝ եգիտ նաւ մի
որ երթայր յեկմ, և ասէ ցնաւավարն,
մըրդեակ՝ տար զիս յեկմ, և ես աղօթս
առնեմ վարուն, ՚ու նաւավարն, աղքա-
տիկ ընդէ՛ր ծածկես զերեսդ քո և ոչ
բանաս։ Եւ նա ասէ, զի խստակրօն վար
դապետի աշակերտ եմ։ և նա պատուի-
րետլէ ինձ՝ թէ մի՛ հայիր ՚ի մարդ և ոչ
յու, և մի՛ բանար զերեսդ։ Եւ մտեալ՝ ի
նաւ հասին յերապօլիս, և անտի ՚ի կիպ-
րոս, և անտի յեկմ, և յեկմէ ՚ի լեառն
սինա՝ յոր ար խօսեցաւ ընդ մովսէսի։

Եւ արար անդ զնշան խաչին ՚ի վը նը
և ասէ, սա եղիցի ինձ գերեղման և տուն
յարկի. և եկաց անդ ալէքսիանոս ամս
երեսուն և չորս. և էր կերակուր նը ՚ի
ծայրից ծառոց և ՚ի խոսոց, և ըմպելի նը
ջուր անձրեաց։

Եւ ապա սատանայ ընկէց ՚ի սիրտ նը
զկարօտուի և զգութ ծնողացն, և այնու
նեղէր զնա։ Եւ յարուցեալ էջառ եղը
142 ծու

ծովուն , և եգիտ նաւ մի՝ որ Երթայր
յեկմ . և ասէ ցնաւավարն՝ տար զիս
յեկմ , և ես վ՛ք աղօթս առնեմ . և
առեալ զնա նաւեցին . Եւ իմացեալ
դիւացն յարուցին հողմ և մըրիկ ՚ի վ՛ր
ծովուն , և սկսաւ ալէկոծիլ նաւն , և
ոչ կարացին յաղթել :

Հայնժամ եկին եօթն գեք չարա-
գոյն քան զառաջինն , և ասեն ցմիմեանս՝
մեք գորա համբերութին գիտեմք , զի սորա
զօրութին առաւելէ քան զյոբայն . այլ
զայս առնեմք գմա չարութի , զի յարու-
ցանեմք հողմն սաստիկ ՚ի վ՛ր ծովուն , և
տանիմք զուա՛ ՚ի գուռն տան հօր իւրոյ .
զի տեսանելով զաղէտս ծնողացն իւրոյ՝
տայցէ ծանօթութի : Եւ հանին հողմն
սաստիկ ՚ի վ՛ր ծովուն , և տարեալ ընկե-
ցին զնաւն ՚ի գուռն տան հօր իւրոյ :

Իբրև գիտաց ալէքսիանոս , թէ ստնյի
եր գործն՝ ասէ , Երթամ ՚ի գուռն տան
հօր իմոյ , և անդ կոխեցից զգլուխ ստնյի :
Եւ իբրև ելառ եզր ծովուն՝ ետես զե-
փիմիանոս զհայրն իւր նսաեալ ՚ի վերայ
ջորոյ , զի Երթայր ՚ի բաղանիս : Եւ ըն-
թացեալ ընդ առաջ Երկիր եպագ նմա և
ասէ , յօտար Երկրէ եկեալ եմ վ՛ք ան-
ուան քոյ . արդ որ ինչ ՚ի փշրանաց սե-
ղանոյ քոյ անկանի , բաւական է ինձ կե-

բակուր • և որ յապակւոյն քո կաթի ,
բաւական է ինձ ըմպելի :

Ասէ Եփիմիանոս ցեղբիսյոս ծառայ
իւր , որդեակ՝ տար զգա յանկելանոցն
մեր : Խըրեւ տարաւ զնա յանկելանոցն՝
Ճիչ և աղաղակ բարձին աղքատքն ամ և
ասեն , թէ դա աստ դայ՝ մեք ամքն ելա-
նեմք : Ասէ Եղբիսյոս , աղքատիկ՝ վ՛
քո զամ աղքատան ոչ կարեմ հանել աս-
տի . ասէ ալէքսիանոս , աղաչեմ զքեղ՝
տար զիս մինչև յերրորդ դուռն : Եշ-
Եղբիսյոս տարել զնա ասէ ցդունապանն ,
թոյլ տուր սմա բնակիլ յայսմտեղւոջս .
և եկաց անդ աւուրս երեսուն :

Ապա յետ երեսուն աւուրս ասէ դըռ
նապանն , աղքատիկ՝ արի և գնա աստի .
և այսպէս երկու և երեք անգամ վարեաց
զնտ ասելով ել և գնա աստի . քանզի տի-
կինն մեր սովորուի ունի գալ ընդ այս , և
երթայ ՚ի ծովեղըն լալղորդին իւր ալէք-
սիանոս զտըն մեր : Եշ նա ասէր՝ թէ ես
աստ մեռանիմ , և ոչ գնամ յայլ տեղի :

Եշ յետ սակաւ ինչ աւուրց գայր
տիկինն , և առաջի նը ծառայք . և ծա-
ռայիցն լըբեալք՝ առեալ զիերաց նորա
քարշէին զնա ՚ի վերայ երեսաց իւրոց :
Եշ նա ձայնէր և ասէր , տիկին բարի մի/
տար զիս այդպէս տռնել . թէպէտ և

աղքատ եմ, այլ այ արարած եմ: Եւնա
սաստէր աղջկանցն և ասէր, թիլ տուք
դմա բնակիլ յայդմ տեղւոջու պահդըն
տութե: Եւնդ աղքատիկն նայելով
ասէր տիկինն, աչքն սորա նմանի աչացն
ալէքսիանոսին իմց:

Եւ ելեալ եկաց և սկսաւ լալ ընդ-
դէմ ծովուն և ասէր, ջուրք՝ որ 'ի ծովո-
էք, մի թէ կլայք զորդին իմ զալէքսիա-
նոս, ցուցէք ինձ զնա զի նա էր իմ յե-
տին և առաջին մխիթարանքն: Վետա-
քէր հողմիկ՝ մի թէ ունիք լուր և կամ
զհոտն իմ ալէքսիանոսին: զի տուրք էր
նա ինձ յայ, և ինդուրած ՚ի սրբասէր
քահանայից:

Եւ զայս ամլսէր ալէքսիանոս և գա-
լարէր աղիք նը՝ և խորովէր լեարդն, և
ոչ տայը ծանօթութի յահէ ամենակա-
լին այ, որ ասէ ՚ի որ աւետարանն՝ թէ
որ ոչ թողու զհայը՝ կամ զմօյը՝ կամ
զկին՝ կամ զագարակս վո անուան իմց,
չէ ինձ արժանի: Եւ եկաց ՚ի դուռն
տան հօր իւրոյ տասն երկու տարի:

Եւ ապա հայեցաւ ած ՚ի տառապանս
նը, և առաքեաց զհրեշտակապետն գաբ-
րիէլ առնուլ զհոգի նորա: Իբրև եկն
գաբրիէլ, ետ նմա ողջոյն և ասէ՝ Եկ
ալէքսիանոս մարդդ նոյ և հանդի՞ր յու-

ըտիսութիս երկնից՝ ՚ի վերինն եէմ, ՚ի
բնակութիս հրեշտակաց . զորմէ պատմէ
պօղոս՝ թէ ղոր ակն ոչ ետես՝ և ունկն ոչ
լուաւ՝ և'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն
պատրաստեաց ած սիրելեաց իւրոց : Եւ
նա ասաց հրեշտակին՝ ներել սակաւիկ
մի, մինչեւ գրեսցէ զվարս անձին իւրոց :
Եւ յարուցեալէառ քարտէզ և մուր՝ի
բաղանեաց, և նստեալ գրեաց այսպէս :

Աս եմ ալէքսիանոս որդին ձեր . հայր
իմ եփիմիանոս, և մայր իմաննայ, և կին
իմ մարդարիտ : Ողջն թագաւորիդ և
քահանայից քաղաքիդ միաբան ամցուն :
Ա՞ի լսյր հայր իմ ծերացեալ, այլ միսի-
թարեալ ավ . յիշեալ զի դու զայս կեանքս
խնդրէիր, և ես զերկնային . ետու զեր-
կոթն, և առի զոսկին փոխարէն՝ի անէ :

Ա՞ի լսյր մայր իմ և մի՛ տրտմիր, միսի
թարէ զքեզ քա . յիշեալ զի դու գայիր
և աղջկունքն առաջի քո և հասեալնց՝ի
վը իմ, քարշէին զշերացս՝ի վը երեսաց
իմոց . և ես լսյի ոչ զայն որ զիս քար-
շէին, այլ զայն՝ զի լսյիր դու և աղիողորմ
կոկծանօք հառաշէիր . և իմ զնո՞ հայե-
ցեալ դալսրէր աղիքս, և ոչ իշխէի տաւ
ծանօթութի յահէն այ :

Ա՞ի լսյր և դու կին իմ մարդարիտ .

զի ահաւասիկ պատրաստեցի ինձ և քեզ
ճանապարհ , որ տանի ՚ի կեանսն յա-
լիտենից :

Եւ ծալւալ զթուղթն եղ ՚ի մէջ ձե-
ռին իւրում և խփեաց . և նոյն ժամայն
աւանդեաց զծոգին իւր ՚ի փառս այ :
Եւ իջին տասն երկու հրեշտակք ՚ի ձե-
մորմնաւորաց և յայտնեցին քաղաքին և
ասացին , արիք գնացէք ՚ի դուռն եփիմի-
անոսի՝ և դաէք զմարդն այ վախճանեալ :

Եւ ՚ի մէջ գիշերին դղբղեցաւ քա-
ղաքն ամ . և վառեցին ջահս և մոմեղէնս ,
և գնացին գտին ոպ հրեշտակքն ասացին :
Եւ արկին ՚ի վերայ նը դիպակս պատ-
ռականս . և տեսին զի թուղթ ինչ դցը
՚ի ձեռին նորա , և կամեցան բազումք
տունուլ զնա , և ոչ կարացին հանել ՚ի
ձեռաց երանելցն :

Եւ մատուցեալ յառաջքահանայ մի
իմաստուն և ասէ , ոչ է պարտ առնուլ
ումեք զթուղթն , այլ միայն նա որ այս-
չափ ժամանակս կերակրեալ է զդա :

Եւ ուղարկեցին խնդիր եփիմիանոսի .
և իբրև եկն՝ երկիր եպագ նմա և ասէ ,
մեղայ քեզ աղքատիկ . զի ոչ գիտէի
թէ այսպէս նը էիր . և մեկնեալ զձեռն ,
և առեալ զթուղթն եբաց և սկսաւ ըն-
թեռնուլ , և էր գրեալ այսպէս :

Առ եմալէքսիանոս որդին ձեր • Հայր
իմ եփիմիանոս , և մայր իմաննաց , և կին
իմ մարգարիտ : Եշւ իսկցն ձգեաց ըզ-
թուղթն ՚ի ձեռաց իւրոց . և անկաւ՝ ի վը-
մեռեալ մարմնոցն , և յինքն ամփոփեալ
գոչեր և լսյր . և ոչ կարէին հանել՝ ի
գրկաց նը զերիս աւուրս :

Եշւ եկեալ մայր նը և կինն՝ ոչ կա-
րացին մտանել առ նա վուն ամփոխին :
Հայնժամ բերին գանձս բազումս և
ցանեցին շուրջ զամբոխիւն . և քակեցաւ
տմբոխն զինի գանձին , և առա կարացին
մտանել առ ալէքսիանոս մարդն այ :

Եշւ անկեալ մայրն ՚ի վը նը , և հանել
զըստինսն եդ ՚ի վը երեսաց մանկանն և
ասէ , որդեակ իմ , թէ կենդանի ես՝ խօ-
սեա ընդ տառապեալ մօր քոյ . և դնէր
զերեսն ՚ի վը սրտին՝ և հեղոյր զարտա-
սուսն , և ձայն բարձեալ լսյր դաւնա-
պէս՝ և ողբայր աղիողորմ յոյժ :

Եշւ եկեալ կին նը՝ ընկէց զմատանին
և ասէ , արդ՝ այս է ոք գալուստդ սի-
րելի իմ ալէքսիանոս , մինչև յերբ պա-
հեմ զայշելիքս քո : Եշւ ո՞կարէ պատմել
գըով զկոծումն և զողբումն նց՝ հան-
դերձ բոլոր քաղաքաւն առ հասարակ :

Եշւ յետ բազում լալցն՝ տարեալթա-
ղեցին զերանելի նահատակն քոի զո՞բն

ալէքսիանոս , և շինեցին եկեղեցի ՚ի վը
նորա : Եւ կացեալք հայր և մայր նորա
կենդանի զամս ութն զկնի փոխման ոբյն՝
ծառայելով և սպասաւորելով ոք գերեղ
մանի նը , յետ այնորիկ հանգեան խա-
ղաղութե՛ ՚ի քս : Խսկ ոքն ալէքսիանոս՝
փոխեցաւ ՚ի քս ՚ի հրոտից ամսոյ քսան և
ութն՝ ՚ի փառս ոյ հօր , ամէն :

Բարեխօսութե՛ կամաւոր աղքատո-
ցելցն վս քո , և օտարացելցն ՚ի մարդ-
կային ծանօթութե՛ , քս ած՝ տուր և
մեզ ատել դվայելութե՛ կենցաղոյս , և
սիրել զքեղ ՚ի բոլոր սրտէ և յամ զօ-
րութե՛ , և մերձենալ ՚ի ոք ոք և ընդ
ամցուն փափագելիդ , ամէն :



Պատմութիւն Տէր Յուսկան , և որդւոյ նորին
Ստեփաննոսին :

Թուականուե՛ հայոց՝ վեց հարիւր
վաթսուն ամին , յերկիրն ըուբ-
տունեաց՝ ՚ի գաւառն տաքայ՝ ՚ի գողայ
քաղաքն , որ ասի արտամետ մերձ ՚ի շա-
միրամակերտ մեծ դղեկին վանայ , էր
քահանայ ոմն մեծազգի և մեծատուն ,
զարգացեալ ոմ առաքինութե՛ , անուն

ՆՌ ստեփաննոս։ Եւ էր յոյժ պարկեշտ
և ամօթխած, աղքատասէր և ողորմած,
հիւրլն ալ և մարդասէր, առատձեռն և
ամենաբաշխ, քաղցելոց կերակրիչ, և
մերկացելոց զգեցուցիչ, և յայլ ամբա-
րեգործութիւն ժիր և արի. նաև՝ ի պաշ-
տօնս այ և ժամակարգութիւն ոքյ եկե-
ղեցւոյ՝ անձանձիր աղօթասէր։ Եւ զի
կին նր ամուլէր՝ և ոչ ծնանէր. վորոյ
միշտ հայցէր յայ մնալ նմա պտուղօրհ-
նութե՝ և ժառանգ սեփհական։

Իսկ որ զկամս երկիւղածաց իւրոց
առնէ տր, լուաւ աղօթից նր, և ետ նց
արու զաւակ. զոր յաւուր միրտութեն
անուանեցին ՞ ուսիկ։ Եւ եօթն ամաց
լեալ տղայն՝ հայրն սկսաւ գրել՝ ի տախ-
տակի, և ուսուցանել մանկանն զգիրս
ածային. զի էր յոյժ հանդարտ՝ շնոր-
հալի և առատամիտ, երկարոգի և քաղց-
րածայն, յոյժ հեղ և խոնարհ, քաղցը
և սիրուն յաչս ամցուն։

Եւ յորժամ եղեւ մանուկին յուսիկ
տասն երեք ամաց՝ ծնօղքն ետուն զնա
առ մեծ վարդապետն և խստակրօն ճրգ-
նաւորն անանիա՝ ի մեծահոչակ աթոռն
վարագայ՝ որ էր քեռին իւր. զի ի նմանէ
կատարեալ ուսցի զիին և զնոր կտակա-
րանս ածային ոք գրոց։ Եւ կացեալ
անդ

անդ առ վարդապետն զամս չորս , եղե
յոյժ հմուտ և տեղեակ ամ ածաշունչ
տառից , և պատուիրանացն այ . և 'ի չափ
հասակի լեալ մանուկն յուսիկ՝ ծնօղքն
նը կամեցան մօւծանել զնա'ի կարգ նի :

Եւ հայրն նը ստեփաննոս քահանայն՝
գնաց 'ի վարագ՝ էառ հրաման ՚ի վար-
դապետէն : Եւ նա հրամայեաց ման-
կանն յուսկայ գնալ ընդ հօրն 'ի տունն ,
և հնազանդիլ հրամանաց ծնօղացն՝ և
առնել զհարսանիսն : Եւ նա ոչ կամէր ,
զի ուխտ եղեալ էր ընդ այ սրբութք
պահել զկուսութին իւր մինչե 'ի մահ .
բայց յայնժամ ոչ իշխեաց ընդդիմա-
նալ հրամանաց վարդապետին . այլ ար-
տասուօք համբուրեաց զաջն , և ելեալ
'ի վարագայ գնաց ընդ հօրն իւրում 'ի
տուն , և արարին զհարսանիսն :

Եւ յորժամ առանձնացաւ յառա-
գաստին միայն ընդ հարսին , յիշեաց
զուխտն իւր որ ընդ այ , այլև զողջա-
խոհն յովսէփ՝ և զերանելին ալեքսիա-
նոս՝ յօրինակ եղեալ իւրն : Եւ քաղց-
րութք ասէր ցաղջիկն , գիտացիր՝ քըս
իմըստ հոգւց՝ զի գրեալէ 'ի գիրս կա-
նոնաց 'ի նը առաքելոցն , եթէ ոք գիցէ
ուխտ առաջի այ վս կուսուեն և սրբու-
անձին իւրոյ և ոչ պահեցէ մինչե 'ի մահ՝

այլ ամուսնասցի , նա ուխտազանց լինի
քի , և տաելի ամ որդյուն այ . վա որոյ ձըշ-
մարտութ այժմ ասեմ քեզ զխորհութն
իմ , զի ես ուխտ եղեալ եմ ընդ այ սըս-
բութը և անարատութը . պահել զկու-
սութիւնս իմ մինչեւ ՚ի մահ : Օ եթէ
ամուսնութը ապականեցից զկուսութիւ-
քո՝ լինիմ ուխտազանց :

Եսէ աղջիկն , եթէ ամուսնութիւնն
ապականութիւ է , ապա զիարդ ՚ի մէջ որ-
եկեղեցւոյ՝ հրամանաւ այ , և ձեռամբ
քահանայից , խաչիւ և աւետարանաւ
դնեն պսակ ՚ի գլուխ փեսային և հարսին՝
և լինին մարմին մի ըստ քանի տն : Եսէ
մանուկն յուսիկ՝ ծանիր քոյր , զի պսակն
զոր քահանայքն դնեն ՚ի վը գլուց մերոց՝
այն մարմնաւոր է և ապականացու , և
ընդ մեռանիլ մարմնոյն անցանին ընդնմա-
ռմ փառք և մեծութիք և վայելչութիք Շիս:
Խոկ այն կենաց պսակն և փառքն և ու-
րախութիք որդյուն , անանցանելի և յաւի-
տենական են : Եւ իսկոյն լոյս ածային
շնորհացն ծագել ՚ի սիրտ աղջկանն՝ ասէ
ց յուսիկ , արդ դիցուք ուխտ առաջի
այ ծածուկ ՚ի մօրդկանէ , զի ՚ի միասին
կացցուք աստ ՚ի տան հօր քում , և պա-
հեսցուք անարատ սրբութը զկուսուխ
մեր ոնդ զհոգեոր եղբայր՝ ըստ հաճայից
կամացն այ :

Եւ զայս լուեալպատաճնոյն՝ ասէ՛, ո՞ր
ած մեր պահեսցէ զմեղ յուխտին մե-
րում զոր ուխտեցաք՝ և փրկեսցէ զմեղ
յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ։
Եւ ապա 'ի ծունկս անկեալ արտասուօք
և բազում պաղատաճնօք յանձնեցին այ
զինքեանս։ Եւ զինի աղօթիցն առանձ-
նացեալ զատ 'ի միմեանց ննջեցին. և յոր
ժամ հարին զդիշերային ժամն, յայն-
ժամ յարուցեալ մանուկն յուսիկ՝ հո-
գեոր սիրով միսիթաբեաց զաղջեկն, և
յորդորեաց ջերմսիրով և երկիւղիւ կալ
յաղօթս առ ած. և ինքն ելեալ 'ի տանէն
ուրախութբ՝ գնաց յեկեղեցին 'ի ժամ
աղօթիցն։ Եւ այնպէս ահիւ և երկիւ-
ղիւն այ կացին և մնացին 'ի միասին անա-
րատ սրբութբ՝ զամս տասն երեք անգի-
տելի 'ի մարդկանէ. բայց միայն ծած-
կագիտին այ յայտնի էր։

Եւ ապա քահանայն ստեփաննոս խոր
հեցաւ ձեռնադրել զորդին իւր քահա-
նայ. վառոյ կոչեաց զանանիա վարդա-
պետն, և հանդէս մեծ արտօրեալ բաղ-
մութբ եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝
քահանայից, որք ամքեան կամեցան, և
ձեռնադրեցին զյուսիկ քահանայ. և
արարին ուրախութի մեծ զաւուրս եօթն։

Եւ յետ երկուց ամսոց 'ի թուին վեց
153 հար

Հարիւր Եօթանասուն և հինգ՝ ոք քահանայն ստեփաննոս փոխեցաւ առ քու :
Եւ ոք քահանայն որ յուսիկ՝ օր ըստ օրէ
կըթէր զանձն իւր պահօք և աղօթիւր,
մաքուր սրբութք, և ամ առաքինութք :

Եւ յետ ժամանակաց ինչ՝ եղեւ գալ
զօրացն թաթարաց յարևելս՝ ի գերել
զաշխարհս հայոց և գերեալ զբազումն
՚ի գաւառէն տաբայ և յըռշառունեաց՝
և դարձան ՚ի տեղիս իւրեանց բազում
աւարաւ : Եւ ընդ բազմաց գերելոցն՝
գերեցաւ և անուաննեալ կինն յուսիկ քա
հանային ՚ի գիւղաքաղաքէն արտամետոյ .
և տարեալ ՚ի շահաստան քաղաքն թավքէզ
վաճառեցին զնա կնոջ միում այլազգի իշ-
խանի , որոյ անունն էր բիթի . և կինն
այն՝ էր հաւատովն քրիստոնեայ :

Եւ իբրև գիտաց իրիցկինն թէ քրիս-
տոնեայ է , աղաչեաց զնա և ասաց՝ թէ ես
իրիցկին եմ պարկեշտութք կացեալ , և
անմերձ ՚ի խառնակութէ անօրինաց :
Ո ՚ի այն թաթարն՝ որ զիս գերեաց՝ յա-
ռաջին օրն հիւանդացաւ , և ած իմ պա-
հեաց զիս անփորձ ՚ի մեղաց . վա՞որոյ ա-
ղաչեմ զքեզ տիկին , ոչ տալ զիս ՚ի գործ-
մեղաց . զի գիտեմ կերպաս նկարել , և
այնու քեզ առաւել վաստակ տունեմ , և
ես ՚ի մեղաց զատ մնամ . զի կին քահանայի

Եմ սրբութեալ կ գարշիմ՝ ի խառնակութենէ անօրինաց։ Օ այս իբրև լուաւ տիկինն, արար ըստ կամաց նը։

Եւ երեցն յուսիկ ել՝ ի խնդիր ամուսնոյն իւրոյ, և գնացեալ եղիտ անդ՝ ի շահաստան քաղաքն թավրէզ. և եկաց առաջի տիկնոջն՝ կերպ մուրացողի՝ հարցեալ ցնա տիկինն և ասէ՝ ինչ մարդ ես. և նա ասէ, երեց եմ և գերոյ տէր. և տիկինն այն եցոյց նմա զիւր ամուսինն։ Եւ՝ ի խօսիլն երիցուն ընդ կնոջ իւրոյ, տեսանէր տիկինն, զի շունչ քահանային բոցածաւալ իբրև զլոյս ելտնէր, և դարձեալ մտանէր՝ ի բերանն իւր՝ ի նշան անմեղութե նոցա։

Եւ տիկինն հարցեալ և գիտաց՝ թէ դեռևս տղայ ոչ է եղեալ նց. յայնժամ ազդմամբ խնսամոցն այ՝ ասաց ցերեցն, թէ՝ ի քէն խնդիր մի ունիմ, դու զայն ինձ տուր՝ և ես զկինդ քո տաց քեզ ձրի։ Ասէ երեցն, զինչ է խնդիր քո տիկին. և նա ասաց, քեզ որդի տալոց է ած՝ և այն քահանայ լինելոց է. և զայս միայն հայցեմ՝ ի քէն՝ տուր առնել որդւոյ քո որ ծնանելոցն է՝ ի քէն՝ զառաջին պատարագն վս հոգւոյ իմոյ՝ ի քաւութե և՝ ի թողութիւն բաղում մեղաց իմոց։ Ասէ երեցն, եղեցի ըստ բանի քում. և

զիմնդըուածս սրտիքո՞ տը կատարեցէ :
Ասէ տիկինն , ահա կին քո անփորձ ՚ի
չարեաց , և անմերձ ՚ի յանօրինաց , և այլ
ևս հինգ հարիւր գեկան ձեզ ՚ի պէտո
շինուե , երթայք ողջուբե և խաղաղութե :

Եւ առեալ երէցն տը յուսիկ զկինն
իւր և եկեալ ՚ի գիւղն իւրեանց արտա-
մետ արարին շինուե իբրև զամս երկու :
Եւ յաւարտ շինուեցն ամի՞ ասէ երէցն
ցամուսինն իւր , դու ինքնին գիտես՝ զի
ամ շինութիս մեր զոր արարաք , և ամ
կահք և կարասիք մեր զոր այժմունիմք ,
այս ամ ՚ի պարգևաց ընչեց տիկնոյն է
զոր շնորհեաց մեզ : Բայց նա հաւատով
խնդրեաց , թէ որդին որ ծնանիցի ՚ի
մէնջ , զառաջին պատարագն ՚ի քաւուի
և ՚ի թողուի մեղաց նը տրասցէ : Եւ զի
մեք ու խտեցաք առաջի այ , զի սրբութե
պահեսցուք զկուսութիս մեր մինչեւ ՚ի
մահս մեր . և ուստի ծնանիցիս դու որ-
դի որ լինիցի քահանայ , և զիմնդըուածս
տիկնոջն այնորիկ կատարեցէ :

Ասէ իրիցկինն , տէ՞ր՝ հանապազ ընդ-
իս առես թէ առանց հրամանին այ տե-
րե մի ՚ի ծառոց ոչ անկանի ապա որ ինչ
հրաման տն են՝ օրհնեալ եղիցի յաւի-
տեան : Ասէ քահանայն յուսիկ , ես եր-
թայց ՚ի ոք եկեղեցին՝ և անդ ՚ի տուէ և

՚ի գիշերի աղօթիւք և պաշտմամբ և պատ-
տարագօք աղաչեցից զոր ած . և դու ՚ի
տան քում ՚ի սենեկի աղօթեա միշտ ջերմ
արտասուօք , թերես մարդասէրն ած-
յայտնեսցէ մեղ զհաճոյս կամաց իւրոց :

Եւ ՚ի վր այսր ուխտի անցին աւուրըք
իբրև երեսուն . և յազդմանէն այ ՚ի նը
երուսաղէմայ վարդապետ մի ստեփաննոս
անուն՝ առաքինի և ձգնաղդեաց՝ զդաստ
և պարկեշտ յամ ձանապարհո ածային՝
յոյժ ծերացեալ ալեօք՝ եկն ՚ի քաղաքն
տրտամետ , և կացեալ անդ զաւուրս ինչ :
Եւ ՚ի կիրակի գիշերի զկնի առանձնա-
կան աղօթիցն տեսանէր տեսիլ երազոյ ,
զի եր որ յուսիկ քահանայն զարդարել
սպիտակ և պայծառ քահանայտկան զգես-
տիւ , և խաչ և գաւազան ուկիազօծ՝ ա-
կանակուռ ընդելուզեալ մարդարտօք՝
ծաղկեալ շուշանօք յաջոյ ձեռին նը ,
և յահեակ ձեռին՝ սուրբ աւետարան :
Եւ ՚ի գլուխ գաւազանին ետես բուսել
կանաչասաղարթ տերեսով գեղեցիկ վարդ-
մի՝ բոլորազարդ ծիրանածաւալ և կար-
մրափայլող զհուր ՚ի վառ . և զարհուր-
եալ ՚ի տեսլենէն զարթեաւ :

Եւ զկնի արձակման առաւօտեան ժա-
մուն՝ վարդապետն այն կոչեաց առան-
ձին առ ինքն զոր յուսիկ քահանայն . և

տարեալ յաւանդատունն , և Երդմամբ
է հարց զնա վո վարուց և առաքինուն նը :
Խոկ նա յառաջ ոչ կամեցաւ յայտնել
նմա բան ինչ՝ մինչզի ընդ բանիւ արար
զնա վարդապետն . և ապա քահանայն
յուսիկ սկսաւ պատմել նմա խոսառվա-
նաբար զամ մի ըստ միոջէ :

Եւ վարդապետն ստեփաննոս հիացել
ասէ , օրհնեալէ ած որ տայ զօրութի և
համբերութի սիրողաց իւրոց : Եւ ապա
յետ հոգեորական մխիթարութեն՝ ասէ
վարդապետն ցտէր յուսիկ , գիտես որ-
դեակ՝ զի ՚ի սկզբանէ զնախնիքն մեր տ-
րու և էդ ստեղծեաց ած , զի ամուսնուք
աճեցին և լցցեն զերկիր . ո՞պ և տռաքելն
պօղոս ասէ , պատուական է ամուսնութի .
վո որոյ պատուիրանտրուք տն ես տամ-
ձեզ վերստին հրաման ամուսնուն ձերոյ :

Վատ յետ աւուրց ինչ յղացաւ կինն
ո՞ր յուսկայ . և ետ ած նց զաւակ արու ,
զաղաւնին ամբիծ զնըն ստեփաննոս , որ
կրթել վարժեցաւ ՚ի կրօնս ած պաշտուն :
Եւ իւրե ջրթափեալեհաս ՚ի գիտութի
բարոյ և չարի , սկսաւ հետեւիլ բար-
եաց , և խորշել ՚ի չարեաց՝ պարկեշտ վա-
րուք և ուղիղ գնացիւք , կրթեր զանձն
իւր ՚ի պահս և յաղօթս որբութիք , հե-
ռանալով ՚ի լկոի և յանմետ բարուց կա-
նանց :

նանց : ՚Ա տիս տղայութե՛ և ՚ի հասակն
մանկութե զկատարելոցն ունէր զինքեան
զգիտութա . խոհեմ և իմաստուն , ժուժ-
կալ և համբերօղ , ուսումնասէր և ողոր-
մած , հլու և հպատակ հրամանաց ծնո-
ղացն , հեղ և հանդարտ առ ամսեան :

Եւ եղե յաւուր միում գնալ նմա ՚ի
ջաղացն՝ տանիւ ցորեան ՚ի տանէ իւրենց
՚ի գիւղն անգղ՝ առ ՚ի աղալ յաղորիսն :
Եւ զե էր յաւուրսն յայնոսիկ սղութե՛
հացի . և աղքատքն յոյժ տառապէին , և
ետես զի բաղում աղքատք հաւաքեալ
էին ՚ի դուռն ջաղացին : Եւ ինքն բա-
րեմունդ պատմնին ստեփաննոս՝ բա-
ժանեաց զամ ցորեանն աղքատաց կուց
կուց , և մնաց խորդն դատարկ : Ծպա
անտես ՚ի մարդկանէ ելից զայն մանը ա-
ւազով , և գերմակ մոխրով . և ասաց ոմանց
օդնել ինքեան՝ և բառնալ ՚ի վր գրաս-
տուն իւրոյ , զոր եթեր յարտամետ . և
վարեալ զէշն ՚ի բակն իւրեանց , ինքն
փախուցեալ գաղտաբար անկաւ ՚ի ձանա
պարհ , և գնաց ՚ի բերկըի :

Խակ երեցն յուսիկ առեալ զբեռն յի-
շոյն՝ տարաւ ՚ի առւնն . և մայրն բացեալ
զբեռն եհան ալիւր , և արար խմոր . և
հասուցեալ զհացն ասաց իրեցուն , ել ՚ի
դուրս և աեւ զտղայն և ասան նմա զի

Եկեսցէ և կերիցէ պհաց քանդի քաղցել
է . և կարծէին թէ ընդ տղայսն գեղջն՝ի
խաղի է , և կամ թէ աշխատեալ՝ի ձանա-
պարհին ննջեալէ՝ի տեղի ինչ . Եւ ելլէ^ւ
յուսիկն շրջեցաւ ընդ գիւղն բոլոր և
ոչ եգիտ . և մայրն յոյժ տագնապէր մը-
տօքն՝ թէ զինչ եղեւ տղայն : Եւ մինչ
Երեկոյ եղեւ՝ առաւել հոգային ծնողքն,
թէ ուր իցէ . և զգիշերն ողջոյն անքուն
կացեալ հոգային զտղայն . և առաւել ևս
մայրն ըստ մայրական գթոյն աղեկիզեալ
լայր գառնապէս . որպ և է սովորութիւ-
մօր հոգաւ զտղայս :

Եւ՝ի վաղեւն գնացին աստ և անդ՝ի
գիւղ և՝ի քաղաք . գնաց հայրն՝ի յոս-
տան , և մայրն՝ ՚ի վան , հարցին և ոչ
գտին . և դորձան ՚ի տունս իւրեանց՝ և
լային անմիտար տրամութե զցայդ և
զցերեկ : Եւ ապա յետ տամն աւուր
հանդիպեալ ոմն՝ի ծանօթից նց , ետես
զնա՝ ՚ի լաց տխուր գիմօք . և հարցեալ
գիտաց զպատճուն , և ասաց թէ զստե-
փաննոսն ես տեսի յայս ինչ օր՝ի գիւղն
կոչանի , և ասացի թէ վե ինչ պատճառի
եկել ես աստ . և նա ասաց՝ թէ հայրն իմ
յուղարկեց զիս երթալ՝ի բերկրի՝ի պէտս
այս ինչ իրաց : Եւ նոքա ուրախացեալ
օրհնեցին զայրն և զՃանապարհն նորին :

Եւ յարուցեալ հայրն տէր յուսիկ
գնաց՝ ի բերկրի, և ել՝ ի վանս արդելան,
և ետես զտղայն . և խնդութք լցեալ
սսաց՝ որդեակ զի՞նչ գործեցեր ընդ մեզ
զի մայրն քո և ես տառապեալ լալոտ ա-
չօք՝ և որոնեալ խնդրեցաք զքեզ՝ ի վան
և յոստան և ՚ի գիւղն ամ, Եւ ապա ա-
սաց՝ թէ մայրն քո հաց հասցց . և ես
ելեալ շրջեցայ ընդ գիւղն ամ, և ոչ
գտի զքեզ:

Եւ ասաց ստեփաննոս՝ թէ ուստի՝
արար մայրն իմ զհացն: Վաէ երէցն,
յալիւրէն զոր դու բերիր ՚ի ջաղացէն:
Վաէ ստեփաննոս՝ թէ այն ալիւրն Երբ
բերի: Եւ հայրն ասէր, որդեակ՝ ցորեան
տարար ՚ի ջաղացն՝ և ալիւր բերիր, զի
արդ ոչ գիտես: Եւ ապա հաւատար-
մացաւ բանն ՚ի սիրտն ստեփաննոսի, և
ասէ ցհայրն՝ որ յորժամհասի ես ՚ի ջա-
ղացն, տեսի անդ բաղում աղքատք՝ որք
հայցէին յինէն ողորմութի. և ես ետու
նց կուց կուց զցորեանն ամ, և մնացին
խորդքն դատարկ: Վապա հնարս իմացայ,
և լցի զնա մանր աւազով և գերմակ մոխ-
ըով, և բարձեալ ՚ի վը իշոյն բերեալ ՚ի
գիւղն՝ վարեցի զգրաստն բեռամբ ՚ի
բակն մեր, և ես փախեայ և եկի աստ զի
վախեցայ ՚ի քէն և ՚ի մօրէն իմմէ, թէ

ծեծէք զիս, և կամ տրանջէք զինէն :
Հայնժամերէցն յուսիկ անկաւ յեթ
կիր՝ և արտասուօք գոհանայր զայ . և
ապա ուրախութ լցեալասաց, օրհնեալ
է ած՝ հրդեակոր'ի ձեռն քո արար դայդ
սրանչելիս: Եւ արդ՝ արի հրդեակ զի
երթիցուք՝ ի տունս մեր առ մայրն քո .
զի և նա յոյժ տագնապի վասն քո, և ի
տեսանեն զքեզ՝ ուրախասցի ՚ի վը քո:
Վսէ ստեփաննոս՝ մի' արասցէ ած զի ես
՚ի յայսմ վաճացս ելանեմ . աստ կեցայց
որբան եմ կենդանի, և աստ մեռայց և
թաղեցայց :

Եւ'ի շատ ողոքեն և'ի ստիպեն հայրն
զրդին՝ թէ եկ երթիցուք՝ ի տունն մերս
եկին ժողովեցան միաբանքն ուխտին և
ասեն ցնա՝ հրդի երթ գնա ընդ հօրն
քում, և տես զմայրն քո, և յետ աւուրց
ինչ դարձեալ եկ աստ ՚ի վանս առ մեզ:
Եւ նա ոչ լուաւ նց, և ոչ հաւանեցաւ
գնալ ընդ հօրն իւրում: Եւ իւրև ոչ
կարացին հաւանեցուցանել զտղայն,
ապա ասեն միաբանքն ուխտին ցհայր
մանկանն, առ յուսիկ՝ արի դու և գնա՝ ի
տուն քո՝ և առետ զմայր տղացիդ բեր
աստ, զի և նա տեսցէ զտղայն իւր:

Եւ այնպէս մնաց ստեփաննոս՝ ի նոյն
լոնքն արդելան . և վարժեալ ածային

գրոց գիտութեղեւ աբեղայ : Եշւ հայրն
ասացեալէր նմա զգերիլն մօրն և զազա-
տիլն , և զիսնդիրն տիկնոջն : Եշւ նա յա-
ռաջին պատարագին սկսաւ յիշել զտի-
կինն բիբի , յայնժամ տեսիլ ահեղ և
զարմանալի երեեցաւ նմա . քանզի ափ-
շութի կալաւ զնա , և տեսանէր զինքն
յեզը արեան ծովու միոյ , և կինն այն
բիբի 'ի մէջ արեան ծովու : Եշւ որքան
ինքն զաղօթս նբյ պատարագին ասէր ,
կինն այն 'ի դուրս գայր յարեան ծովէն .
և ելեալ արտաքս՝ եդաւ 'ի ցամաքն անաղտ
և մաքուր . և երկու պատարագի չափ յա-
մեցաւ , և ապա աւարտեաց զպատարագն :
Եշւ 'ի հարցանել ծերոցն զայտաձառ յա-
մենալոյն՝ ասաց նա զտեսիլն զոր ետես .
և որք լուանն՝ ուրախացեալ փառս ե-
տուն այ :

Եշւ 'ի վաղիւն հարկիւ աղաչեցին զնա
ստէպ՝ և հայցէին 'ի նմանէ պատարագ
մատուցանել , և նա ոչ էառ յանձն . և
նոյն միով պատարագաւն եկաց զամժա-
մանակս կենաց իւրոց , ասելով թէ ար-
եան ծովուն ոչ եմ կարօղ ընդդէմ կալ :
Եշւ կացել 'ի նոյն վանս արգելան , և անդ
վարժեալ եղեւ վարդապետ Ճշմարտուեն :

Եշւ զկնի մնալոյն անդ 'ի բազում ա-
լուրս բարի և առաքինասէր վարուք 'ի

հաճցոյս կամացն ոյ , Ելեալ անտի վասն
վրդովմանց ժամանակաց յասպատակմա-
նէ հենից այլազգաց՝ գնաց՝ ի ոք լեառն
որ կոչի խաչ գլուխ : Ուր ոք առաքեալն
հայոց թաղեռու և յետ նը ոքն գրիգոր
լուսաւորիչն մեր խաչ էին . գրոշմետ
մատամբքն իւրեանց՝ ի գլուխ լերինն՝
վը կարծը վիմին՝ յանապատն ոքյն խսա-
հակայ պարթեկի հայոց հայրապետին . և
բազում ձգնաւորք և խստակրօն միան-
ձունք բնակէին անդ : Որոց էր առաջ-
նորդ ոք վարդապետն գրիգոր վկայա-
սէրն հրեղէն լեզուն . որ էր այր կորո-
վամիտ և բանիբուն , վարժեալ՝ ի գիրս
ածային հին և նոր կտակարանացն :

Եւ գնացեալ՝ յանապատն ոքյն խսա-
հակայ՝ ոք վարդապետն ստեփաննոս ,
անտանելի և խստակրօն ձգնութք կա-
տարէր անդ զածահաճցոյ վարս իւր :
Եւ քանզի ոչ թաքչի քաղաք որ՝ ի վը
լերինն կայցէ . և ոչ լուցանեն ձբագ և
դնեն ընդ գրուանաւ , այլ՝ ի վը աշտա-
նակի . զի ամբեան որ՝ ի տան աշխարհիս
իցեն , զլոյն տեսցեն : Ո որոց ելանէր
համբաւ ձգնութե վարուց նը ընդ ամ
շրջակայ գաւառն և յամ հեռաւոր տե-
ղիս . և գային առ նա բազում դիւա-
հարք և ախտաժետք , և պէս պէս ցաւա-

գարք . և տղօթիւք ո՞ր վարդապետին՝
ամբեան ըստ հաւատոց իւրեանց յանուն
քի այ գտանէին զբժշկութիւն և զառող-
ջութիւն հոգւոց և մարմնոց . և ուրա-
խութիւն գառնային ՚ի տեղիս իւրեանց՝
փառաւորելով զքու :

Եւ այնքան տարածեցաւ համբաւ
սքանչելեաց նը ընդ ամ երկիր , մինչ զե
այլազգիքն ևս ամբեան լուեալ զարմա-
նային : Եւ ոմանք ՚ի նոցանէ հայհցէին
զնա . սուտ և խաթեբայ կարծէին զնա՝
ասելով թէ այսպիսի հրաշագործութիւն
միայն այէ գործ , և ոչ հողեղէն մարդոյ :

Եւ մի ոմն ՚ի յանհաւատից՝ անօրէն
չարագործ և ժանտաթարոյ՝ որոյ անունն
էր իւսիւֆ , ՚ի բերդէն ամլոյ , արուես-
տիւ մսագործ , ըստ չար բարուց իւրոց
կամեցաւ նենգութիւն փորձել զնք վար-
դապետն , և զամ հրաշագործութիւն և
զբարի համբաւն սրտել և քամահել :
Եւ ելեալ գնաց ՚ի վանքն երերնայ՝ յա-
նապատճն ուըյն իսահակայ , զինքն քրիս-
տոնէայ ասելով , զի լաւ գիտէր զլեզու
հայոց . և ասէր ՚ի մտի իւրում՝ թէ հո-
գեսոր բժշկութիւն և օգտութիւն ոչ կարեմ
իմանալ և տեսանել . այլ կամիմ մարմնա-
կան ինչ կերպիւ փորձել զբանչելեաց
համբաւ քրիստոնէից : Եւ եղ ՚ի մտի

իւրում զկոճն՝ յորոյ վր կոտորէը զմիսն
՚ի կրպակին, և ասէր ընդ միտս եթէ ՚ի
չոր փայտս այս երևեսցի նշան ինչ, ապա
հաւատամ թէ Ճշմարիտ է հաւատ քրիս-
տոնէից՝ և համբաւ սքանչելեացն քի և
սիրողաց իւրոց, և զայն կոճ անուանեաց
իւր հայր:

Եւ մտեալ առ նը վարդապետն ստե-
փաննոս իբրև զքրիստոնեայ՝ երկրպա-
գութիւն մատուցանէր, և հայցէր բաժին
աղօթից նորա. և տայր մարմնական ինչ
պարգևս եկեղեցւոյն և վարդապետին.
և քրծնելով աղաչէր, և կեղծաւորութիւ-
ասէր, աղաչեմ զքեզ՝ յիշել զհայրն իմ
յարժանաւոր աղօթս քո ՚ի ժամ սուրբ
պատարագին: Եւ նը վարդապետն ասէ-
ցնա, զինչ է անուն հօր քոյ. և նա ասէ՝
կոճիկ է անուն հօր իմց, ո՞ր հոգեոր:
Եւ ՚ի գիշերին յայնմիկ՝ որ էր կիրակի և
յարուել տօն տրունի, նը վարդապետն
ստեփաննոս յառանձնական աղօթս իւր՝
զար ՚ի գիշերի մատուցանէր, արտասուա-
հառաջ պաղատանօք հայցէր յայ առնել
ողորմութիւն կոճկին:

Եւ ՚ի վաղիւն ելեալ մսագործն ՚ի վա-
նացն՝ համբուրեաց զվարդապետն և գը-
նաց ՚ի տուն իւր: Եւ իբրև եհաս մերձ
՚ի կրպակն՝ էառ զհոտ անուշութեն. և

բացեալ զդուռւն կրպակին՝ ետես զկոճն
զի կանաչացեալ էր ազգի ազգի տերեւով
և ուղէշա արձակեալ՝ զոր ոչ էր տեսեալ
ակն մարդոյ : Եշտ ապա յոդւոց հանեալ
և արտասուահոս ողբովք երանի տայը
քրիստոնէիցն և իւրեանց հաւատոցն *
Եշտ ընթացեալ ՚ի տունն առ ընտանիւն
և առ ամ բնակիչսն՝ պատմեաց զմեծ և
զարմանալի հրաշն . որք եկեալ տեսին
զսքանչելիսն , և հիացեալ փառս ետուն
այ , և երկբացեցան ՚ի վերայ հաւատոցն
իւրեանց :

Եշտ ապա մսագործն իւսիւֆ առեալ
զկոճն այնպիսի կանաչացեալ շքեղութ՝
եդ ՚ի վը գլխոց իւրոյ . և ամ ընտանեօքն
և ազգականօքն գնացին առ նբ վարդա-
պետն ստեփաննոս ՚ի վանքն երերնայ . և
անկան առ ոտս նը , և հայցէին զներո-
ղութի և զթողութի յանցանաց . և ա-
սէր՝ հայր նբ՝ ես խաբէութե փորձեցի
զքեղ . և ապա խնդրեաց զմլլտութի :
Եշտ նբ վարդապետն մլլտեաց զնա ամ
ընտանեօքն և ազգականօքն՝ յաղբիւր
անապատին նբյն սահակայ . զոր ակներե-
տեսին ամքն լցու սաստիկ իջեալ յերկ-
նից ՚ի ժամ նբ մլլտութե վկայ սքան-
չելեացն այ . և եղեւ ուրախութի և ցըն-
ծութի մեծ ամ քրիստոնէից :

Ե՛ւ ապա նը վարդապետն ստեփաննոս
Եմուտ ՚ի տաճար նըյն սահակայ , և ար-
տասուալից պաղատանօք խնդրեաց յնյ ,
զի այնու կանաչացեալ կոճիւն՝ բաղում
ցաւոց առողջութիւն եղեցի : Ե՛ւ զկնի
աղօթիցն՝ ետես ՚ի տեսլեան նը . վարդա-
պետն , զի ձեղունք տաճարին բացան .
և յերկնից սաստիկ լցո փայլատակեալ
Եմուտ ՚ի տաճարն . և ընդ լուսոյն բազ-
մուկք զօրաց հրեշտակաց՝ և՝ի միջի նոցին
ահեղակերպ և զուարթատեսիլ Երիտա-
սարդ մի՝ նստեալ ՚ի վը չորեքկերպեան
աթոռոց . զոր Երեքսրբեան քաղցրածայն
բարբառով բերեալ՝ Եդին ՚ի վը նըյ սե-
ղանոյն : Ե՛ւ նա ինքն քն ձայնեալ առ նը
վարդապետն ստեփաննոս՝ և քաղցր բար
բառով ասաց , կատարեցան խնդրուածք
քո՝ զոր հայցեցերդ և զոր հայցեսդ , ով
սիրելի իմ . և ապա ամփոփեցաւ տեսիլն :

Ե՛ւ յայնմօրէ . մինչե ցայսօր և առ
յապայ՝ հաւատացեալք և անհաւատք ,
որք ՚ի հեռաւորաց և՝ի մերձաւորաց դի-
մեալգան հաւատով և յուսով յուխտն
՚ի վանքն նըյն սահակայ , առնուն զկա-
տարեալ առողջութիւն հոգւոց և մարմնոց ,
և զիարատումն ամ ցաւոց՝ շնորհօքն քի
և աղօթիւք մըր յուսկայ որդւոյն ստե-
փաննոս վարդապետին :

Եւ յաւուրս աղուհացիցն՝ զկնի տօնի
ո՞ր լուսաւորչին՝ ՚ի կիրակէի առաւօ-
տուն զկնի գիշերային ժամուն՝ ո՞ր վար
դապետն ստեփաննոս գնաց առանձին
յարեւելեան կողմն տաճարին . և ըստ իւ-
րում սովորութեն ՚ի ծունկս անկեալ՝
արտասուաբուղիս աչօք աղօթէր առ ան-
տարածմամբ ձեռաց մինչև ցերորդ ժամ
աւուրն : Եւ անկաւ զնովաւ թմրուի .
և ետես ՚ի տեսլեան զքն մեծաւ փառօք
իջեալ ՚ի վը բարձր գուշկին ամկոյ բերդի
եկեղեցւոյն , զոր յառաջագոյն շինեալ
էր ո՞ր առաքեալն թադէոս . և եկաց մնաց
անդ իբրեւ ժամմի ՚ի տեսութի մինիթա-
րութեն ո՞ր վարդապետին , և ապա վե-
րացաւ յերկինս :

Եւ յետ անցանելոյ ամաց երկոտա-
սանից՝ յամսեան մայիսի տասն և հինգ՝
յաւուր համբարձման փրկչին մերոյ զկնի
ո՞ր պատարագին՝ ելեալ ո՞ր վարդապե-
տըն ստեփաննոս և գնաց ՚ի լեառն խաչ
գլուխ , ուր ո՞ր առաքեալն թադէոս և
յետ նորա ո՞րն գրիգոր խաչ դրոշմեալ
օծեցին , զոր յառաջագոյն յիշեցաք :

Եւ զի աղդմամբ ո՞ր հոգւոյն՝ յառաջա-
գոյն գիտաց զվախճանն իւր , և անդ ՚ի
լերինն առաջի ո՞ր խաչացն զծունկսն ՚ի
վը ապառաժ վիմի միոյ եղեալ բաղկա-

տարած մաղթանք և յորդահոս արտասու-
ռոք հայցէր յայ, զի առաքեսցէ նմա
զիրեշտակ խաղաղութե՝ որ եկեալ քաղց
րութբ աւանդեսցէ զհոգի իւր, և ան-
խոռվ խաղաղութբ անցուսցէ ընդ դա-
սըս օդային այսոցն չարութե՝ որք են ՚ի
ներքց երկնից:

՚ և և խնդրեր զպէս պէս հայցուած-ս
վն ամցուն . աշխարհի խաղաղութի, քրիս-
տոնէից անդորրութի, եկեղեցեաց հաս-
տատութի, հայրապետաց ուղղափառութի,
քարդապետաց անձանձիր քարոզութի,
քահանայից սրբութի, կրօնաւորաց արի-
ութի, սյգեստանեայց պտղաբերութի,
պարտիզաց առաւելութի, խաշանց և
անասնոց անսխալ ծննդականութի, տանց
շինութի, արանց խոհեմութի, կանանց
պարկեշտութի, երիտասարդաց ողջախո-
հութի, կուսից զգաստութի, տղայոց
պահպանութի, բարեաց լիութի, աղքե-
բաց յոլովութի, ծովու խաղաղութի,
ամպոց քաղցրութի, անձրեաց յորդութի,
գետոց հանդարտութի, թագաւորաց
հաշտութի, բռնաւորաց խաղաղութի,
սողնոց և ամ մնասակար զեւնոց՝ և թիւ-
նաբեր Ճճեաց վերացումն, հիւանդաց
առողջութի, տկարաց զօրութի, դլորելոց
կանգնումն, նեղելոց անդորրութի, և

ամ վերաւորելոց փարատումն և առող-
ջութիւ, մեղաւորաց դարձ և ապաշխա-
րութիւ, ննջեցելոց հանգիստ և ողոր-
մութիւ և երկնից արքայութիւ:

Եւ ապա յետ աղօթիցն եղե ՚ի զար-
մացման և ետես ՚ի վը ծովուն յարեմը-
տեան ՚ի հիւսիսոց կողմանէ ամպ լուսա-
փայլ. և ՚ի վերաց ամպոյն տիրամայր նը-
ածածինն, որ ունէր ՚ի գիրկն իւր զոր-
դին միածին լուսափայլդիմօք. և երկու
հրեշտակք եղեալ պսակ լուսաձանչանց և
աստեղափայլ ՚ի վը գլխոց նը ածածնին:
Եւ ձայն եղե ՚ի լուսափայլ մանկանէն
առ նը վարդապետն՝ որ ասէր, կատարե-
ցան ամ խնդրուածք քո, զորս յառա-
ջագոյն խնդրեցեր. և զոր այժմ խընդ-
րես՝ որք հաւատով աղացեն զիս ապաւի-
նելով ՚ի բարեխօսութիւնո՞ւ ես կատարե-
ցից զամ խնդիրս նոցա. և դու Եկ և
վայելեա զանսպառ ուրախութիւնն, զոք
պատրաստեցեր դու քեզ քոյին անտա-
նելի ճգնութբդու:

Եւ յետ աւետաւոր քաղցր բարբա-
ռոյն տեսիլն վերացաւ. և ինքն մեծաւ
գոհութբդ փառաւորելով զքս էջ ՚ի լեռ-
նէն՝ և եմուտ ՚ի տաճարն նը. և անդ գո-
հացողական և որտահառաջ պաղատանս
վերառաքէր առ ամենանը երրորդութիւն,

միջնորդ և բարեխօսու ունելով զերանու-
հի կցմն մարիամ։ Եւ յետ համբարձ-
մանն՝ ՚ի նոյն կիրակէին հրամայեց միում
աշակերտացն իւրոց՝ որ էր յոյժ խստա-
կրօն և ձգնազդեաց աբեղայ, զի հըսկ-
մամբ մատուցանիցէ զոք պատարագն։
Եւ ինքն հաղորդեցաւ ՚ի կենդանարար
սուրբ մարմնոյ և յարենէ որդւոյն այ։
Եւ անկաւ ՚ի մահիձս յաւուր երկու
շաբթի։ և պայծառացան երեսք նը ոնց
անուանակցին իւրոյ ստեփաննոսի նա-
խավեային։ և բազումիրատս հոգէշահս՝
և բանս միսիթարականս խօսէր առ ամ
եղբարսն, որք ՚ի կարգաւորաց և յաշ-
խարհականաց և յամգաւառաց գային,
և ընդունէին ՚ի նմանէ զօրհնութի՝ և
զաւողչութի պէս պէս ցաւոց իւրեանց՝
և ուրախութի՛ գառնային։

Եւ հասեալ ՚ի շաբաթ օր կիրակմտի
երեկոյին՝ ՚ի մեծի հրաշտառ տօնի գա-
լուստեան հոգւոյն սբյ՝ հրամայեաց եղ-
բարցն բառնալզինքն և մուծանել յե-
կեղեցին ՚ի տաճար սրբոյն սահակայ։
Եւ պատուիրեաց պաշտոնէիցն ամցուն՝
զի յերեկորեայ մինչև ցաւաւօտն զգի-
շերապաշտօն կարգ ժամուցն հսկմամբ
կատարեացեն։

Եւ յորժամհասին յիւղաբերից աւե

տարան՝ մտին ՚ի տաճար քահանայքն, և
սարկաւագունքն, զի զգեցցեն հան-
դերձա՝ և ընթեռնուցուն զիւղաբերից
ոք աւետարանն, տեսին զնք վարդա-
պետն ստեփաննոս ՚ի ծունկս անկեալ՝ և
զբաղուկս յերկինս տարածեալ, և այն-
պէս աւանդեալզհոգին իւր առ ած. և
նոքա ոչ ումեք յայտնեցին զայն՝ մինչեւ
ցարձակելժամուն: Եշւյետ արձակման
պատարագին՝ ազդ արարին ամեղբարցն.
որք ձայն բարձեալ յոյժ ողբալի սգով
և մորմոքմամբ արարին կոծ մեծ ՚ի վը նը:
Եշւապա պատեցին զնա մաքուր կը-
տաւօք ըստ օրինի, բայց զմազեղէնն՝ որ
ոչ էր փոխեալ երբեք, ոչ հանին յանձ-
նէն ըստ հրամանի ոքյ: Եշւյաւուր եր-
կուշաբթի զկնի ոքյ պատարագին զար-
դարեցին փոքրիկ սայլմի, և իջուցեալ
զնք մաքուր մարմինն եղին ՚ի վը սայլին,
զի տարցեն ՚ի վանքն արգելան՝ և անդ-
ամփոփեսցեն, ող և հրամայեալէր նց
յառաջագոյն: Եշւիսկոյն տեսին, զի
բազումք աստի և անտի՝ ալք և կանայք՝
հիւանդք և ախտաժէտք՝ եկեալ անկան
առաջի սայլին՝ ուր էր եղեալ ոք մար-
մինն. և բժշկեցան ՚ի ցաւոցն, և առող-
ջացան ՚ի հիւանդութեց իւրեանց:

Եշւապա Ծեալզլուծս եղանց՝ վառ-
եալ

Եալ լապտերօք և անուշահոտ խընկօք
տարեալ՝ի վանքն արդելան, և անդ ժո-
ղովեալ բազում եպիսկոպոսք և վարդա-
պետք և անթիւ քահանայք և ժողո-
վուրդք, մեծաւ պատուովեդին՝ի դիրս
հանգստեան։ Եւ շինեցին՝ի վերայ ոք
մարմնոյն մատուռ վայելուչ, որ մինչեւ¹
ցայսօր և առ յապայս առնէ բազում
ցաւոց՝ և աղգի աղգի ախտաժետաց բը-
ժշկութիս։ և մանաւանդ՝ի կատաղեալ
շանց և գայլոց և յամչար գաղանաց խա-
ծատելոց։ որք՝ի հեռաւառաց և՝ի մերձա-
ւորաց՝ հաւատացեալք և այլաղգիք՝ հա-
ւատով և յուսով դիմեալ գան յուխտ
՝ի ոք գերեզման և յաղօթատեղ ոքյն՝ և
առնուն զկատարեալ բժշկութին, աղօ-
թիւք և բարեխօսութե ստեփաննոսի
ոք վարդապետին՝ ոքյ յուսկայ որդւոյն։
Եւ արդ՝ զմի զօրութի և սքանչելագոր-
ծութի շնորհեն ամի՝ այս երկու ոք մե-
նաստանքս, այսինքն՝ անսպատն սրբոյն
իսահակայ, և վանքն արդելանից՝ ՚ի փա-
ռըս ամենազօր տէրութե։

Եւ զի ոք վարդապետս այս ստեփան-
նոս՝ ՚ի մանկութէ իւրմէ էր յոյժ պա-
հեցօղ, մինչ զի յաւուրս քառասնորդաց
աղուհացից պահոց, ՚ի տասներկու օրն
միանգամ ճաշակէր հաց, և զայն ևս ոչ

յագ , այլ հոգեպահ մի . և յաւուրս
չորեք շաբաթի և ուրբաթի՝ և զամ տէ-
րունի շաբաթսն անսուաղ անցուցանէր :
Եւ էր յոյժ ժուժկալ , աղօթասէր և
արտասուեղ , լռակաց և խորհրդական ,
անձանձիր ութուցանօղ , և յանդիմանիչ
ստահակաց , քաղցրախօս՝ գթած՝ և
առատաձեռն , երկայնամիտ և ողորմած ,
լի ամ շնորհօքն այ : Արոյ յիշատակն
օրհնութք եղիցի , և աղօթիւք նորին
տէր յա քան ամի մեզ ողորմեսցի ,
ամեն :



Ε	Ε	Ω	Ω	Ε
Ω	Ι	Ε	Θ	Ι
Η	Ι	Ε	Ο	Η
Ξ	Ω	Η	Δ	Ω
Ω	Υ	Ε	Α	Ω
Η	Ε	Α	Ο	Η
Σ	Ε	Ω	Ι	Φ
		·Φ		

Ղ

Ա մենանը Երբորդութին փրկէ զքեղ
յամփորձութէ . փարատեցաւ ցաւ
սրտի քո . մեծ ուրախութի և շնորհ գը-
տանես յայ , և դու բարձրանաս մեծ-
պատուվ : Բ. յլ յորժամընծայեցար 'ի
ծնողաց քոց՝ մեծ հիւանդութի կրեցեր ,
և հալածական եղեր յազգականաց քոց և
'ի բարեկամաց : Բ. այց պատրաստ կացն
զանձն քո 'ի գաղանաց և յանօրինաց . զի
փոթորիկ կայ առաջի քո , և չարախօսքն
քո շատ են . գնա՛ աղօթք արա առ ած-
որ փրկիս 'ի նոցանէ . և զինչ բան զոր
խորհեալ ես՝ կատարի 'ի բարին :

Բ.

Բ անն ած անսկիլըն՝ որ 'ի հօրէ առաքե-
ցաւ , նա՛ է յոյս նեղելոց , և փրկէ զքեղ
յամփորձութէ . 'ի բաց մերժեցաւ նե-
ղութի սրտի քո . և կատարեցաւ վիճակն
քո 'ի բարին . զինչ բան սկսեալ ես՝ ած-
յաջողէ քեղ և առաջնորդէ : Ա. բդ արա
զիսորհուրդ քո . թէ վաճառ ունիս՝ շա-
հիս , թէ 'ի ճանապարհ Երթաս՝ բարեաւ-
գաս , թէ 'ի հեռաւոր տեղիս մարդ ու-
ժիս՝

նիս՝ բարով տեսանես, թէ հիւանդ ու-
նիս՝ շուտով առողջանայ, պինչ կորու-
սեալ ես՝ գտանես :

¶

¶ Անա՞ մի՛ ինչ հարցաներ՝ զե բաղում
նեղութիւ ունիս . և տրտմութիւ կայ
առաջի քո . և վիշտք մահու տրամեցուցին
զքեղ . և Եհաս ՚ի վր քո նեղութիւ մեծ,
ոչ գտաւ քեղ բարեկամ ոք և օգնա-
կան . ՚ի հայրենական ժառանգութէն
զրկեցար, և այժմ տարակուսեալ ես վա-
կենացդ : Ըրդ աղաջեա զած և ուխտեա
նմա, որ կործանէ զթշնամին քո, և հանէ
զքեղ ՚ի նեղութ ՚ի հանգիստ, և զկամին
որտի քո ՚ի բարին կատարէ :

¶

¶ Առւ ով սիրելի՝ վա այդ բանիդ հար-
ցանես և հոդաս հանապազ . բայց ած-
փրկէ յամ նեղութէ զանձն քո . և յան
կարծակի հարստանատ յայնպիսի տեղեց՝
ուստի ակն ոչ ունիս . և բանայ քեղ ած-
դուռն բարի : ՚ի ձանապարհ երթաս,
բարեաւ յետս դառնաս, և թշնամին քո
յամօթ լինի . եթէ հեռաւոր ունիս՝
տեսանես . վիշտք մահու տրամեցուցին
զքեղ բայց մոռանատ զայն . փոխիլ կամիս
՚ի տեղոջէ ՚ի տեղի, ստկաւ մի համեերեա

և ապա փոխեաց, և բարի գտանես. մեծանաս և ուրախ լինիս. յուսան առ ած՝
և ոչ երբէք հասանի քեզ վնաս :

Ե

Երանի է քեզ ով սիրելի՝ զի ած է քեզ
օգնական. բայց դու շատ ես աշխատել,
և ոչ գտեր հանգստութի, և ոչ օգնական
քեզ՝ ոչ եղբայր և ոչ սիրելի : Ո՞ղի ծովու
ծփիս յալեաց, և ոչ գտանես հան-
գիստ. ով սիրելի տուր փառս ոյ՝ զի ու-
րախութի հասանի քեզ՝ նմանէ և առող-
ջութի. թէ փոխիս՝ տեղեացդ՝ բարց
հանդիպիս, և ամդժուարութի՝ ի բարին
դտունայ. ՚ի յաւագաց պատրաստ կաց.
որոգայթ երեխ քեզ, ՚ի յընկերաց և ՚ի
մատնողաց պատրաստ կաց :

Օ

Օ արմացեալ եմ ով այր՝ զի երկմաեալ
ես՝ և ՚ի թշնամեաց սասանիս, և խորհիս
վու մեծանալց, և ոչ խորհիս առնել զա-
ղացանս ոյ. վու այնորիկ եկն ՚ի վու քո նե-
ղութի մեծ, և թշնամին քո զօրացաւ ՚ի
վերայ քո: Պանա աղացեա զած և ուխտ
կատարեա նմա՝ զի հանցէ զքեզ յոմ
նեղութէ, և աղատիս յորոգայթէ. վա-
ճառ ունիս՝ սիրով շտհիս :

Ե

Ավայր՝ առնուս զոր խորհիս և ուրախ
լինիս և ազատիս ՚ի չարեւ գնա գոհա-
ցիր զայ , և ած հանէ զքեղ յամ նե-
ղութէ և որոգայթէ . զի դու բարի կա-
միս և ած բարի առաջնորդէ քեղ . զինչ
բան զոր սկսեալ ես , յաջողէ քեղ ած .
զոր ցանկաս՝ տեսանես . զոր կորուսեալ
ես՝ գտանես . թէ հիւանդ ունիս՝ ողջա-
նայ , թէ տուն շինես կամ հողագործուի
տունես՝ բարի գայ և արդիւնաւոր լինի .
՚ի կախարդաց պատրաստ կաց ,

Ի

Ավարդ՝ Ժամանակ դժուարուե եկն
՚ի վը քո . և տրտմեցար յազգականաց
քոց և ՚ի բարեկամաց . և ազգն քո նեն-
գաւոր եղեն քեղ . և եղեւ աւերումն տան
քո . և շրջեցար դու ՚ի վը երկրի . Ե. Ա. Լ.
գոհացիր զայ՝ զի գտլոց է քեղ ուրախուի
մեծ . և զով խնդրես՝ տեսանես . թէ ՚ի
ճանապարհ երթաս՝ բարով յետս դառ-
նաս . զինչ բան առնես՝ յաջողէ քեղ
ած . զուխան զոր խոստացեալ ես այ՝ կա-
տարեա . թէ վաճառ առնես՝ շահիս .

ՈՒ

Այս յառաջացար ՚ի բարին . զոր ունէիր
զքկեցար յայնմանէ . ոչ կայր քեղ օդնա-
կան ,

կան, ոչ եղբայր և ոչ սիրելի : Բայց դու
անլսութեա, և աղօթից ծոյլ . վա այնո-
րիկ եկն ՚ի վը քո նեղութ, և դու շըջե-
ցար յօտար երկիր՝ բայց ոչ մնասեցար :
Ապա թէ ոչ դառնաս ՚ի կամս այ, գայ ՚ի
վը քո բարկութի այ, և լինի յափշաս-
կութի ընչեց քոց և աւերումն տան քո .
և գործք ձեռաց քոց՝ ոչ յաջողի . և զոլ
խնդրես՝ ոչ տեսանես . զոր կորուսեալ
ես՝ ոչ գտանես : Այլ թէ դառնաս ՚ի
կամս այ, նա փակեալ դուռ մի բանայ
քեզ և յաւելու բարիս : Գնա աղօթք
արա՛ առ ած, և ուխտ կատարեա՛ . որ
աղատիս ՚ի տանջտնացդ :

Փ

Օ որ ինչ ՚ի ձեռին քում բան ունիս
յաջողէ քեզ ած . և արա՛ զխորհութ-
սրտի քո : Աւետիս տուր անձին քո՝ զի
ուրախանայ ՚ի գործդ զոր ՚ի ձեռին ու-
նիս . մեծ օգուտ և շահ գտցես անտի ,
և բազումք կերիցեն զվաստակս ձեռաց
քոց : Այլ հիւանդացար շատ՝ որ ՚ի մահ
մերձ եղեր, և ած եհան զքեզ ՚ի նեղութ
և ապրեցցց : ՚ի հեռաւոր տեղեաց ուս-
տի ակն ոչ ունիս՝ բարի գալոց է քեզ .
և տրամութի քո՝ յուրախութի փոխարկի .
զի դու բարի կամիս՝ և ած բարի տուաջ-

նորդէ քեզ . և զաւակ մի խորհաւոր լինի ,
քեղ : Գնա աղաչեա զած և ուխտ կա-
տարեա նմա . զի ողորմութի նը եկեսցէ
՚ի վերայ քո . թէ ՚ի ձանապարհ երթաս՝
բարով գաս՝ և բարւոյ հասանիս :

¶

|| Վայր՝ մի' ապաւինիր ՚ի խորհուրդ քո
և մի' մոռանար զուխտն այ . և տրտմունի
քո՝ յուրախունի փոխարկի . ՚ի հեռաւոր
տեղեաց՝ ձայն աւետեաց լսես , կամ հե-
ռաւոր մարդ տեսանես . և յայ տռողջունի
գտանես . և դարման ոսկերաց քոց ոչ
պակասի . բայց ծնողաց քոց դիմադարձ
մի' լինիր . և զոր ինչ խնդրես յայ՝ տայ
քեղ ած : Եւ փոխիլ տեղոջէ ՚ի տեղի
բարի լինի քեզ . և յամ դժուարութէ
աղատիս . և զինչ խորհուրդ զոր ունիս
և զինչ դորձ կամիս առնել գնա արա ,
շատ շտէ և արդիւնս առնուս . և վախ-
ձան քո ՚ի բարի օր լինի :

¶

|| Վայր՝ ահա տեսանեմզ քեղ և զխոր-
հուրդ քո որ նմանիս ալեաց ծովու .
որպէ ձնձղուկ որ անկաւ ՚ի ձեռս որսո-
ղաց , նցյնպս և դու ՚ի ձեռս բռնաւորաց :
Վայա թէ ոչ դառնաս ՚ի կամս այ , գայ ՚ի
վը քո նեղունի , և լինի յափշտակունի տան

քո և ընչեց քոց : Եւ դու հալածական
լինիս . և վեշտք մահու տրտմեցուցանեն
զքեղ . և յօտար երկիր վտարիս : Կանա
տոլաչեա զած , և փրկէ զքեղ յամ որո-
գայթէ և ՚ի նեղութէ , և բանայ քեղ
դուռն բարւոյ և շահիս . և ինչ դործոյ
ձեռն արկանես , յաջողէ քեղ աճ :

Խ

Վ մարդ՝ ողորմուին ոյ լինի ընդ քեղ
զամաւուրս կենաց քոց . բայց ՚ի յօ-
տար աշխարհ վտարեցար . զով խնդրես՝
տեսանես . զինչ կամիս առնուս . զոր կո-
րուսեալ ես՝ գտանես . զի յայ շատ շնորհ
ունիս . և զաւակ մի շնորհաւոր լինի քեղ :
Բայց վեշտք մահու տրտմեցուցին զքեղ
իսկ բան և խորհուրդ զոր ունիս՝ գնա
արա , շահիս և բարի գտանես : Եւ ՚ի քո
վաստակէն բազումք կերիցեն . և պար-
գես ՚ի յայ առնուս . ՚ի միշոցաց և ՚ի
կախարդաց պատրաստ կաց :

Ծ

Վ այր գունման ես գետոյ որ երթաց
յերկար և ոչ կայ նմա դադարումն .
Դու հալածական եղեր և ՚ի հայրենական
ժառանգութ զրկեցար . և ՚ի ծնողաց քոց
ոչ խնդացեր . զըաբախտ ես զի ամմորդ
զրկեալ զքեղ : Երդ աղաչեա զած և

ուխտ կատարեան նմա , որ օդնէ քեզ
և փրկէ յորոգայթէ : Դառւ մի՛ տրտմիր
զի բանիդ դժուարութն ՚ի լցոս ելանէ .
և քեզ ձայն աւետեաց գայ և դու խըն-
դաս և ուրախանաս . յանկարծակի հա-
րըստանաս՝ ուստի տկն ոչ ունիս :

Ա

|| Վսիրելի՝ կակղացն զբարքդ քո և պա-
հեա զկամն այ . և տուր հաց քաղցելոց
և ջուր ծարաւեաց . Վպա թէ ոչ դառ-
նաս ՚ի կամաց քոց , գայ ՚ի վը քո նեղութ-
մեծ և յափշտակութի ընչից քոց և աւե-
րումն տան քո . և ինչ գործոյ ձեռն ար-
կանես , ոչ յաջողի . և որում ցանկաս՝ ոչ
հասանիս . և զոր կորուսեալ ես՝ ոչ գտա-
նես : Վպա թէ դառնաս ՚ի կամն այ և
զպատուիրանս նը պահես , ողորմութին
այ հասանէ ՚ի վը քո . և յաւագաց մե-
ծարիս . և յաւելու փառք քո : || Կ արե-
գակն ՚ի վը արարածոց՝ այնպէս այ բա-
րին հասանէ ՚ի վը քո , և յաջողէ քեզ
զոր ինչ դու կամիս . և տարին բարով
գայ քեզ :

Ճ

|| Վ մարդ՝ աւետիս ռամ քեզ . զի դու
բարի կամիս և ած բարի առաջնորդէ
քեզ . և ած փրկէ զքեզ յամորոգայթէ :

ի ինիս ցանկալի ամցուն և ոչ լինի պա-
կասումն ընչեց քոց և տայ քեզ ած փառք
և մեծուի : Կնա աղաջեա զած և ուսա
կատարեա նմա որ աղատիս 'ի չարէն .
զինչ խորհուրդ որ ունիս՝ արա և մի'
երկնչեր . զի ող կամիս դու , այնպէս
կատարի գործք քո :

Չ

Վ մարդ՝ ձայն ցնծութե և ուրախուն-
մատուցանեմ քեզ . զի դու սասանե-
ցար յազգաց և 'ի բարեկամաց քոց . և 'ի
շատ իրաց զբկեցար : Հունքո հայրենի՝
դարձաւ 'ի յաւեր . և դու շրջեցար 'ի վը¹
երկրի . և սուգ մահու արտմեցոց զքեզ .
ոյլ այժմ փառք տուր ոյ՝ զի հասեալէ
քեզ ուրախութի մեծ . բազմանան ինչք
քո , ոսկին և արծաթն : Ուշ հեռաւոր
ունիս գայ . և զինչ խորհուրդ ունիս
կատարի :

Գ

Վ մարդ՝ պարգևեցաւ արձակումն կա-
պանաց քոց . ող մոգքն որ ելին յարեւե-
լից և եկեալառ քա գտին զնա և ուրախ
եղեն , նոյնպէս և դու ուրախանաս 'ի
գործս քո և 'ի խորհուրդդ զոր խորհիս :
Ուշ 'ի ճանապարհ երթաս՝ բարով յետս
դառնաս և բարի գտանես : Ող մովսէս

յաղթեաց փարաւոնի և Եգիպտացւոցն ,
նոյնպէս և դու յաղթես թշնամեացքոց .
և զինչ խորհեալ ես՝ գնա արա , ՚ի
բարին առաջնորդէ քեզ ած :

Ճ

Վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ քեզ .
եղեր դու ՚ի մանկութէ քումմէ հալա-
ծական . և պանդխտութի կրեցեր զամ
աւուրս կենաց քոց . և սասանեցար յաղ-
գաց և ՚ի յանօրինաց : Վ սիրելի մի
երկնչեր՝ զի հասեալ է քեզ ուրախութի և
կտտարեցաւ վիճակն քո ՚ի բարին . զինչ
խնդրես ՚ի յայ՝ տաց քեզ ած . թէ ՚ի
ձանապարհ երթաս՝ բարով գաս :

Ա

Վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ .
արդ ՚ի չարդ յիմարել ես և ընկերի քում
չար առնես . և ամցուն վնաս խորհիս .
Ծնկեա զնենգութի ՚ի մտաց քոց . և ընկե-
րիդ չար մի խորհիր . որ չանկանիս ՚ի մեծ-
նեղութի , և պատուհաս գայ ՚ի վր քո :
Ա չինդացիր ՚ի ծնողաց և ոչ ՚ի զաւա-
կաց . ինչ գործոյ ձեռն արկանես՝ ոչ
յաջողե քեզ : Վ պա թէ դառնաս ՚ի կամն
այ՝ և ընկերի քում և ամ մարդոյ նեն-
գութի ոչ առնես , ծագէ ած զողոր-
մութի իւր ՚ի վերայ քո և ոչ լինի պա-
կա

կասումն ընչեց քոց . և մեծաւ պատուով
վախճանիս :

Յ

Վ մարդ՝ աւետիս տամ քեզ . զե կա-
տարեցաւ վիճակն քո ՚ի բարին . և դու-
խորհուրդ ունիս ՚ի սիրտդ , և տարա-
կուսիս , մի՛ երկնչեր՝ գնա՞ արա . զե
խորհուրդ քո ՚ի բարին կատարեցաւ :

Արդ լուսինն որ զիսաւար գիշերն լու-
սաւորէ՝ այնպէս լուսաւորի խորհուրդ
քո զոր խորհիս . և հասանէ քեզ բարուի
՚ի յոյ . և ում ցանկաս հասանիս . և յա-
ւագաց բարի գտանես . և աւեաեաց ձայն
լսես և խնդաս . գնա՞ աղաչեա զած որ
խորտակէ զքո թշնամին :

Ն

Վ մարդ՝ ահա ՚ի նենդութի տեսանեմ
զքեզ . զե մեծամեծ վտանգ կոյ առաջի
քո , և ՚ի նեղութի անկանիս : Բազումք
խորհին քեզ չարիք , և դու ոչ իմանաս
զկորուստ անձին քո . և զե ոչ առնես
զիսմն այ՝ վո այնորիկ եկն ՚ի վը քո նե-
ղութի . զենչ խորհուրդ ունիս՝ ոչ կա-
տարի . թէ ՚ի ձանապարհ երթաս՝ ոչ լինի
քեզ բարի : Այլ թէ դառնաս ՚ի կամն
ոյ և զուխտն զոր խոստացեալ ես՝ կտ-
տարես , յաջողութի գտանես , և յաւե-
լու փառք քո :

Շ

Վլ մարդ՝ բազում բարիս տեսանեմ
առաջի քո · առնուս պարգևս ՚ի մեծա-
մեծաց · ուրախանաս և բարւոյ հանդի-
պիս · ինդաս ՚ի զաւակէ և ՚ի կնոջէ
քումմէ · և լինիս յիշատակ ծնողաց քոց ·
Եւզինչ ինդրես ՚ի յայ՝ առնուս · զըր
կորուսեալես՝ գտանես · թէ հեռաւոր
ունիս՝ գայ զոր տեսանես · թէ հիւանդ
ունիս՝ ողջանաց · և օր քան զօր լաւ
լինի քեզ ·

Ո

Վլ մարդ՝ պարտ է քեզ յամժամ գո-
հանալ զայ, զի թէ պէտ տրտմեցար,
բայց դարձեալ ուրախանաս, և շնորհն
այ հասանէ ՚ի վը քու · Այլ պատրաստ
կաց ՚ի չարեաց · և պարգև և շնորհ
՚ի յայ առնուս · և յորդւոց ինդաս ·
և լինիս ցանկալի ամենեցուն · և ոչ լինի
պակասումն ընչեց քոց · թէ փոխիս ՚ի
տեղոջէ ՚ի տեղի՝ բարւոյ հանդիպիս ·
ձայն աւետեաց լսես · և հեռաւոր մարդ
տեսանես · քո մահն ՚ի բարի օր լինի · և
երազն որ տեսեր՝ բարի է ·

Չ

Վլ մարդ՝ փառաւորիս յամցունց · և
առնուս բարի իշխանութիւն, և թշնամին քո

յամօթ լինի . և յօտար երկիր գնաս , և
առնուս պարգես . և յամդժուարութէ
ազատիս . և զով խնդրես՝ բարով տեսա-
նես . և ում ցանկաս՝ հասանիս : Վանա
աղաչեա զած և ուխտ կատարեա նմա ,
որ ազատիս 'ի շատ չարէ և 'ի փորձանաց .
և բանաց քեզ առ ած դուռն բարի :

¶

Պարդև բարեաց տացէ քեզ ած . չարն
հեռացաւ և բարին մօտեցաւ կամօն
այ . Եւ դուես խմաստուն որ խրատ տաս
ամցուն . բայց պահեա զանձն քո 'ի չար
կամաց . և զոր ինչ գործես՝ 'ի բարին
առաջնորդէ քեզ առ ապա-
ւինէ որ կործանէ զքո թշնամին . և հանէ
զքեզ յամորոգայթէ . և լինիս ցանկաւե
ամցուն . և ոչ լինի պակասումն ընչեց քոց :

¶

Վարդ՝ մեծ էիր և խոնարհեցար .
վասաւ ածես և ոչ կարես կալ 'ի վը մից
խորհրդաց . դումի տրտմիր՝ գալց է քեզ
ուրախութի մեծ՝ ուստի ակն ոչ ունիս .
զի դու բարի կամիս՝ և ած բարի առաջ-
նորդէ քեզ : Փոխանակ տրտմուն՝ ու-
րախութի լինի քեզ . բարի և շնորհ 'ի
յաց առնուս : Վանա արած զխորհուրդ
քո և մի տարակուսիր . թէ վաճառ առ-
նես

ՆԵԱ՝ շահիս . ԹԷ ՚ի հանապարհ երթաս՝
բարով գաս . այլ ՚ի վը բախտիդ քննութի-
առնես և հարցանես , ած բանայ քեզ
զգուռն բարւոյ , և յաւելու փառք քո :

Ո

ՎԼ մարդ՝ սասանեցար յազդաց և ՚ի յա-
նօրինաց . հասաւ ՚ի վը քոյ տրամութի ,
և եղեւ աւերումն տան քո ՚ի բարեկամաց
քոց . և խորհուրդ քո հանապաղ ՚ի կո-
րուստ ելոնէ : ՎԼ այլ՝ մի՛ հոգար զե
շուտ գայ ՚ի վերայ քո բարին . և առ ած
հանէ զքեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս , և քո
բաղձանացդ հասանիս :

Ո

ՎԼ մարդ՝ վասն կենաց քոց ընդելո՛ր հար-
ցանես . զինչ յիմորեալես և չար խոր-
հիս . և ամենեցուն վնաս առնես . ՚ի տե-
ղոջէ ՚ի տեղի փոխիս՝ և ուրեք ոչ հաս-
տատիս . զոր կորուսեալես ոչ գտանես :
Բնկեա զնենգութիւն ՚ի մտաց քոց .
ընկերի քում և ամ մարդոյ չար մի՛ խոր-
հիր . թէ չլսես՝ փորձանաց հանդիպիս .
պնա աղաչեա զած որ աղատիս ՚ի չարէ :

Ո

ՎԼ սիրելի՝ տնւր փառս այ . զե գալոց է
քեզ ուրախութի ուստի ակն ոչ ունիս :
Եւ ՚ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ .

և զաւակ մի խնդամբոտ տեսանես . և տայ
քեզ ած առողջութի . պատրաստ կաց ՚ի
չարէ որ չանկանիս ՚ի փորձութի . և զինչ
քան ունիս ՚ի ձեռին՝ ՚ի բարին առաջ-
նորդէ քեզ ած . ՚ի հեռաւոր տեղեաց
ձայն աւետեց լսես , կամ հեռաւոր մարդ
տեսանես . գնաա արտ զիսորհուրդ քո .

Տ

|| վ մարդ՝ ուրախութի մասուցանեմ
քեզ . զի գու վարանելես և տարակու-
սեալ . զըաբախտ ես , զոր ինչ տաս՝ կովով
առնուս . ումբ բարի առնես՝ նա քեզ
չար առնէ . Այլ յաղօթից և աղաճանաց
դու մի՛ գադարիլ . գալոց է քեզ ուրա-
խութի ուստի ակն ոչ ունիս . հեռաւոր
ունիս գայ . թէ աղքատ ես՝ հարստո-
նաս . թէ հիւանդ ունիս՝ ողջանայ :

Բ

|| վ մարդ՝ ցնծութի և ուրախութի տամ
քեզ . զի գու բարի ես և ած բարի ա-
ռաջնորդէ քեզ . և ումբ ցանկաս՝ հասա-
նիս . բայց թշնամիքն քո շատ են . այլ
դու մի՛ երկնչեր՝ ՚ի նոցանէ՝ զի ած է քեզ
օդնական : Պատրաստ կաց որ չմտանես
՚ի բանդ . իրաւի տուգանք տաս , այլ իրք
զոր կորուսեալ ես՝ գտանես : ՚ի ձոնա-
պարհ կամիս երթալ , մի երկնչեր՝ գնա .

ընդոր երթաս՝ բարով գաս • զինչ բան
և զինչ խորհուրդ զոր ունիս՝ յաջողէ
քեզ ած և՝ ի բարին կատարէ :

Յ

Ավ մարդ՝ բազում բարիս տեսանեմ
առաջի քո • առնուս պարդես ՚ի մեծամեծ
աց • ուրախանաս և բարւոյ հանդիպիս:
Խնդաս ՚ի զաւակէ և՝ ի կնոջէ քումմէ .
և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց • թէ
փոխիս ՚ի տեղեացդ՝ ոչ հաստատիս • զի
ամքեան նենդաւորք են քեզ: Երւ՝ ի մար
դոյ բախտ ոչ ունիս , այլ քո բարին ՚ի
յայէ . և տայ քեզ ած զիւր ողորմութին
անչափ . և յամդժուարուէ ազտափիս :

Յ

Ավ մարդ՝ չարն հեռացաւ ՚ի քէն և բա-
րին մօտեցաւ . այլ սասանեցար ՚ի յաղ-
գաց և անօրինաց • և աղդն քո նենդաւոր
եղեն քեզ: Պատրաստ կաց ՚ի թշնամեաց
քոց , որ մազքն չար խորհին քեզ . և՝ ի
յընկերացդ փոթորիկ կայ առաջի քո •
դատաստան ունիս կամ ձանտպարհ կամ
վաճառ՝ հաբերեաւ:

Փ

Անղամ մարդոյ մի՛ լինիր սիրելի՝ որ
յետոյ չմնասիս . և՝ ի ձեռաց քոց իրք ես
կորուսեալ , մի՛ տրտմիր՝ ՚ի քեզ դառնայ:

Ո ինչ խորհուրդ ունիս՝ կատարե՛ ած .
բայց սակաւ մի համբերեա . գալոց էր ՚ի
վը քո տրտմութի՝ բայց ած խափանեաց .
և բազում ուրախութի կայ առաջի քո :
Աման ես աբրահամու , որ ած զինքն սի-
րեաց և ՚ի տրտմուե աղատեաց . նոյնպէս
և դու աղատիս յամ չարեւ :

Վ.

Ով այր՝ տեսանեմ զքեղ զի մարդ մի
լեզուաւ և սրտիւ չար խորհի վն քո ,
կամ հոր մի փորե քեղ այլոչ կարե վնաս
առնել քեղ : Գնա ուխտ կատարեա այ՝
որ ՚ի շատ չարե փրկեցար . զի հասեալ էր
քեղ նեղութի մեծ , այլ ած դարձցց
դարն ՚ի գլուխ թշնամոցն քո : Աման ես
դու խահակայ , որ ած օգնեաց նմա և
փրկեաց զնա , և բազում մեծութե և
փառաց հասաւ . նոյնպէս և դու ուրա-
խանաս կամօքն այ , և հասանիս բազում
փառաց և պատոց :

Եւ այսոցիկ ամցուն գիտօղն՝ է ած ձշմարիս .
զի մարդ ոչ է տեսօղ սրտից և ապագայից , այլ
միայն ած : Ուստի զոր ինչ առեն և դրեն իմաս
տասէլք , թէական կարծեօք են : Վն որոյ նմա
միայնոյ այ՝ գիտողին գաղտնեաց և յայտնողին
ծածկութից՝ փառք ՚ի յամ արարածոց ՚ի յաւե
տեանս յաւիտենից , ամեն :

Խ	Յ	ԵՐԻԱՆ
ԽԵՐԵՎԱՆԻ	ԵՐԵՎԵ	ԿԱՐ
ԽԵՐԵ	ԵՐԵՎԵ	ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԵՐԵՐ	ԵՐԵՎԵ	ՔԱՐԵՆ
ՀԵՐԵ	ԵՐԵՎԵՐ	ԼԱՐԵՐԵՐ
ՓԵՐԵՎԵՐ	ԼԱՐԵՐ	ԵՐԵՎԵՐ
	ԼԱՐԵՎԵՐ	



ԱՅԻՆ:

Վլմարդ՝ լոյսն ահագին վասաց և շառաւիղն աննուաղ՝ ծագեսցի ՚ի վրքո ողակարեգակն ՚ի վերայ արարածոց . և դու ՚ի բանս քո ուրախանաս + Ա. Յ. Եթէ ուխտեալես՝ կատարեած . և առ լցուսցէ զինդրուածս քո . ապա Եթէ երաղ տեսեալ և զարհուրեալես, մի՛ Երկնչեր, զի երազն քո ՚ի բարին եղե :

ՃԱՆ:

Վլմարդ՝ լուսաւորի խորհուրդ սըրտիդ . յամժամանաւումես, մի՛ Երկըն չեր՝ զի չարն հեռացաւ ՚ի քէն և բարին մօտեցաւ . և զոր ինչ խորհեալես՝ շուտով կատարէ քեզ ած, և զիւը ողորմութիւնն տոյ քեզ :

ԵՐԻԱՆԿՐԻ:

Վլմարդ՝ զոր ինչ խորհեալես՝ կատարի աստուծով . զի շատ բարութի կայ յայդ խորհուրդդ . զի դու բարի ես՝ և չարն ոչ մերձենայ քեզ . առ ժամա տրտումես և ՚ի ցնորի կաս, մի՛ ցնորիր՝ զի շատ բարութի կայ տուաջի քո :

ԽԵՂԴԵՔԻՆՆ :

ՎՎ մարդ՝ զոր ինչ խորհեալ ես՝ ի սրտի
քում փախիր ՚ի նմանէ , որ չկատախիս .
պատրաստ կաց ՚ի չար կամաց և աղաջեա
այ , և ած տռաջնորդէ քեզ ՚ի բարին :

Ա ՀԵՒՃՆ :

ՎՎ մարդ՝ տայ քեզ ած զիւր ողորմու-
թիւնն . ցանկութի սրտի քո կատարի .
և ՚ի մօտ աւուրս՝ ձայն աւետեաց լսես և
ուրախանաս . բայց ՚ի կուռոց պատրաստ
կաց . և զոր խնդրես՝ տեսանես կամօքն այ :

Ա ԼԻՋՈՆ :

ՎՎ մարդ՝ զլոյմն անսպառ Ֆագեսցէ
ած ՚ի վը քո . և ողորմութքն իւր յա-
ջողեսցէ քեզ զոր դու կամիս . այլ մի'
երկնչիր յերազեց քոց զոր տեսեր . զի
թէպէտ պատերազմն ահագին է , բայց
նշան բարուց է . բարութի գալոց է քեզ
ուստի տին ոչ ունիս . և զինչ խոր-
հեալ ես՝ կատարի . թէ հիւանդ ունիս
ողջանայ . և պատուհամն ՚ի քեն հեռա-
նայ կամաւն այ . աւուրբն որ ՚ի վը քո
գալոց են՝ լաւ են քան զաւաջինսն :

Ա ՀԵՒՃՆ :

ՎՎ մարդ՝ զոր ինչ խորհեցար՝ մի' երկըն
չիր զի այնպէս ուրախանաս՝ ոնց պիտոց
է քեզ . բայց զմորհուրդդ ամ մարդց
196

մի'

մի' յայտներ, զի քո վիճակն ՚ի կշխոնէ .
և ամ բան քեզ յաջողէ . ՚ի յիշոցաց
պատրաստ կաց , և յամ ժամ աղօթք
արա . զի ամ չարիք ՚ի քէն հեռանան . և
՚ի հոդոց ազատիս . թէ ՚ի ճանապարհ եր-
թաս՝ բարով գաս . և թէ վաճառ ունիս՝
բարով շահիս :

Լարիձն :

Վլ մարդ՝ պատրաստ կաց և յայդ խոր-
հըրդոյդ հեռացիր՝ որ պահէ զքեզ անձ,
թէ չէ յետոյ ապաշտես . և թէ համբե-
րես սակաւիկ մի՝ անձ բանայ քեզ դուռն
մի բարի , և զինչ որ կամք ունիս կատարի :

Վաշնասովն :

Վլ մարդ՝ ժամանակս ըլլորդեցաւ քեզ .
և քո սրտին խորհուրդն ՚ի բարին կա-
տարեցաւ . արա զինչ որ կամիս և խնդաս
՚ի բանաքո . և տայ քեզ անձ զինդրուածո
քո . և ուստի ակն ոչ ունիս՝ ուրա-
խանաս . թէ տուն շինես՝ յաջողէ քեզ
անձ . և ՚ի նեղութէ ազատիս . թէ հեռա-
ւոր ունիս՝ տեսանես . բայց ՚ի լեզուեդ
պատրաստ կաց :

Վաճեզջերն :

Վլ մարդ՝ յիշեա զանձ ՚ի բանաքո և նատ
հանէ զքեզ ՚ի տրտմուե , զի տրտմուե

Հասանէ քեղ՝ ի սիրելեաց քոց . ասես թէ
Երբ Ճարը լինի ինձ կամ յաջողութի . և
հեռանդութի երևի քեղ, բայց շուտով
ողջանաս . թէ հեռաւոր ունիս գայ . և
կատարի խնդիրք ՚ի բարին :

Հ բհոնն :

Ով մարդ՝ բարութի շատ ունէիր և
զրկեցար . և չար դիպեցաւ քեղ . կուիւ
սիրելեացդ՝ հետ քեղ եղեւ . և նման նա-
ւու ՚ի վը ծովուն երերման կաս . և կա-
միս քո կենացդ հանգիստ դտանել և ոչ
կարես Ճար գտանել . ով մարդ մի տրտմիր՝
զի տրտմութի քո յուրախութի փոխի . և
զոր խորհիս՝ կատարի կտմաւն այ :

Հ ասինն :

Ով մարդ՝ հեռաւոր տեմնուս , կամ
ձայն աւետեաց լսես և խնդաս . զի
դիմարն քո անցաւ և բարին մօտեցաւ ,
այլ թէ խոստումն ունիս կատարեա . և
՚ի յիշոցաց պատրաստ կաց . և որպ կա-
պեալքն արձակին՝ և փակեալ դուռն
բացուի , այնոքէս բանալոց է քեղ ած-
զութեան ողորմութէ :

Հ բարին :

Ով մարդ՝ նման ես գու հովուին որ
փախեաւ ՚ի ցրտոցն և եմուտ ՚ի յայըն ,

և ոչխարաց հոգս ոչ տարաւ . բայց Եկն
գայլն և արար զնս գէշ . նոյնպէս և դու
՚ի բարւոյն հեռանաս և երթաս զհետ չար
խորհրդոյն . բայց պատրաստ կաց ՚ի նեն-
գտւոր մարդոյ , և ՚ի չար խորհրդոյդ հե-
ռացիր . և բարի եղիցի քեզ :

Արեգակնա:

Վալմարդ՝ ողակ արեգակն որ լուսաւորէ
զարարածս , այնպէս լուսաւորի խոր-
հուրդ քո . զոր կամիս՝ կատարելոց է քեզ
ած ՚ի բարին . բայց ՚ի չար մարդոյ պատ-
րաստ կաց . զի սրտիւն խորհի զնենգուի
քեզ , և լեզուովն քաղցը խօսի ընդ քեզ .
բայց դու ՚ի վը բանի միոյ հոգս ունիս՝
և զհետ մտաց քոց քննութիւն առնես , մի՛
երկնչեր՝ շուտով լուսաւորի խորհուրդ
սրտի քո :

Առաջեպնա:

Վալմարդ՝ զհետ չար մարդոյ մի՛ շրջեր .
առաջ թէ ոչ լսես՝ միսաս կրես ՚ի նմանէ .
և ՚ի քո լեզուեդ պատրաստ կաց . և յամ
մարդոյ քաղցը խօսից մի՛ խաբեր , զի կա-
մին կորուսանել զքեզ . սակաւ մի համ-
բերեա , թէ չէ յետոյ ապաշաւես . շատ
բարութիւն կոյ առաջի քո . կորուսան
զտանի . և զոր ինչ առնես՝ յաջողէ
քեզ ած :

Փաշլածուն :

Ավագ մարդ՝ ՚ի հեռաւոր տեղեաց ձայն
աւետեաց լսես և խնդիր քո կատարի . և
ուխտն զոր ուխտեալ ես ո՛յ՝ կատարեա՛,
զի չարն հեռանայ ՚ի քէն և բարին մօտե-
նայ քեզ . զինչ բան ունիս՝ արա՛ հա-
մարձակ . զի ըստ կամաց քոց լինի և ու-
բախանաս աստուծով:

Լ ս-սինն :

Ավագ մարդ՝ ցօղ ողորմութեն այ անպա-
կաս լեցի ՚ի քէն . և որ ած հաստա-
տեսցէ զսիրտ քո . զոր ինչ խորհեալ ես՝
արա՛ և մի՛ երկնչիր , զի շատ բարութի՝
կայ առաջի քո . և ՚ի հեռաւոր տեղեաց
ձայն աւետեաց լսես ՚ի մօտ աւուրս և
ուրախանաս . և զոր ինչ սրտիւ քո խընդ-
րես՝ տչօքդ աեսանես և խնդաս :

Լ շ ե-ալին :

Ավագ մարդ՝ լինդէ՞ր անիրաւի ջանաս և ՚ի
զուր աշխատիս . զի դժուարին է բանդ
և անհաստատ գործդ . զի խորհուրդդ
ոյդ որ ՚ի սրտիդ է՝ ոչ է պատշաճ ժամա-
նակիս . փոխանակ բարւոյ՝ չար հանդիպի
քեզ . և թէ չլսես խրատու՝ վնասիս .
այլ ժամանակ մի համբերեա՛ . և զշոյսդ
առ ած կալ հաստատուն և մի՛ երկնչիր .
զի թշնամին քո գլորի՝ և դու կանդնիս

կամաւն այ . խնդաս միշտ ՚ի բարեկամաց
և ՚ի սիրելեաց քոց , և լինիս յաղթօղ ՚ի
վերայ թշնամոցն քո :

|| ս-սնթագն :

Վ մարդ՝ շատ բարութի գոլոց է քեզ
՚ի տնէ , և դու ուրախանաս . բայց
այժմ ՚ի մէջ աշտմութե կաս , և ող նաւ
՚ի վը ծովու ծփիս ՚ի յալեաց՝ մի' երկըն-
չեր , զի շուտով ազատիս ՚ի նեղութեդ :

Ե լ խոստումն զոր ունիս՝ գնա կատա-
րեա . և ՚ի յիշոցաց պատրաստ կաց , և ՚ի
ժամաղօթից մատու զաղացանս առ ած որ
փրկեսցէ զքեզ միշտ ՚ի փորձանաց :




ՑԱՆԿ

Գլուխութիւն բանից պարունակելոց իւ ամա:	
Պատմութիւն վն պղնձէ քաղաքին	3 :
Պատմութիւն վն փահլութագաւորին	49 :
Խրատք նուշը վան թագաւորին	62 :
Խրատք խիկարայ իմաստնոյ	72 :
Պատմութիւն աղջկան և մանկան	105 :
Հարցմունք աղջկան և մանկան	112 :
Ա արք և պատմութիւն ալեքսիանոսի	135 :
Պատմութիւն յուսկան , և որդւոյն նորին ստեփաննոսի	149 :
Օքոսանք տղայոց	177 և
	195 :







and eggs

all

the

